Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

6985

91(∞)
9-34

# ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

## ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՎԵՐՋԻՆ ՓՈՓՈԽՄԱՆՑ ՀԱՄԵՄԱՏ

ԳՐԵՑ

Ա. Մ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՅՈՎՍԵՓԱՅ ԳԱՎԱՖԵԱՆ

— 1880 —

9(00)
Գ-34

# ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

## ՔԱՂԱՔԱԿԱՆ

## ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

### ԴԱՍ Ա.

ՀԱՐՑՈՒՄ. Քաղաքական աշխարհագրութիւնն ի՞նչ կը սորվեցնէ :

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքական աշխարհագրութիւնը կը սորվեցնէ այլեւայլ բաժանումներն զորս մարդիկ ըրած են երկրիս երեսը բաղկացընող ծովուն և ցամաքին վրայ. ինչպէս նաև այն բաժանումներուն տրուած անունները, մարդոց թիւը, ցեղերը, կրօնքներն, անոնց բնակութեան տեղերը, կառավարութիւնները, և ուրիշ ասոնց նման բաներ :

Հ. Երկրիս երեսը քանի՞ կը բաժնուի :

Պ. Երկրիս երեսը կը բաժնուի երկու. հաստատուն մաս կամ ցամաք, և լոյծ մաս կամ ջուր :

Երկրիս երեսին երեք քառորդը (3/4)՝ ջուր, մէկ քառորդը (1/4) միայն ցամաք է, և ցամաքին գրեթէ երեք քառորդն Հիւսիսային կիսագունտին վրայ է, Հարաւային կիսագունտը մեծաւ մասամբ ջրով ծածկուած է :

Հ. Հիւսիս և հարաւ բառերով ի՞նչ կը հասկցուի :

ՀՍՍՀ-Арм ССР
А. Мясникяна
2004
գ-38900-67
57610-Ա.Հ.

Պ. Հիւսիս և Հարաւ երկրիս կողմերուն անուններն են ։ Երկրիս վրայ չորս կողմ կը մտածուի, որ են.

1. Արեւելք՝ որ երկրիս այն կողմն է ուր առաւօտուն արեգակը կ՚ելլէ ։

2. Արեւմուտք՝ անոր հակառակ կողմն է ուր արեգակն երեկոյին կը մտնէ ։

3. Հիւսիս՝ որ երեսը դէպ արեւելք դարձընողին ձախ կողմը կ՚իյնայ. և

4. Հարաւ՝ որ հիւսիսին հակառակ կողմն է, և երեսը դէպ արեւելք դարձնողին աջ կողմը կ՚իյնայ ։

Հիւսիսային Արեւելք կամ Արեւելեան Հիւսիս կ՚ըսուի հարաւին և արեւելքին մէջտեղը. Հարաւային Արեւելք կամ Արեւելեան Հարաւ՝ հարաւին և արեւելքին մէջտեղը ։ Ասոնց հակառակ կողմերը կը կոչուին Հիւսիսային Արեւմուտք կամ Արեւմտեան Հիւսիս, և Հարաւային Արեւմուտք կամ Արեւմտեան Հարաւ ։

Աշխարհացոյցներու վրայ թուղթին վերի դին միշտ հիւսիս է, վարի դին՝ հարաւ. աշխարհացոյցն այսպէս բռնողին աջ կողմն արեւելք է, ձախ կողմն՝ արեւմուտք ։

Հ. Աշխարհացոյցն ինչ է ։

Պ. Աշխարհացոյց կ՚ըսուին այն թուղթերը որոց վրայ այլեւայլ գիծերով, նշաններով և գոյներով կը նշանակուին երկրիս երեսին վրայ ցամաքին և ջուրին մասերը, ցամաքին վրայ այլեւայլ տէրութեանց տեղերը, լեռներ, գետեր, քաղաքներ իրենց անուններով ։



Հ. Քանի տեսակ աշխարհացոյց կայ ։

Պ. Աշխարհացոյցն երկու տեսակ է, Հարթագունտ և Մասնագունտ ։ Հարթագունտն երկրիս ամբողջ երեսն երկու բոլորակներու մէջ գծուած կը ցուցնէ. Մասնագունտը երկրիս երեսին մէկ մասը միայն կը ցուցնէ, զոր օրինակ՝ Եւրոպա կամ Ասիա. և կամ թագաւորութիւն մը կամ անոր մէկ մասը միայն, ինչպէս Թուրքիա կամ Հայաստան ։

Երբ բոլոր երկիր կամ անոր մէկ բաժինը մաս մաս քանի մը աշխարհացոյցներու վրայ նշանակուած է, այն աշխարհացոյցներն մէկտեղ Ատլաս կը կոչուին ։

## ԴԱՍ Բ.

Հ. Ըսիր թէ երկրիս երեսը երկու կը բաժնուի, հաստատուն մաս կամ ցամաք, և լոյծ մաս կամ ջուր ։ Կրնաս ըսել թէ հաստատուն մասը կամ ցամաքը քանի կը բաժնուի, և այն բաժանումներն ինչպէս կը կոչուին ։

Պ. Երկրիս երեսին վրայ ցամաքը կը բաժնուի հինգ, որ երկրիս մասերը կը կոչուին, և են՝ Եւրոպա, Ասիա, Ափրիկէ, Ամերիկա և Ովկիանիա ։

Առաջին երեքը, Եւրոպա, Ասիա, Ափրիկէ, կը կոչուին հին ցամաք կամ հին աշխարհ, քանզի այս մասերն ՚ի վաղուց ծանօթ էին ։ Չորրորդ-

մասն, Ամերիկա, կը կոչուի Նոր ցամաք կամ Նոր աշխարհ, քանզի երկրիս այս մասն 'ի վաղուց ծանօթ չէր. 1492ին Քրիստափոր Կոլոմբոս անուանի ճենովացին գտաւ անոր մէկ մասը, և ապա հետզհետէ բոլոր այն ցամաքը գտնուելով նորագայի ճանապարհներով ծանկեցաւ:

Հինգերորդ մասն որ է Ովկիանիա, կը պարունակէ մեծ կղզի մը որ Աւստրալիա կամ Նոր Հոլանտա կը կոչուի, և անկէ սակաւ ինչ հեռուն՝ ուրիշ փոքրագոյն կղզիներ: Երկրիս այս մասն 1600էն ետքը, սկսաւ ճանչցուիլ:

Հ. Երկրիս երեսին վրայ լայծ մասը կամ ջուրը քանի՞ կը բաժնուի, և այն բաժանումներն ինչ կը կոչուին:

Պ. Երկրիս երեսին վրայ ջուրը կը բաժնուի հինգ մաս, որ ընդհանուր անուամբ Ովկիանոս կը կոչուին, և են՝

1. Հիւսիսային և Հարաւային սառուցեալ Ովկիանոս.

2. Ատլանտեան Ովկիանոս.

3. Մեծ կամ Խաղաղական Ովկիանոս, և

4. Հնդկային Ովկիանոս:

Հ. Ովկիանոսներէն զատ՝ երկրիս երեսին վրայ գտնուած ջուրերն ինչպէս կը կոչուին:

Պ. Ովկիանոսներէն զատ՝ երկրիս երեսին վրայ գտնուած ջուրերը կը կոչուին, 1. Ծով, 2. Լիճ, 3. Գետ, 4 Ծոց, 5 Նեղուց, 6. Միջերկրական ծով և 7. Արշիպեղագոս:

1. Ծով կ'ըսուին այն աղի ջուրերն որ քան



զՈվկիանոս փոքր են: Գլխաւոր ծով կը կոչուի ծով մը որ Ովկիանոսէ մը կը կազմուի. Երկրորդական ծով կ'ըսուի այն ծովը որ գլխաւոր ծովէ մը կը կազմուի:

2. Լիճ կ'ըսուին այն մշտակայ անոյշ ջուրերն որ ամէն կողմէ ցամաքով պատած են, և որոց ջուրը վազուն չէ: Մեծամեծ լիճերը ծովակ կը կոչուին. Մօր կամ ճահիճ կը կոչուին միշտ ջրոտ տեղեր ուր շամբ (եղէգ) կամ ջրային տունկեր բուսած են:

3. Գետ կ'ըսուին այն անոյշ և վազուն ջուրերն որ ընդհանրապէս լերան մը ստորոտէն բխելով, և շատ անգամ իրենց մէջ ուրիշ վազուն ջուրեր առնլով կ'երթան ծով մը կը թափին. իսկ այն վազուն ջուրերն որ գետի մը մէջ կը թափին՝ Գետակ կ'ըսուին: Այն տեղն ուր գետ մը ծովը կը թափի՝ գետին բերան կը կոչուի. իսկ գետի մը և գետակի մը իրարու խառնուած տեղը կը կոչուի Խառնուրդ գետոյ:

Գետերուն և գետակներուն երկու դին ցամաքը կը կոչուի Ափն: Գետի կամ գետակի մը այն դին որ ջուրին հոսանաց հետ իջնողին աջ կողմը կ'իյնայ՝ Աջակողմեան ափն կ'ըսուի. անոր դիմացի կողմը՝ Ձախակողմեան ափն:

4. Ծոց կամ ծովածոց կ'ըսուի ծովի մը այն մասը որ ներս դէպ 'ի ցամաք մտած է: Եթէ ծովածոցը փոքր է, Խորշ կը կոչուի:

5. Նեղուց կը կոչուի նեղ ծով մը որմէ ծո-

մէջ ծով կ՚անցնուի ։ Լայն նեղուց մը Զունդ կ՚ըսուի ։

6. Մէջերկրական ծով կամ Մէջերկրական կ՚ըսուի ծով մը որ ամէն կողմանէ ցամաքով պատած ըլլալով, նեղ պարանոցով մը միայն դուրսի ծովի մը հետ հաղորդութիւն ունի ։

7. Արշիպեղագոս կը կոչուի ծով մը ուր իրարու մօտ շատ կղզիներ կամ կղզիներու խումբեր կան ։

## ԴԱՍ Գ.

Հ. Ցամաքի մը մասերն իրենց այլեւայլ ձեւերն կամ որպիսութեան նայելով ինչպէս կը կոչուին ։

Պ. Ցամաքի մը մասերն իրենց այլեւայլ ձեւերն կամ որպիսութեան նայելով կը կոչուին 1. Թերակղզի, 2. Լեզու, 3. Ծովափն, 4. Լեռ, 5. Դաշտագետին, 6. Ձոր, 7. Կղզի, 8. Ծանծաղ և 9. Խարակ ։

1. Թերակղզին չորս դին ջրով պատած, և միայն մէկ ծայրով ցամաքին հետ կցուած երկիր է ։ Թերակղզին ցամաքին հետ կցող մասին Պարանոց կ՚ըսուի ։ Եթէ պարանոցը շատ լայն է, Թերակղզին Ցամաքակղզի կը կոչուի ։

2. Լեզու կ՚ըսուի նեղ ցամաք մը որ դէպ 'ի ծով երկնցած է ։ Եթէ այսպէս դէպ 'ի ծով



երկնցած ցամաք մը շատ բարձր է, Գլուխ կամ Հրուանդան կը կոչուի ։

3. Ծովափն կ՚ըսուի ցամաքին այն մասը որ ծովին կից է ։

4. Լեռ կ՚ըսուի հողոյ կամ ապառաժի ահագին զանգուած մը որ ցամաքին վրայ կը բարձրանայ դէպ 'ի վեր՝ երթալով ամփոփուելով, այնպէս որ կողերն աւելի կամ նուազ զառ 'ի վեր կը ձեւանան ։ Իրարու կից լեռներու շարքին Շղթայ կամ գօտի լերանց (լեռնագօտի) անունը կը տրուի ։ Լեռան մը կոնաձեւ կամ սուր ծայրին Կատար կամ Գագաթն կ՚ըսուի ։ Լեռնադաշտ կ՚ըսուի լեռան մը գլուխը որ հարթ է ։ Մանր լերանց Բլուր կ՚ըսուի ։ Կող կ՚ըսուին լեռներու գօտւոյ մը երկու հակառակ զառիվայրերն ։ Ծովի կամ գետի մը Աւազան կամ Հովիտ կ՚ըսուի ընդարձակ երկիր մը որոյ ջուրերը կը թափին այն ծովը կամ գետը ։

Հրաբուխ կը կոչուի լեռ մը որ ատեն ատեն բանալով Հրաբերան կամ Խառնարան կոչուած ծակէ մը դուրս կ՚արձակէ բոց, մոխիր և Լաւա կոչուած նիւթը, երբեմն նաեւ ջուր և ցեխ ։

5. Դաշտագետին կը կոչուի երկիր մը որ ընդարձակ և տափարակ է ։ Եթէ տափարակն աւազուտ է, Աւազուտ անապատ կ՚ըսուի ։ Աւազուտ անապատներու մէջ դալարագեղ և ջրարբի տեղերուն Ովասիս կ՚ըսուի ։

6. Ձոր կ՚ըսուի դաշտ մը որ երկու լերանց

միջատեղն է ։ Եթէ ձոր մը շատ նեղ , մթին և խոնաւ է , **Ծործ** կ՚ըսուի ։

7. **Կղզին** փոքր ցամաք է՝ ամէն կողմանէ ջրով պատած ։ Իրարու մօտ մանր մանր կղզիներու՝ **Խումբ կղզեաց** (կղզեխումբ) կ՚ըսուի ։

8. **Ծանծաղ** կամ **ծանծաղուտ** կ՚ըսուին ծովուն մէջ սակաւաջուր տեղեր ուր նաւ չի կրնար անցնիլ առանց խրելու ։

9. **Խութ** կ՚ըսուի ծովուն մէջ ջուրին երեսին մօտ կամ երեսէն վեր բարձրացած քար մը ։ Եթէ այսպիսի քարեր իրարու մօտ կամ քովէ քով շատ են , **Խութեր** կը կոչուին ։

---

## ԴԱՍ Դ.

Հ. Երկրիս բոլոր բնակչաց թիւը ո՞րչափ է ։

Պ. Երկրիս բոլոր բնակչաց թիւն է ըստ նորագոյն հաշուոց իբր 1,300,000,000 ։

| | | |
|---|---|---|
| Եւրոպա ունի | 300,000,000 | բնակիչ |
| Ասիա » | 730,000,000 | » |
| Ափրիկէ » | 120,000,000 | » |
| Ամերիկա » | 120,000,000 | » |
| Ովկիանիա » | 30,000,000 | » |

Հ. Մարդկային ազգը քանի՞ ցեղ կը բաժնուի ։

Պ. Կերպարանաց , գունոյ և գանկի ձեւին նայելով բոլոր մարդկային ազգը կը բաժնուի հինգ գլխաւոր ցեղ ։



1. **Կովկասեան** կամ **Հնդեւրոպական** ցեղ ։ Այս ցեղն սպիտակ է գունով , վայելչահասակ , գեղեցկադէմ , երեսին անկիւնը գրեթէ ուղիղ ։ Այս ցեղն դէպ 'ի հիւսիս խարտեաշ է , դէպ 'ի հարաւ՝ թխագոյն ։ Կովկասեան ցեղին կը վերաբերին արեւմտեան Ասիոյ և գրեթէ բոլոր Եւրոպայի բնակիչք և նոցա գաղթականք ։ Այս ցեղն հիմա իբր 500 միլիոն է ։

2. **Մոնկոլեան** ցեղ ։ Այս ցեղը դեղնագոյն է , տափաքիթ , մեծականջ , թանձրայտ , շեղակն ։ Այս ցեղին կը վերաբերին հիւսիսային և արեւմտեան Ասիոյ բնակիչներն , ինչպէս Սիպերացիք , Թաթարք , Չինացիք , Ճապոնք ։ Մոնկոլեան ցեղն գրեթէ 500 միլիոն է ։

3. **Ամերիկեան** ցեղ ։ Այս ցեղը պղնձագոյն է , արծռունգն , խորակն , կունտ 'ի յետուստ ։ Այս ցեղը տակաւ սպառելու վրայ է . 13 միլիոն միայն կը կարծուի ։

4. **Մալայեան** ցեղ ։ Այս ցեղը դիմօք նման է Եւրոպականին բայց թխագոյն է ։ Այս ցեղին կը վերաբերին խաղաղական Ովկիանոսի կղզեաց բնակիչներն , բաց 'ի Բաբուաններէն , այսինքն Աւստրալիոյ բնակիչներէն , որ սեաւ են բայց Եթովպական ցեղին չեն վերաբերիր ։ Այս ցեղն իբր 30 միլիոն կը հաշուուի ։

5. **Եթովպական** ցեղ ։ Այս ցեղը սեւամորթ է , սարանման գանգրահեր , լայնաշուրթն , տափաքիթ ։ Ափրիկէի Սեւերն այս ցեղին կը վերաբերին , և իբր 100 միլիոն կը կարծուին ։

Հ. Այս այլեւայլ ցեղ մարդոց մէջ ինչ և որչափ լեզու կը խօսուի ։

Պ. Այս այլեւայլ ցեղ մարդոց մէջ հազարաւոր լեզուներ կը խօսուին որ իրարմէ բոլորովին տարբեր կ'երեւան , բայց և այնպէս ասոնց մեծ մասն երեք գլխաւոր տեսակի կը վերաբերին ։

1. Միավանկ լեզուներ ։ Այս լեզուներուն բառերը միավանկ են և առանց հոլովման և խոնարհման ։ Այս տեսակին կը վերաբերի Չինաց լեզուն ։

2. Շարայար լեզուներ ։ Սոքա եւս հոլով և խոնարհում չունենալով , այս քերականական ձեւերը կը հասկցնեն ընդհանրապէս բառին վերջը , երբեմն ալ մէջն ուրիշ բառեր կցելով ։ Այս տեսակին կը վերաբերին Ֆիննեան լեզուներն , ինչպէս Ունկարերէնը , նաեւ Ամերիկեան ցեղերուն լեզուները ։

3. Քերականական լեզուներ ։ Ասոնք հոլովման և խոնարհման ձեւեր ունին ։ Քերականական լեզուներն երկու ցեղ են՝ Հնդեւրոպական և Սեմական ։ Հնդեւրոպականին կը վերաբերին Յունարէնը , Լատիներէնը , Հայերէնը , Գերմաներէնը , Կելտեան , Սլաւեան , Իրանեան և Սանսքրիտ (Հնդիկ) լեզուները ։ Սեմականին կը վերաբերին հին Եբրայեցերէնը , Քաղդէարէնը , Ասորերէնը և Արաբերէնը ։ Քերականական լեզուներն , մանաւանդ Հնդեւրոպական լեզուք , ընտրելագոյն և ազնուագոյն են ։



Լեզուները կը բաժնուին դարձեալ Մեռեալ, այսինքն որ չեն խօսուիր , և Կենդանի , այսինքն՝ անոնք որ կը խօսուին ։ Դարձեալ իւրաքանչիւր լեզու աւելի կամ նուազ բարբառներ ունի ։

---

## ԴԱՍ Ե.

Հ. Աշխարհիս վրայ քանի՞ տեսակ կրօնք կայ ։

Պ. Աշխարհիս վրայ շատ կրօնքներ կան , բայց ամէնքն ալ սա երկու տեսակին կը վերածուին . Միաստուածեան և Բազմաստուածեան ։

Միաստուածեան են .

1. Քրիստոնեայք , 337 միլիոն , որ երեք գլխաւոր ճիւղ կը բաժնուին , Արեւմտեան եկեղեցի (Կաթոլիկ) , Արեւելեան եկեղեցի (Յոյնք և Հայք) և Բողոքական եկեղեցի ։

2. Հրեայք , 7 միլիոն . 3 1/2 միլիոնը Եւրոպա . կը բաժնուին քանի մը աղանդներու , Գարայիմք , Թալմուտեանք և Ռաբբանեանք ։

3. Մահմետականք , 156 միլիոն ։ Ասոնք Սիւննի , Շիի և Վահաբի կոչուած աղանդներու կը բաժնուին ։

Բազմաստուածեան են .

1. Բրահմինեանք , Հնդկաստանի մէջ ։

2. Բուդդայեանք , Սէյլան կղզին , Քօչինչինի , Ճաբոնի և Չինու մէջ ։

3. Դիւապաշտք կամ Ֆէթիշականք, փորթուկեզերէն ֆէթիսօ բառէն որ դիւթութիւն կը նշանակէ: Ասոնց մեծ մասն Ափրիկէի մէջ է,

Բազմաստուածեան կրօնք դաւանողներուն թիւը 800 միլիոնի կը հասնի,

Հ. Մարդիկ իրենց ապրելու կերպին նայելով քանի՞ տեսակ են:

Պ. Մարդիկ իրենց ապրելու կերպին նայելով երեք կարգ կը բաժնուին:

1. Վայրենի ազգեր որ որսորդութեամբ կամ ձկնորսութեամբ կ'ապրին. ասոնք մեծաւ մասամբ անտառներու, այրերու կամ հիւղերու մէջ կը բնակին:

2. Հովիւ կամ Թափառական ազգեր, ասոնք իրենց հօտերուն արդիւնքէն կ'ապրին, և անոնց հետ արօտի համար տեղէ տեղ պտտելով վրաններու տակ կը բնակին, ուստի և Վրանաբնակ ալ կ'ըսուին:

Այս երկու կարգ մարդիկ, մանաւանդ առջինները, կառավարութիւն, օրէնք, ուսում և դպրութիւն, արուեստ և վաճառականութիւն չունին. քանի մը շատ հասարակ արուեստներ զոր ոմանք ունին, ինչպէս ստայնանկութիւն, դարբնութիւն, շատ անկատար են:

3. Քաղաքակիրթ ազգեր: Ասոնք, բաց 'ի հողագործութենէ որ հաստատուն բնակութիւն ունենալու առաջին պայմանն է՝ ունին նաև այգեգործութիւն, վաճառականութիւն, նա-



ւարկութիւն, այլև այլ ձեռագործական կամ մեքենական արուեստներ, գիր կամ դպրութիւն, գիտութիւններ, գեղարուեստներ, բազմագիտութիւն, օրէնք և կառավարութիւն:

## ԴԱՍ Զ.

Հ. Քաղաքակիրթ ազգաց մէջ քանի՞ տեսակ կառավարութիւն կայ:

Պ. Քաղաքակիրթ ազգաց մէջ երկու տեսակ կառավարութիւն կայ. Միապետական և Բազմապետական:

1. Միապետական կառավարութեան մէջ իշխողը մի է, ցկեանս, շատ անգամ նաև ժառանգական, և կը կոչուի Կայսր, Թագաւոր, Իշխան, Դուքս:

Միապետութիւնը երկու կը բաժնուի, Ա. Բացարձակ միապետութիւն, ուր ամէն օրէնք իշխողին կամքէն կը բխէ. Բ. Չափաւորեալ կամ Սահմանադրական միապետութիւն ուր ժողովուրդին կողմէն ընտրեալ Երեսփոխանական ժողով մը օրէնսդիր իշխանութեան մասնակից է, և գործադիր իշխանութեան կամ վարչութեան վրայ կը հսկէ.

2. Բազմապետական իշխանութիւնն ևս երկու կը բաժնուի, Ա. Հանրապետութիւն ուր գերագոյն իշխանութիւնը կամ Ժողովրդապետութիւնը բոլոր

ժողովուրդին ձեռքն է, և Բ. Ազնուապետութիւն, ուր քանի մը երևելի ընտանիք միայն կը վարեն վեհապետութիւնը։

Բազմապետական կառավարութեանց մէջ իշխող չկայ, գործադիր իշխանութիւնը վարելու համար Նախագահ մը միայն կ՚ընտրուի քանի մը տարին անգամ մը ժողովրդեան քուէով։

Հ. Քաղաքակիրթ ազգաց բնակութեան տեղերն ի՞նչ կը կոչուին, և ի՞նչ շէնքեր և հաստատութիւններ կան անոնց մէջ։

Պ. Քաղաքակիրթ ազգաց բնակութեան տեղերը կը կոչուին Քաղաք կամ Քաղաքագիւղ՝ եթէ քաղաքը պարսպաւոր է, Աւան և Գիւղ։ Ասոնց մէջ, բաց ՚ի հասարակ տուներէ յորս ընտանիք կը բնակին, կան այլևայլ հասարակաց շէնքեր, զորօրինակ՝ իշխանին պալատը, կառավարութեան գործերուն համար Պաշտօնարաններ, Զօրանոց, Նաւարան, Զինարան, Եկեղեցիներ, այլևայլ տեսակ Դարմանոցներ, Հասարակաց Դպրոցներ, Վարժարաններ, Համալսարան, Տպարաններ, Գրատուններ, Թանգարաններ, այլևայլ տեսակ Գործարաններ, Հրապարակներ, Հասարակաց պարտէզներ, Վաճառանոցներ, Դրամատուն (պանգա), Նաւահանգիստ և ուրիշ այսպիսի հաստատութիւններ։

---



# ԵՒՐՈՊԱ

## ԴԱՍ Է.

Հ. Եւրոպա ո՞ր կիսագունտին վրայ է, ո՞րո՞նք են նորա սահմաններն և բնակչաց թիւը

Պ. Եւրոպա հին ցամաքը պարունակող կ՚իսագունտին հիւսիսային արևմտեան կողն է։ Սահմաններն են. հիւսիսէն՝ Սառուցեալ Ովկիանոս, արևմուտքէն՝ Ատլանդեան Ովկիանոս, հարաւէն՝ Միջերկրական և Սեաւ ծովերն որ Ատլանդեան Ովկիանոսին մասերն են, իսկ արևելքէն՝ Ուրալ և Կովկաս լեռներն որովք Եւրոպա կը բաժնուի Ասիոյ ցամաքէն։ Բնակչաց թիւն է 300 միլիոն։

Հ. Եւրոպայի այժմու տիրող ազգերն ի՞նչ տոհմերու կը վերաբերին։

Պ. Եւրոպայի այժմու տիրող ազգերն կը վերաբերին Րոմանեան, Գերմանական և Սլաւեան տոհմերուն։ Րոմանեան ազգերն են իբր 97 միլիոն, կը բնակին Եւրոպայի Հարաւային արևմտեան և Արևմտեան կողմերը, և են Գաղղիացիք, Սպանիացիք և Իտալացիք. սոցա կրօնքն ընդհանրապէս Հռոմէական է։

Գերմանական ազգերն են իբր 92 միլիոն, կը բնակին Հիւսիսային և Միջին Եւրոպա, և են՝ Անգղիացիք, Շուետք, Դանիացիք և Գերմանացիք. սոցա կրօնքն ընդհանրապէս Բողոքական է։

Библиотека
ՀՍՍՌ–Арм ССР
им. А. Мясникяна

Սլաւեան ազգերն են իբր 81 միլիոն, և կը բաժնուին շատ ճիւղերու, ինչպէս Ռուսք, Լեհք, Պոհեմիացիք, Խրուաթք, բայց գլխաւոր տիրող սլաւ ազգ Ռուսն է ։ Սոքա Եւրոպայի արեւելեան կողմն են և ընդհանրապէս ունադաւան են ։

Հ. Եւրոպայի գլխաւոր ծովերն որո՞նք են ։

Պ. Եւրոպայի գլխաւոր ծովերն են, 1. Սպիտակ ծով որ հիւսիսային սառուցեալ ովկիանոսէն կը կազմուի, 2. Պալթիք ծով, 3. Հիւսիսային կամ Գերմանական ծով, 4. Իրլանտայի ծով, 5. Պիսքայեան կամ Կասքոնեան ծով, որ և ծովածոց կ'ըսուի, և 6. Միջերկրական ծով ։

Վերջին հինգ ծովերն կը կազմուին Ատլանտեան ովկիանոսէն ։

Միջերկրական ծովէն կը կազմուին հետեւեալ երկրորդական ծովեր. ա. Տիւռէնեան ծով Իտալիոյ արեւմտեան դին, բ. Ադրիական ծով Իտալիոյ արեւելեան դին, գ. Յոնիական ծով Իտալիոյ և Յունաստանի մէջտեղ, դ. Եգէական ծով որ և Յունական Արշիպեղագոս կ'ըսուի, ե. Պրոպոնտիս կամ Մարմարայի ծով և զ. Սեւ ծով հանդերձ Ազովեան ծովով ։

---



## ԴԱՍ Ը.

Հ. Եւրոպայի գլխաւոր ծովածոցերն որո՞նք են ։

Պ. Եւրոպայի գլխաւոր ծովածոցերն են,

1. Պոթնիոյ, Ֆինլանտի, Լիւոնիոյ և Տանցիկոյ ծոցեր՝ Պալդիկ ծովուն մէջ ։

2. Զուիտերզէէ՝ հիւսիսային ծովուն մէջ ։

3. Լիոնի կամ Պրովանսեան ծովածոց՝ Միջերկրական ծովուն մէջ, Գաղիոյ հարաւային եզերքը ։

4. Ճենովայի ծովածոց՝ Միջերկրական ծովուն մէջ, Իտալիոյ եզերքը ։

5. Տարենտոնի կամ Դարենտի ծովածոց՝ Յոնիական ծովուն մէջ, Իտալիոյ ծայրը ։

6. Վենետիկոյ և Թրիեստի ծովածոցեր՝ Ադրիական ծովուն մէջ ։

7. Լեփանտէ, Բատրասի, Կորնթոսի, Նաւպլիոյ և Աթէնայ ծովածոցեր՝ Յունաստանի եզերքը ։

8. Վոլոյի և Թեսաղոնիկէի ծովածոցեր՝ Արշիպեղագոսի մէջ ։

9. Օտեսայի և Բերեքոբի ծովածոցեր՝ Սեւ ծովուն մէջ ։

Հ. Եւրոպայի ծովակներն կամ մեծամեծ լիճերն որո՞նք են ։

Պ. Եւրոպայի ծովակներն կամ մեծամեծ լիճերն են,

1. Օնեկա, Լատոկա, Սայմա, Իլմէն, Բէյբուս և Պէէլօ կամ Սպիտակ լիճ՝ Ռուսիոյ մէջ ։

2. Մէլար, Վէնէր, Վէտտէր և Թօռնէօ՝ Շուէտի մէջ։

3. Պալաթոն և Նոյզիետըլ՝ Աւստրիոյ մէջ։

4. Նէօշաթէլ, Ճէնեւայի, Գոստանցայի, Ցիւրիխի, Լուցէրնի, Լուկանոյի ծովակներն՝ Հելուետիոյ կամ Զուիցերայի մէջ։

5. Մաճճիօրէ կոչուած ծովակը, և Գոմոյի, Կարտայի, Փէրուճիա, Պոլսէնայի և Ջելանոյի ծովակներն՝ Իտալիոյ մէջ։

Հ. Եւրոպայի նեղուցներն որո՞նք են։

Պ. Եւրոպայի նեղուցներն են։

1. Վայկաչի նեղուցը՝ Հիւսիսային Սառուցեալ ծովուն մէջ։

2. Սքակերրաք և Գաթեկաթ որ Հիւսիսային ծովը Պալդիկ ծովուն հետ կը կցեն։

3. Սունտ, Մեծ և Փոքր Պելթ՝ Դանիական կղզիներուն մէջտեղ։

4. Սուրբ Գէորգայ ջրանցք ու Հիւսիսային նեղուց որոց մին՝ Հարաւէն, և միւսն Հիւսիսէն կը տանին Իրլանտայի ծովը։

5. Գալէի անցք՝ Հիւսիսային ծովուն և Մանշի մէջտեղ։

6. Մանշի նեղուց՝ Գալէի անցքին և Ատլանդեան Ովկիանոսի մէջտեղ։

7. Ճէպելիւթարըգի նեղուց՝ Ատլանդեան Ովկիանոսի և Միջերկրական ծովուն մէջտեղ։

8. Պոնիֆաչիոյի նեղուց՝ Սարտենիոյ և Գորսիգայի մէջտեղ։

9. Մեսինայի նեղուց՝ Իտալիոյ և Սիկիլիոյ մէջտեղ։



10. Օթրանթի ջրանցք՝ Յոնիական և Ադրիական ծովերուն մէջտեղ։

11. Տարտանէլի (Չանագ գալէի) նեղուց՝ Արքիպեղագոսի և Մարմարայի մէջտեղ։

12. Կոստանդնուպոլսոյ կամ Պոսֆորի նեղուց՝ Մարմարայի և Սեւ ծովուն մէջտեղ։

13. Ենիքալէի նեղուց՝ Սեւ ծովուն և Ազախու ծովուն մէջտեղ։

---

## ԴԱՍ Թ.

Հ. Եւրոպայի գլխաւոր գետերն որո՞նք են և ո՞ր ծովերը կը թափին։

Պ. Եւրոպայի գլխաւոր գետերն են 34,.

Ա. Ռուսիոյ մէջ՝ 11

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. Պեչորա | որ | կը թափի | Հիւս. Սառ. | Ովկ. |
| 2. Տվինա | » | » | Սպիտ. ծովը | |
| 3. Թոռնէօ | » | » | Պալդ. | » |
| 4. Նևա | » | » | » | » |
| 5. Տունա | » | » | » | » |
| 6. Նիէմէն | » | » | » | » |
| 7. Տնիէսթէր | » | » | Սեւ | » |
| 8. Տնիէպէր | » | » | » | » |
| 6. Տոն | » | » | Ազախու | » |
| 10. Վոլկա | » | » | Կասպից | » |
| 11. Ուրալ | » | » | » | » |

Բ. Գերմանիոյ մէջ՝ 5

1. Վիսթուլ որ կը թափի Պալդ. ծովը

2. Օտեր որ կը թափի Պալդ. ծովը
3. Էլպա » » Հիւս. »
4. Վեզեր » » » »
5. Րէնոս » » » »

Գ. Գաղիոյ մէջ՝ 5

1. Մեօզ որ կը թափի Հիւս. ծովը
2. Էսքօ » » » »
3. Սէն » » Մանշի »
4. Լուար » » Ատլ. Ովկ.
5. Ժիրօնտ » » » »

Դ. Անգղիոյ մէջ՝ 1

1. Թամիզ որ կը թափի Ատլ. Ովկ.

Ե. Իռլանտայի մէջ՝ 1

1. Շէնըն որ կը թափի Ատլ. Ովկ.

Զ. Սպանիոյ մէջ՝ 6

1. Տուէրօ որ կը թափի Ատլ. Ովկ.
2. Դակօ » » » »
3. Կուատիանա » » » »
4. Կուատալքիվիր » » » »
5. Էպրօ » » Միջերկ. ծովը
6 Րօն » » » »

Է. Իտալիոյ մէջ՝ 3

1. Տիպէր որ կը թափի Միջերկ. »
2. Պօ » » Ադրիակ. »
3. Ատիճէ » » » »

Ը. Թուրքիոյ մէջ՝

1. Մարիցա որ կը թափի Արքիպեղագոս
2. Դանուպ » » Սեւ ծովը



## ԴԱՍ Ժ.

Հ. Եւրոպայի գլխաւոր կղզիներն որո՞նք են։

Պ. Եւրոպայի գլխաւոր կղզիներն են,

1. Հիւսիսային Սառուցեալ Ովկիանոսի մէջ, ա. Սպիցպերկ, և բ. Վայկաց և Քոլկուեւ։

2. Հիւսիսային ծովուն մէջ, ա. Նորվեկեան կղզիք որ են՝ Լոֆֆոտէնի, Տրոնհայմ և Պերկէնի խումբեր, բ. Անգղիական կղզիք որ են՝ Մեծն Բրի-տանիա, Իրլանտա, Հուայթ՝ Անգղիոյ հարաւային կողմը. Ֆէրօէր, Հեպրիտեան, Օրքատեան և Շեթ-լընտի խումբերն՝ Սկովտիոյ հիւսիսային կողմը, և գ. Հելկոլանտ։

3. Իռլանտիոյ ծովուն մէջ, ա. Մէն և Էն-կըլսի, և բ. Հօլանտեան կղզիք որոց գլխաւորն է Թեքսէլ, Զուիտէրզէի բերանը։

4. Պալդիկ ծովուն մէջ, ա. Դանիական կղզիք՝ Սէլանտ, Ֆիոնի, Լոլանտ, Ֆալսդէր, Պոռնհոլմ. բ. Շուէտեան կղզիք՝ Օլանտ և Կոթլանտ, գ. Ռուսական կղզիք՝ Տակօ, Էօզէլ և Ալանտ, և դ. Բրուսիական կղզիք՝ Րիւկէն և Ուզետոմ։

5. Մանշի մէջ, Նորմանեան կղզիք՝ Ճէրզի, Կըռնզի և Օրինէյ։

6. Ատլանտեան Ովկիանոսի մէջ, ա. Իսլանտ, և բ. Ազորեան կղզիք, Փորթուկալէն 900 քիլո-մեդր հեռու։

7. Միջերկրական ծովուն մէջ, ա. Պալէարեան կղզիք՝ Մայօրքա, Մինօրքա, Իվիզա և Ֆորմենդերա, բ. Գորսիքա, գ. Սարտինիա, Էլպա ուր Նաբոլէոն Ա.

ազատուեցաւ 1814 ին. դ. Սիկիլիա, ե. Լիփարեան կղզիք, և զ. Մալթայի խումբը 4 կղզիք։

8. Յոնիական ծովուն մէջ, ա. Յոնիական կղզիք որ են՝ Քորֆու, Բաքսօ, Սանթա, Մաւրա, Թէաքի, Քէֆալոնիա, Զանթէ, Չէրիկօ, և բ. Կրետէ կամ Գանտիա։

9. Ադրիական ծովուն մէջ, Լիբուրնեան (Իլլիրիոյ) կղզիք։

10. Արշիպեղագոսի մէջ, ա. Նեգրոբոն (Եւբէա), բ. Կիկլադեան կղզիք որոց գլխաւորներն են Սիրա, Դելոս, Անդրոս, Նաքսոս, Բարոս, Սանթորին՝ հրաբուխ, և գ. Սպորադեան կղզիք որոց գլխաւորներն են՝ Թասոս, Սամոթրակէ, Իմպրոս, Լեմնոս։

Հ. Եւրոպայի ցամաքակղզիներն որո՞նք են։

Պ. Եւրոպայի ցամաքակղզիներն են,

1. Սկանդինաւեան ցամաքակղզին որ կը պարունակէ Շուէտ և Նորուեկիա։

2. Դանիական ցամաքակղզին որ և Եուդլանտ կը կոչուի։

3. Իբերեան ցամաքակղզին որ կը պարունակէ Սպանիա և Փորթուկալ։

4. Իտալական ցամաքակղզին։

Հ. Եւրոպայի թերակղզիներն որո՞նք են։

Պ. Եւրոպայի թերակղզիներն են,

1. Մորէա կամ Պելոպոնէս (Յունաստան)։

2. Ղրիմ (Խրիմ) Սեւ ծովուն մէջ։

Հ. Եւրոպայի պարանոցներն որո՞նք են։

Պ. Եւրոպայի պարանոցներն են,



1. Կորնթոսի պարանոցը որ զՄորէա կը կցէ Յունաստանի ցամաքին հետ։

2. Բերեքոբի պարանոցը որ զՂրիմ կը կցէ Ռուսիոյ ցամաքին հետ։

## ԴԱՍ ԺԱ.

Հ. Եւրոպայի գլխաւոր հրուանդաններն որո՞նք են։

Պ. Եւրոպայի գլխաւոր հրուանդաններն են

1. Նորթ Քէփ՝ Շուէտի հիւսիսային եզերքը։

2. Լանտս Էնտ՝ Մեծին Բրիտանիոյ հարաւային եզերքը։

3. Քլէր և Միզէն՝ Իրլանտայի հարաւային եզերքը։

4. Լա Հոկ՝ Գաղիոյ հիւսիսային եզերքը։

5. Ֆինիսթեր՝ Սպանիոյ արեւմտեան եզերքը։

6. Սան Վինչենցիօ՝ Փորթուկալի արեւմտեան եզերքը։

7. Թրաֆալկար՝ Սպանիոյ հարաւային եզերքը։

8. Քորս՝ Կորսիքայի հիւսիսային եզերքը։

9. Թեւլատա՝ Սարտենեա կղզւոյն հարաւային եզերքը։

10. Բասսարոյ՝ Սիկիլիոյ հարաւային եզերքը։

11. Սբարթիվենթօ՝ Իտալիոյ հարաւային եզերքը։

12. Մաթաբան՝ Մորէայի հարաւային եզերքը։

13. Էմինէ՝ Եւրոպական Թուրքիոյ արեւելեան կողմը ։

Հ. Եւրոպայի գլխաւոր լեռնագօտիներն որո՞նք են ։

Պ. Եւրոպայի գլխաւոր լեռնագօտիներն են,

1. Սկանտինաւեան լեռնագօտին կամ Քէօլէն՝ Շուէտի և Նորուեկիոյ մէջտեղ ։

2. Անգղիական լեռնագօտիներն, ա. Սնովտոն՝ Վալէսի մէջ, և բ. Շէվիօ՝ Անգղիոյ և Սկովտիոյ մէջտեղ ։

3. Պիրենեան լեռնագօտին՝ Գաղիոյ և Սպանիոյ մէջտեղ ։

4. Սպանիական կամ Իբերեան լեռնագօտիներն, ա. Գանթապրեան գօտին, բ. Սիէրա Նեվատա, գ. Սիէրա տ'Էստրելլա, դ. Սիէրա տ'Օգա կամ Դոլէտոյէ գօտին, և ե. Սիէրա Մորէնա ։

5. Գաղիական լեռնագօտիք. ա. Վոժ, բ. Սեվէն, և գ. Օվէրնէ ։

6. Եուրա լերանց գօտին՝ Գաղիոյ և Զուիցերայի մէջտեղ ։

7. Ալպեան լեռնագօտին՝ մէկ կողմէն Գաղիոյ և Զուիցերայի և միւս կողմէն Իտալիոյ մէջտեղ ։ Այս գօտւոյն կը վերաբերի Մօնպլան, Եւրոպայի բարձրագոյն լեռը ։

8. Ապենինեան լեռնագօտին՝ Իտալիոյ մէջ ։

9. Գարբաթեան լեռնագօտին՝ Հունգարիոյ մէջ ։

10. Պալգաններն՝ Եւրոպական Թուրքիոյ մէջ ։

11. Տինարեան լեռնագօտին՝ Եւրոպական Թուրքիոյ արեւմտեան կողմը ։



12. Հելլենական լերանց գօտին՝ Պինդոս ։

13. Ուրալ լերանց գօտին՝ Ռուսիոյ մէջ, Ասիոյ և Եւրոպիոյ մէջտեղ ։

14. Կովկասեան լեռնագօտին որ զԱսիա Եւրոպայէ կը բաժնէ ։

Հ. Եւրոպայի հրաբուխներ որո՞նք են ։

Պ. Եւրոպայի հրաբուխներն են, 1. Վեզուվ՝ Նաբօլիի մօտ, 2. Էթնա՝ Սիկիլիոյ մէջ, և 3. Հեքլա՝ Իսլանտի մէջ ։

## ԴԱՍ ԺԲ.

Հ. Եւրոպա քանի՞ մաս կը բաժնուի, և իւրաքանչիւր մասի մէջ ի՞նչ տէրութիւններ կան ։

Պ. Եւրոպա չորս մաս կը բաժնուի, Հարաւային, Միջին, Հիւսիսային և Արեւելեան ։

Հ. Հարաւային Եւրոպայի մէջ քանի՞ տէրութիւն կայ ։

Պ. Հարաւային Եւրոպայի մէջ կայ վեց տէրութիւն. 1. Եւրոպական Թուրքիա, 2. Դանուբեան Իշխանութիւնք, 3. Յունաստան, 4. Իտալիա, 5. Սպանիա և 6. Լուսիտանիա կամ Փորթուգալ ։

Հ. Միջին Եւրոպայի մէջ քանի՞ տէրութիւն կայ ։

Պ. Միջին Եւրոպայի մէջ կայ վեց տէրութիւն, 1. Գաղիա, 2. Հելուետիա կամ Զուիցերա, 3. Հոլանտա, 4. Բելճիքա կամ Պելժիքա, 5. Գերմանիա, 6. Աւստրիա-Հունգարիա ։

Հ. Հիւսիսային Եւրոպայի մէջ քանի՞ տէրութիւն կայ ։

Պ. Հիւսիսային Եւրոպայի մէջ կայ երեք տէրութիւն, 1. Սկանտինաւիա որ կը բովանդակայ Շուէտի և Նորվեկիոյ թագաւորութիւններէն, 2. Դանիա կամ Տանիմարքա, և 3. Մեծն Բրիտանիա կամ Անգլիա ։

Հ. Արեւելեան Եւրոպայի մէջ քանի՞ տէրութիւն կայ ։

Պ. Արեւելեան Եւրոպայի մէջ մի միայն տէրութիւն մը կայ, այն է Ռուսիա ։

## ԴԱՍ ԺԳ.

## Ա. ՀԱՐԱՒԱՅԻՆ ԵՒՐՈՊԱ

### 1. ԵՒՐՈՊԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱ

Հ. Եւրոպական Թուրքիոյ վրայ ի՞նչ պատմական գիտելիք կայ ։

Պ. Այս երկիրն հին ատենն այլեւայլ ազգերու կը վերաբերէր ։ Քրիստոնէական թուականէն իբր 150 տարի առաջ Հռոմայեցիք սկսան տիրել Եւրոպայի այս մասին, բայց յետ Քրիստոսի, Դ. դարուն վերջը (390), Հռոմայեցւոց տէրութիւնը երկուքի բաժնուելով Արեւմտեան և Արեւելեան, Արեւելեանը եղաւ Յոյն կայսրութիւն մը որոյ մայրաքաղաքն էր Բիւզանդիոն կամ Կոստանդնուպօ-



լիս ։ Այս կայսրութեան վրայ յարձակեցան նախ Սլաւ ազգեր՝ Սերուիացիք, Ռումնացիք և Պուլղարք ։ Այս միջին դարուց մէջ խաչակիրք, այսինքն Երուսաղէմ ազատելու համար Եւրոպայէն արեւելք եկող զօրքերը, 1204–1261 Լատինական կայսրութիւն մը հաստատեցին Կոստանդնուպոլիս՝ Յոյն կայսրներն փոքր Ասիա վռնտելով ։ Անտի դար մը ետքը Օսմանեան թուրքերն Թաթարիստանէն գալով նուաճեցին Մակեդոնիա, Ալպանիա և Սերուիա ։ 1361 ին Սուլթան Մուրատ Ա. Ադրիանուպոլիս մայրաքաղաք ըրաւ, և 1453 ին մայիս 29 Սուլթան Մէհմէտ Բ. առաւ Կոստանդնուպոլիս Պալէոլոկոսեան ցեղէն Կոստանդին ԺԱ. ի ժամանակ ։ Այսպէս Յունական կայսրութիւնը եղաւ Օսմանեան կայսրութիւն ։

Հ. Օսմանեանք ի՞նչ ըրին ։

Պ. Օսմանեանք բոլոր Եւրոպա դողացուցին ։ Սուլթան Սիւլէյման Բ. 1529 ին մինչեւ Վիէննա գնաց ։ Ունկարիա, Մոլտաւիա, Վալաքիա, Ղրիմէ նուաճուեցան ։ 1566 էն ետքը Օսմանեան տէրութիւնն սկսաւ տկարանալ ։ 1683 ին Օսմանեանք նորէն գացին մինչեւ Վիէնա, բայց ետ մղուեցան ։ Անուհետեւ մինչեւ 1718 ատէպ պատերազմներ եղան Օսմանեանց և Աւստրիացւոց մէջտեղ որոց օգնական էին Լեհացիք ։

Օսմանեանց մեծագոյն թշնամին եղան

*Ռուսաց Մեծէն Պետրոսէ առքը ։ 1683 ին Օսմանցիք կորուսին Քրիմէ , 1812 ին՝ Պեսարապիա ։ 1821 ին Յունաստան եղաւ զատ տէրութիւն Սուլթան Մահմուտ Բ. ի ժամանակ որ ենիչէրիները վերցնելով Եւրոպական կարգեր հաստատեց , և հազիւ ազատեցաւ Եգիպտոսի կուսակալին Մէհմէտ Ալի փաշայի յարձակումէն ։ Եւրոպացւոց օգնութեամբ , 1853–1856 , Ռուսիոյ պատերազմին առեն, աւելի մեծ վտանգէ ազատեցաւ Թուրքիա Գաղիոյ և Անգղիոյ օգնութեամբ , բայց 1878 ին վերջին Ռուսական պատերազմաւ Դանուբեան իշխանութիւնք որ հարկատու էին՝ եղան ինքնագլուխ ։*

# ԴԱՍ ԺԴ.

*Հ. Եւրոպական Թուրքիա ի՞նչպէս կը բաժնուի ։*

*Պ. Եւրոպական Թուրքիա կը բաժնուի վեց մաս .*

1. *Ռումէլի (Թրակիա) կամ Ադրիանուպոլսոյ կուսակալութիւն (վիլայէթ) .*
2. *Մակէտոնիա կամ Թեսաղոնիկէի կուսակալութիւն .*
3. *Թեսալիա կամ Եանեայի կուսակալութիւն .*
4. *Ալպանիա կամ Մանասթըրի կուսակալութիւն .*



5. *Կղզէք .*
6. *Ինքնօրէն գաւառներ ։*

## 1. Ռումէլի

*Հ. Ռումէլիի երևելի քաղաքներն որո՞նք են ։*

*Պ. Ռումէլիի երեւելի քաղաքներն են ,*

*1. Կոստանդնուպոլիս , հնոց Բուզանդիոնը , առանձին վիճակ է իւր շրջականերով ։*

*Հ. Կոստանդնուպոլսոյ վրայ ի՞նչ գիտելիք կայ ։*

*Պ. Կոստանդնուպոլիս Օսմանեան տէրութեան մայրաքաղաքն է , ունի 1,000,000 բնակիչ որոց 300,000 ը Մահմետական է ։ Աշխարհիս մեծագոյն վաճառաշահ քաղաքներէն մին է Սեւ ծովուն բերանը , Եւրոպայի և Ասիոյ սահմանին վրայ շինուած ։ Երկայն ջրանցքով մը որ ըստ Եւրոպացւոց Ոսկեղջիւր (Խալիճ) կը կոչուի՝ երկու բաժնուած է . բուն Կոստանդնուպոլիս կամ Իսթամպօլ , և Ղալաթիա հանդերձ Բերայիւ ։ Հին շէնքերուն մէջ երեւելի են՝ ա. Սուրբ Սոփիա (Այասօֆիա) եկեղեցին Յուստինիանոսէ շինուած , հիմա մզկիթ , բ. վաճառանոցը (չարշին), գ. Եօթն աշտարակները (Եէտի գուլէ) , դ. Պին պիր տիրէք որ ջրոյ համբարանոց էր ժամանակաւ ։ Բերայէ առքը որ Եւրոպացւոց և դեսպանաց թաղն է՝ երեւելի է Ֆանար որոյ բնիկ Յոյն ընտանեաց շատերն հին Բուզանդեան կայսրութեան ազնուականներէն են . ասոնցմէ կ՚ընտրուէին Մոլտովլաքիոյ հին Հոսբոտար-*

ները (Ուլուտաղ) ։ Կոստանդնուպոլսոյ դիմացը, Ասիոյ հողին վրայ են Իսքիւտար և Գատըգիւղը (Գատըքէօյ) ։

2. Ադրիանուպոլիս (Էտիրնէ) (150,000) Մարիցա կամ Մէրիճ գետին քով ։

3. Կելիպոլու, զինուորական նաւահանգիստ և վաճառաշահ քաղաք (15,000) ։

4. Ռոտոսթօ (Թէքիրտաղ) (15,000), վաճառատեղի և նաւահանգիստ ։

5. Սիլիվրի (4,000). նաւահանգիստ ։

6. Տարտանէլ (Չանագ-գալէ). աւելի քան 800 թնդանօթով.ք ամրացեալ բերդեր ունի՝ համանուն նեղուցին բերանը ։

Յիշուելու արժանի են նաև Էրէկլի, Չորլու, Պուրկազ, Չաթալճա ։

## ԴԱՍ ԺԵ.

### 2. Մակեդոնիա

Հ. Մակեդոնիոյ երևելի քաղաքներն ո՞րոնք են ։

Պ. Մակեդոնիոյ երևելի քաղաքներն են,

1. Թեսաղոնիկէ կամ Սելանիկ (100,000), վաճառաշահ քաղաք է ։

2. Սերէզ (30,000), 300 գեղերով ։

3. Մանասթըր (50,000) ։

4. Իւսքիւպ (10,000), Ենիճէ, Վոտինա ։

5. Աթոսդաղ կամ Այնօռոս լեռն ուր կան 22 յոյն վանք, 500 մատուռ, 5,000 աբեղայ ։



Երևելի են նաև Գավալա ուր ծնաւ Եգիպտոսի Մէհմէտ Ալի փաշան, Օխրիտա ։ Վոտէն ։

### 3. Թեսաղիա

Հ. Թեսաղիոյ երևելի քաղաքներն ո՞րոնք են ։

Պ. Թեսաղիոյ երևելի քաղաքներն են ։

1. Լարիսսա կամ Ենիշէհիր (20,000), Լարիսսայի մօտ է հին բանաստեղծութեան մէջ անուանի Տէմպէ հովիտը և Ողիմպոս լեռը ։

2. Ֆարսալա, ըստ հնոց Փարսաղ, ուր Քրիստոսէ առաջ 48 ին երևելի պատերազմ եղաւ Օգոստոս կայսեր և Հայոց թշնամւոյն Անտոնիոսի մէջտեղ ։

3. Տրիքալա, Զակորա, Արտա, Ալասոնա ։

### 4. Ալպանիա

Հ. Ալպանիոյ երևելի քաղաքներն ո՞րոնք են ։

Պ. Ալպանիոյ (Արնաւուտլուղ) երևելի քաղաքներն են Շքօտրա (40,000), Եանինա կամ Եանեա (40,000). հոս մեռաւ Թէփէտէլէնլի Ալի փաշա 1822 ին ։ Տուրացցօ, Բրեզրէն (40,000), Նիշ (20,000) ուր ծնաւ մեծն Կոստանդիանոս. Բրեվէզա, Արկէրոյ ։

### 5. Կղզիք

Հ. Թուրքիոյ կղզիներն ո՞րոնք են ։

Պ. Թուրքիոյ կղզիներն են՝

1. Եգէական կամ Արքիպեղագոսի կղզիք, Թասոս, Սամոթրակէ, Իմպրոս և Լեմնոս ուր ժա-

մանակաւ կար անուանի բաւիղ (լաբիւրինթոս)։

2. Կրետէ որ առանձին կուսակալութիւն է և ունի լեռնադօտի մը և Իտա լեռը։ Քաղաքներն են՝ Գանտիա (15,000) և Գանեա (12,000) ընտիր նաւահանգստով, Րեթիմօ (6,000)։

## ԴԱՍ ԺԶ.

### 6. Ինքնօրէն գաւառներ

Հ. Եւրոպական Թուրքիոյ ինքնօրէն գաւառներն որո՞նք են։

Պ. Եւրոպական Թուրքիոյ ինքնօրէն գաւառներն են, 1. Արեւելեան Ռումելի, և 2. Պուլկարիա։

Հ. Այս երկու գաւառաց վրայ ի՞նչ պատմական գիտելիք կայ։

Պ. Այս երկու գաւառներն մինչեւ 1878 էին ուղղակի ընդ իշխանութեամբ Բարձրագոյն Դրան։ Արեւելեան Ռումելի որ Եւրոպական Թուրքիոյ արեւելեան մասն է մինչեւ Պալգանները, վերջին Ռուսական պատերազմէն ետքը, 1878 ին, Պերլինի դաշնադրութեամբ ստացաւ ինքնօրէն վարչութիւն. այսինքն ունի քրիստոնեայ կառավարիչ զոր Սուլթանը կ'անուանէ հինգ տարին անգամ մը Եւրոպական մեծ տէրութեանց հաճութեամբ։ Իսկ Պուլկարիա Պալգաններէն անդին, նոյնպէս



1878 ին եղաւ հարկատու իշխանութիւն. ունի քրիստոնեայ իշխան, առանձին սահմանադրութիւն և զօրք։

Հ. Արեւելեան Ռումելիի գլխաւոր քաղաքներն որո՞նք են։

Պ. Արեւելեան Ռումելիի գլխաւոր քաղաքներն են, 1. Փիլիպպէ, (35,200), Մարիցա գետին քով, ունի ասուի և բամբակի գործարաններ։

2. Պուրկաս, նաւահանգիստ վաճառաշահ Սեւ ծովուն եզերքը։

Հ. Պուլկարիոյ գլխաւոր քաղաքներն որո՞նք են։

Պ. Պուլկարիոյ գլխաւոր քաղաքներն են, Տըրնովա, մայրաքաղաք, Սոֆիա (50,000), Պալգաններուն ստորոտը, Շումլա (20,000), Պալգաններուն ստորոտը, Նիկոպոլիս (16,000), Վիտին (20,000), Ռուսճուք (40,000), Սիլիստրէ (20,000), Վառնա (20,000), Սեւ ծովուն եզերքը։

## ԴԱՍ ԺԷ.

Հ. Եւրոպական Թուրքիոյ բնակիչն ո՞րչափ է։

Պ. Եւրոպական Թուրքիոյ բնակիչներն, ինքնօրէն գաւառներն 'ի միասին հաշուելով, են իբր 8 1/2 միլիոն, այլեւայլ ցեղերէ, այսինքն, Թուրք կամ Օսմանեան՝ իբր 2,000,000,

Սլաւ՝ իբր 4,000,000, մնացեալ $2\frac{1}{2}$ միլիոն է Ալպանէացի (Առնաւուտ), Յոյն, Հայ, Հրեայ և Գնչու: Թուրքերն և Ալպանիացւոց մէկ մասն Մահմետական են, մնացեալներն՝ քրիստոնեայ:

Հ. Թուրքիա Եւրոպայէ դուրս ի՞նչ երկիրներ ունի:

Պ. Թուրքիա ունի Ասիոյ մէջ ընդարձակ երկիրներ, Ափրիկէի մէջ՝ Եգիպտոս, Թարապուլուս և Թունուզ:

Հ. Թուրքիոյ զինուորական զօրութիւնն ո՞րչափ է:

Պ. Թուրքիոյ ցամաքային զօրքն է 210 հազար. պատերազմի ժամանակ կրնայ աւելնալ մինչև 700 հազար: Նաւատորմիղը կը բաղկանայ 103 շոգենաւէ որոց 19 ը զրահաւոր է, և 73 առագաստաւոր նաւէ:

---

## ԴԱՍ ԺԸ.

Հ. Թուրքիա ի՞նչ տեսակ կառավարութիւն է:

Պ. Թուրքիա սահմանադրական միապետութիւն է: Սուլթանն աշխարհային և հոգևոր բացարձակ գլուխ է: Տէրութեան բարձր պաշտօնատարներն են 1. Եպարքոսը կամ մեծ վէզիրը (Սատրազամ) որ գործադիր իշխանութեան կամ վարչութեան գլուխն է, որուն իշխանութեան ներքև են ուրիշ պաշտօնեայք. 2. Դենպետը կամ Շէյխ իւլ իսլամը (իսլամին ծերը) որ գլուխ է Իւլէմայից որ Մահմետական կրօնքին պաշտօնեաները և դատաւորներն են: Շէյխ իւլ իսլամ Մահմետական օրէնքին մեկնիչ է: Վարչութեան ամէն պաշտօնարաններուն և գաւառաց ու քաղաքաց խորհուրդներուն մէջ Միւֆթի կոչուած օրէնսգէտներ կը նստին: 3. Միւս պաշտօնեայք որ են՝ Պատերազմի, Ծովային զօրութեան, Արտաքին գործոց, Ելևմտից, Արդարութեան, Առևտրական գործոց, Հասարակաց շինութեան, Հասարակաց կրթութեան և Անշարժ ստացուածոց պաշտօնեաները:

---

## ԴԱՍ ԺԹ.

### 2. ԴԱՆՈՒԲԵԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՔ

Հ. Ո՞ր տէրութիւններն կը կոչուին Դանուբեան իշխանութիւն:

Պ. Դանուբեան իշխանութիւն կը կոչուին 1. Սերուիա, 2. Ռումանիա և 3. Մոնթէնէկրօ: Այս երեք իշխանութիւնք, առաջին երկուքը՝ Դանուբի, վերջինն Ադրիական ծովուն եզերքը, էին հարկատու Թուրքիոյ, բայց 1878 ին դաշամբ ճանչցուեցան ինքնագլուխ:

#### 1. Սերուիա

Հ. Սերուիոյ վրայ ի՞նչ պատմական գիտելիք կայ:

Պ. Սերուիա Ժ. դարէն մինչև ԺԷ. դար

թագաւորութիւն էր ։ 1459ին Օսմանցիք նուաճեցին Սերուիա ։ 1718 ին Բասսարովիցի դաշնադրութեամբ մեծաւ մասամբ Աւստրիացւոց անցաւ այս երկիրը ։ 1739 ին Պելկրատի դաշնադրութեամբ նորէն առին Օսմանցիք Սերուիա ։ Սերուիացիք 1801–1812 կռուեցան Օսմանեանց դէմ և 1815 ին Սերուիա եղաւ ինքնօրէն իշխանութիւն, հարկատու բարձրագոյն Դրան ։ Վերջին Ռուսական պատերազմէն ետքը եղաւ ինքնագլուխ ։

Հ. Սերուիոյ բնակիչք ո՞րչափ են, երեւելի քաղաքներն որո՞նք են ։

Պ. Սերուիոյ բնակիչք են իբր 1 ½ միլիոն, Սլաւ ցեղէ. երեւելի քաղաքներն են Պելկրատ Դանուբի եզերքը (30,000) մայրաքաղաք, Սեմենտրէ, Գրակուեվաց (5,000) իշխանանիստ, Գլատովօ ։ Կառավարութիւնը սահմանադրական է ։

2. Ռումանիա

Հ. Ռումանիոյ վրայ ի՞նչ պատմական դիտելիք կայ ։

Պ. Ռումէնք ԺԳ. դարուն մէջ անկախ տէրութիւն եղան, ԺԶ. դարուն մէջ նուաճեցան Օսմանցիներէն ։ Ռումանիա առաջ երկու իշխանութիւն էր, Մոլտաւիա և Վալաքիա. 1802 ին Ռուսիա այս իշխանութեանց պաշտպան ըլլալու իրաւունքն ստացաւ Բարձրագոյն Դռնէն ։ Իշխաններն Կոստանդնուպոլսոյ Ֆէնէրի հին Յոյն գերդաստաններէն էին ։ 1821 ին Իփսիլանդի յոյն իշխանն ապստամբելով



յաղթուելէն ետքը՝ իշխանութիւնը տրուեցաւ բնիկ Պօյարներու որ նախ երեք տարուան համար կ'ընտրուէին, յետոյ ցկեանս եղան ։ 1858 ին երկու իշխանութիւններն միացան Բարձրագոյն Դրան հաճութեամբ ըստ խրատու Եւրոպական տէրութեանց, և Քուզա իշխանն՝ Աղեքսանդր Յովհաննէս Ա. անուամբ եղաւ իշխան Մոլտովալաքիոյ, բայց 1865 ին հրաժարեցաւ, 1866 ին ժողովուրդն ընտրեց Գերմանիոյ Հոհէնցոլլէռնի ազգատոհմէն Կարոլոս իշխանն իբրեւ ժառանգական իշխան Ռումանիոյ ։ Ռումանիա մինչեւ 1878 հարկատու էր Բարձրագոյն Դրան, բայց ապստամբելով, Ռուսիոյ օգնութեամբ եղաւ ինքնագլուխ ։

Հ. Ռումանիոյ բնակիչք ո՞րչափ են, երեւելի քաղաքներն որո՞նք են ։

Պ. Ռումանիա ունի իբր 4 ½ միլիոն բնակիչ, մայրաքաղաքն է Պուքրէշ (142,000), հոս կը նստի Ռումանիոյ իշխանը ։ Պուքրէշ ունի համալսարան ։ Ամուր քաղաքներ են Իպրայիլ (26,000) Ռումանիոյ նաւահանգիստը, և Ճիուրճեվօ ։ Երեւելի քաղաքներ են Եաշ (90,000), Գալաց (36,000) Դանուբի եզերքը, Իսմայիլ (20,000)։ Կառավարութիւնը սահմանադրական է ։

3. Մոնթէնէկրոյ

Հ. Մոնթէնէկրոյի վրայ գիտելու արժանի ի՞նչ կայ ։

Պ. Մոնթէնէկրոյ, որ և Ջէռնակօրա (Գարատաղ) ունի իբր 200,000 բնակիչ ։ 1861 ին Մոն-

թենէկրոյ մօտ Բարձրագոյն Դրան իշխանութեան ներքև, բայց ստէպ կ'ապստամբէր, և վերջին Ռուսական պատերազմին ատեն քաջութեամբ կռուելով եղաւ ինքնագլուխ, և ընդարձակեց իւր սահմանը: Գլխաւոր քաղաքն է Ցեթինիէ: Մոնթենէկրոցիք Սլաւ են ցեղով, Յունադաւան, քաջ պատերազմող, վայրենի, այսինքն իշխանը, աշխարհական իշխան միանգամայն եպիսկոպոս է. ունի ծերակոյտ մը:

---

## ԴԱՍ Ի.

### 3. ՅՈՒՆԱՍՏԱՆ

Հ. Յունաստանի վրայ ի՞նչ պատմական գիտելիք կայ։

Պ. Յունաստան ժամանակաւ շատ երևելի էր գիտութեամբ, արուեստներով, մանաւանդ գեղարուեստիւք և պատերազմական քաջութեամբ: Բայց Յոյնք իրենց մէջ բաժանեալ և անմիաբան լինելով, տկարացան, և 149 ին նախ քան զՔրիստոս Հռոմայեցիներէն նուաճելով, եղան մասն Արևելեան կամ Բուզանդեան կայսրութեան, մինչև նուաճեցան Օսմանցիներէն, բայց 1821 ին ապստամբելով, Եւրոպական տէրութեանց օգնութեամբ եղան զատ թագաւորութիւն: Այս փոքր թագաւորութիւնը քանի մը տա-



րիէ հետէ մեծ յառաջադիմութիւն կ'ընէ: Վաճառականութիւն, արուեստք, զինուորական զօրութիւն և դաստիարակութիւն օր քան զօր կը ծաղկին և կը զարգանան: Կառավարութիւնն է սահմանադրական:

Հ. Յունաստանի երևելի քաղաքներն ո՞րոնք են։

Պ. Յունաստանի երևելի քաղաքներն են, Աթէնք (50,000), մայրաքաղաք, ունի համալսարան, և ուրիշ շատ դպրոցներ: Նաւահանգիստն է Բիրէ (10,000):

Անուանի են նաև Լեբանթօ, Սալոնա, Միսոլոնկի, Կորնթոս, Նաւբլիա (11,000), Բադրաս (18,000)՝ վաճառաշահ քաղաք: Երևելի են Նաւարին, իբրև նաւահանգիստ. հոս այրեցաւ Օսմանեան նաւատորմիղն 1827 ին: Միսթրա, հին Սպարտայի աւերակներուն մօտ, և Մոդոն, բերդաքաղաք, ուր Մխիթար Աբբա, Մխիթարեանց հիմնադիրն, առաջին անգամ հոս հաստատեց վանք։

Հ. Յունաստանի կղզիներն ո՞րոնք են:

Պ. Յունաստանի կղզիներն են, 1. Էվպէա (Եւրիպօզ) կամ Նեկրոբոնթէ, Յունաստանի մեծագոյն կղզին, 2. Կիկլադեան կղզիք՝ Սիրա, Նաքսոս, Պարոս՝ մարմարիոնն ազնիւ, Սանթորին՝ հրաբուխ որ վերջին անգամ բորբոքեցաւ 1866 ին, 3. Յոնիական եօթն կղզիք որոց գլխաւորն է Քորֆու, համանուն քաղաքով (30,000): (Տես և էջ 24 Յոնիական կղզիք:)

Հ. Ցունաստանի բնակիչը և զօրքը որչա՞փ է։

Պ. Ցունաստանի բնակչաց թիւն հիմա 2 միլիոնի մօտ է, զօրքը՝ 50,000, նաւատորմիղը՝ 38 նաւ, 3ը զրահաւոր։

---

## ԴԱՍ ԻԱ.

### 4. ԻՏԱԼԻԱ

Հ. Իտալիոյ վրայ ի՞նչ պատմական տեղեկութիւն կայ։

Պ. Այս երկիրը քանի մը տարի առաջ կը բաղկանար Սարտենիոյ, Նաբոլիի, Լոմպարտիոյ և Վենետիկոյ թագաւորութիւններէն, Պապին երկրէն և ուրիշ քանի մը դքսութիւններէ։ 1859ին Աւստրիոյ դէմ պատերազմէն ետքը, բաց 'ի Վենետիկոյ և Պապին երկիրներուն մէկ մասէն, բոլոր Իտալիա միացաւ Սարտենիոյ հետ, և կոչուեցաւ «Իտալիոյ Թագաւորութիւն»։ 1866ին Բրուսոյ–Աւստրիական պատերազմին ատեն Իտալիոյ հետ միացաւ նաեւ Վենետիկ որ Աւստրիոյ կը վերաբերէր. վերջապէս 1870ին Ֆրանգոյ–Գերմանական պատերազմին ատեն Հռոմ առնելով Պապին աշխարհական իշխանութիւնը ջնջուեցաւ և բոլոր Իտալիա եղաւ մի թագաւորութիւն սահմանադրական կառավարութեամբ։

Հ. Իտալիոյ բնակիչը և զօրքը ո՞րչափ է։

Պ. Իտալիոյ բնակիչը 28 միլիոն է, զօրքը



377,000, բայց կրնայ 571,000 զօրք հանել. նաւատորմիղն է 91 նաւ, 22ը զրահաւոր, 788 թնդանօթով։

Հ. Իտալիոյ երեւելի քաղաքներն որո՞նք են։

Պ. Իտալիոյ երեւելի քաղաքներն են,

1. Հռոմ, 1871էն 'ի վեր մայրաքաղաք (235,000) Տիբեր գետին քով 7 բլուրներու վրայ շինուած։

Հին Հռոմայեցւոց ժամանակէն մնացած երեւելի շէնքերն են Բանթէոնը (ամենադից մեհեան) որ հիմա եկեղեցի է, Տրայիանոսի սիւնը, Քոլոսէումը (Ամֆիթէատրոն 100,000 հոգւոյ համար), Տիտոսի, Սեպտիմոս Սեւերոսի և Կոստանդիանոսի յաղթական կամարները։

Ուրիշ երեւելի շէնքերն են, Սուրբ Պետրոսի եկեղեցին, Հռոմի 400 եկեղեցիներուն, նաեւ բոլոր աշխարհի եկեղեցիներուն մեծագոյնը, զոր Յուլիոս Բ. Պապ սկսաւ շինել 1506ին, Սեքստոս Ե. ի ժամանակ 1590ին գմբէթը լմնցաւ և 1626ին օծուեցաւ եկեղեցին. 2. Վատիկանու պալատը ուր Պապը կը նստի, որ և ունի շատ սենեակներ անուանի գրատուն և թանգարան. 3. Լատերանու եկեղեցին որ Պապին մայր եկեղեցին է։

Գրեթէ ամբողջ Հռոմ քաղաքը գեղարուեստից թանգարան է, երեւելի նկարչաց և անդրիագործաց հռչակաւոր գործերովը հարուստ։ Հռոմի մօտ է նաեւ Քաթագոմպ

կոչուած սորբերկրեայ գերեզմանատունն ուր նախնի Քրիստոնեայք հալածանաց ժամանակ կ՚ապաւինէին ։ Չիվիթա Վեքքիա (10,000) բերդաքաղաք և նաւահանգիստ Հռոմայ ։

2. Թուրին, Բոյ գետին վրայ, (213,000), ունի համալսարան և երևելի թանգարաններ, մանաւանդ Եւրոպական հնութեանց թանգարանը ։

3. Միլան (260,000) ։ Նշանաւոր է մայր եկեղեցին դուրսէն 4,500 անդրիններով (արձաններով) զարդարուած ․ Սուրբ Ամբրոսիոս կոչուած եկեղեցին ուր Գերմանիոյ կայսերք Իտալիոյ թագաւորութեան «երկաթի թագով» կը պսակուէին ։ Երևելի է նաև Սքալա կոչուած թատրոնը ։

4. Բավիա (30,010), Քրեմոնա (30,000), Պերկամօ (25,000), Սոլֆերինօ, Գոմօ (12,000) ։

---

## ԴԱՍ ԻԲ.

5. Վենետիկ (126,000), Ադրիական ծովուն մէջ շինուած ։ Երևելի են Տոժերուն պալատները և Սուրբ Մարկոսի եկեղեցին, նաւարանը և Թնդանօթի ձուլարանը ։ Վենետիկ կէս դար առաջ հանրապետութիւն էր, որոյ նախագահը կը կոչուէր Տոժ ։ Վենետիկոյ քով մանր կղզիներէն մէկն է Ս. Ղազար, ուր է Մխիթարեանց վանքը որ ունի երևելի տպարան և դրատուն մը հարուստ Հայերէն ձեռագրօք ։

6. Քիօճճիա (27,000), Մանթովա (28,000), Վերոնա (56,000) և Պրեշիա (40,000), այս վերջին երեքը ամուր բերդեր են. Բատովա (52,000), երևելի է Սրբոյն Անտոնի պատուացուցն եկեղեցին, Վիչենցա (35,000), Ուտինէ (24,000) և Թրեվիզօ (22,000) ։

7. Ճենովա, ծովեզերեայ քաղաք (160,000) ։ Կոստանդնուպոլսէ և Նաբոլիէ ետքը երրորդ է գեղեցիկ դիրքը կողմանէ ։ Ճենովա մինչև 1797 հանրապետութիւն էր, վաճառականութեամբ անուանի, մանաւանդ Սև ծովուն մէջ ։

8. Բարմա (50,000), առուտուրը մետաքս և պանիր ։ Բիաչենցա (30,000) ։

9. Մոտենա (30,000) ։

10. Պոլոնիա (112,000), համալսարան ունի. Ֆէրրարա (20,000), Րավեննա (70,000), Ֆաենցա (20,000), յախճապակին ընտիր ։

11. Ֆիրենցէ (170,000), Իտալիոյ Աթէնքը, գեղեցիկ շինուածներով և թանգարաններով երևելի է ։ Լիվոռնօ (95,000) ուր Հայոց եկեղեցի կայ (Հռոմէական Հայոց ձեռ.ք), ծովեզերեայ քաղաք է ։ Բիզա (50,000). անուանի է Բիզայի աշտարակն 168 ոտք բարձր ։ Սիենա (20,000) ։ Լուքքա (20,000) ։

12. Անքոնա (30,000), բերդաքաղաք ։ Լորեթօ. հոս կը ցուցուի Աստուածածնի տունը,

որ երեւելի ուխտատեղի է: Լօրէթթօ (15,000):

13. Նափոլի (450,000), անհամեմատ գեղեցիկ դիրքով, այնպէս որ Իտալացւոց մէջ առակ է «վէտի Նափոլի, բօյի մուօրի», տես Նափոլի, և ապա մեռիր: Երեւելի է Պուրպոնեան Թանգարանը հարուստ գրատամբ և հին առեննը Քրիստոսէ 79 տարի առաջ հրաբուխէ ծածկուած ու մօտ առեններս գըտնուած Հէրքուլանում և Բոմբէի քաղաքներուն հնութիւններով: Կայէթա, բերդաքաղաք: Աքուիլա, Տարէնտօ և Կաբուա շատ հին քաղաքներ են: Պրինտիզի, Ռէճճիօ, Սալէռնօ նշանաւոր են:

14. Սարտենիա կղզին 600,000 բնակչօք. ծովեզերքը լի է բուսով (մերճան). գլխաւոր քաղաքն է Քալեարի (28,000):

15. Էլպա կղզին:

16. Սիկիլիա կղզին, բնակիչը 2 $^1/_2$ միլիոն, շատ ծծումբ ունի: Քաղաքներն են՝ Պալէրմօ (200,000), ունի համալսարան և դիտարան: Մէսսինա (100,000): Հոս մօտ են Լիբարեան կղզիք:

17. Սան Մարինօ, հանրապետութիւն է 469 քմ 'ի վեր. բնակիչը 7,000:

18. Մալթա, բնակիչը 150,000: 1800 էն 'ի վեր կը վերաբերի Անգղիացւոց, որ ծաղկեցուցին կղզին, 'ի բնէ անպտուղ: Գլխաւոր քաղաքն է Լա Վալէթթա (60,000). ամուր բերդաքաղաք է:



# ԴԱՍ ԻԳ.

## 5. ՍՊԱՆԻԱ

Հ. Սպանիոյ վրայ ի՞նչ պատմական գիտելիք կայ:

Պ. Սպանիոյ հին և բնիկ ժողովուրդն էին Իբերացիք և Կելտք: Փիւնիկեցիք և Յոյնք Սպանիոյ հարաւային եզերքը գաղթականներ ունէին: Քրիստոսէ առաջ նախ Կարքեդոնացիք և ապա Հռոմայեցիք այս երկրին տիրեցին: Հռոմայեցւոց արեւմտեան կայսրութեան կործանելէն ետքը եկան հոն Ալանք, Վանտալք և ապա արեւմտեան Գոթացիք, և թագաւորութիւն հաստատեցին: 711 ին Արաբացիք գալով Մահմետական թագաւորութիւն մը հաստատեցին, բայց փախուցեալ քրիստոնեայք կամաց կամաց զօրանալով վըռընտեցին Արաբացիները, և հաստատուեցան քանի մը թագաւորութիւններ, ինչպէս Արակոն, Նավառրա, Լէոն Գասթիլլիա և 1100 ին Բորթուկալ: Այս թագաւորութիւնները ԺԵ. դարուն վերջը (1492 ին) միացան Գասթիլիոյ ժառանգին Իզապէլի և Արակոնի ժառանգին Ֆէրտինանտի ամուսնութեամբ: Այնուհետեւ Սպանիա Եւրոպայի առաջին և հզօրագոյն և հարստագոյն թագաւորութիւնը եղաւ, բայց երթալով տկարացաւ: 1714 ին Պուրպոնեան ցեղը տիրեց, բայց 1868 ին Իզապէլլա Բ. Պուր-

Պոնեան վռնտուելով, 1870 ին իտալիոյ թագաւորին որդին Ամատէոս ընտրուեցաւ թագաւոր ։ 1873 ին Ամատէոս հրաժարեցաւ, և հանրապետութիւնը հրատարակեցաւ Սպանիոյ մէջ ։ 1875 ին եղաւ նորէն սահմանադրական թագաւորութիւն, և ընտրուեցաւ թագաւոր իզապէլլայի որդին Ալֆոնսոս ԺԲ ։

Հ. Սպանիոյ բնակիչը և զօրքը ո՞րչափ է ։

Պ. Սպանիոյ բնակիչն է 17,000,000 հռոմէական կաթոլիկ, զօրքը 255,000, նաւատորմիղը 124 շոգենաւ, 10 զրահաւոր, 3 ը առագաստաւոր, 846 թնդանօթով ։

Հ. Սպանիոյ երեւելի քաղաքներն որո՞նք են ։

Պ. Սպանիոյ երեւելի քաղաքներն են,

1. Մադրիտ մայրաքաղաք (380,000), ունի պալատներ, գեղեցիկ շէնքեր, համալսարան մը և թանգարան ։ Թոլէտօ (19,000), եպիսկոպոսանիստ քաղաք ։

2. Պադաժօզ (22,000), բերդաքաղաք ։

3. Գորտովա (57,000) ։ Սեւիլլա (152,000) ։ Գատիզ (72,000), զինուորական նաւահանգիստ ։ Շերէզ (52,000) ։ Ճիպրալթար որուն ամրոցը 1704 էն 'ի վեր Անգղիացւոց ձեռքն է ։

4. Կրանատա (100,000) ։ Հոս են Արաբացի իշխանաց պալատին Ալհամպրայի աւերակները ։ Մալակա (110,000), երեւելի է գինին ։

5. Մուրսիա (30,000) և Գարթաճենա (22,000) ։

6. Վալէնցիա (150,000), մետաքսի գործարաններ ունի, Ալիքանթէ (31,000), գինին անուանի ։



7. Պարսելոնա (250,000), բերդաքաղաք և զինուորական նաւահանգիստ ։

8. Սարակոսա (82,000), 1808 ին և 1809 ին քաջութեամբ դիմացաւ Գաղիացւոց ։

9. Բամբելունա (25,020), ամուր քաղաք ։

10. Սանթ Եակօ (Ս. Յակոբ) տէ Գոմբոսթելլա (70,000) հոս կը ցուցուի Յակոբոս առաքելոյն գերեզմանը և երեւելի ուխտատեղի է ։ Գորունա (30,000) ։ Ֆերրոլ (21,000), ամուր քաղաք է Ատլանտեան ովկիանոսի վրայ ։ Հոս է նաւարանը ։

11. Սանթանտէր (35,000), Պուրկոս (25,000), Սեկովիա ․ հոս մօտ է Փիլիպպոս Բ. էն շինուած Էսգորիալ անուն երեւելի շէնքը՝ վանք, եկեղեցի, գրատուն և գերեզմանատեղի թագաւորաց ։

12. Վալլատոլիտ (40,000), Լէոն, Սալամանքա (14,000), անուանի համալսարանով ։ Ալմատէն ․ երեւելի է սնդիկի հանքը ։

Հ. Սպանիոյ կղզիներն որո՞նք են ։

Պ. Սպանիոյ կղզիներն են,

1. Պալէարեան կղզիք՝ Մայորքա, գլխաւոր քաղաքը Բալմա (40,000) ․ Մինորքա, գլխաւոր քաղաքը Մահոն, Միջերկրական ծովուն մէջ ։

2. Գանարեան կղզիք և Կուինէայի կղզիներն՝ Ափրիկէի մէջ, 300,000 բնակչօք ։

3. Անթիլեան մեծ կղզիներն Գուպա և Բորթօ Րիքօ՝ Ամերիկայի մէջ, 2,000,000 բնակչօք ։

4. Փիլիպեան կղզիք՝ Ասիոյ մէջ ։

5. Մարիանեան կամ Ալադրոնեան կղզիք, Կարոլինեան կղզիք և Բելեւ կոչուած կղզիք՝ Աւստրալիոյ մէջ։

Հ. Անտորա ի՞նչ է։

Պ. Անտորա փոքր հանրապետութիւն է Պիրենեան լերանց մէջ, բնակիչը 2,000։

---

## ԴԱՍ ԻԴ.

### 6. ԼՈՒՍԻՏԱՆԻԱ ԿԱՄ ԲՈՐԹՈԿԱԼ

Հ. Բորթոկալի վրայ ի՞նչ պատմական գիտելիք կայ։

Պ. ԺԲ. դարուն մէջ Գաստիլիոյ թագաւորը Ալֆոնս Զ. այս երկիրը տուաւ Պուրկոնեայի Հենրիկոս իշխանին։ Պուրկոնեայի տունը տիրեց մինչեւ 1580։

Այս փոքր տէրութիւնը երեւելի եղաւ ԺԴ. դարէն ետքը Եւրոպայէ դուրս շատ տեղերու տիրելով։ Վասգոյ տէ Կամա նաւապետը գտաւ Արեւելեան Հնդկաստանի ճամբան 1498ին. Պրազիլեա գտնուեցաւ 1500ին։ 1580էն ետքը Բորթոկալ կորսնցուց դուրսի երկիրներն, և նուաճեցաւ Սպանիացիներէն։ 1640ին նորէն գտաւ իր ազատութիւնը, ունենալով թագաւոր Պրականցայի տունէն. մինչեւ ցարդ Բորթոկալի թագաւորք այս տունէն են։ Գամոէնս բանաստեղծն Բորթոկալի փառաւոր ժամանակը երգած է իր Լուսիական անուն դիւցազնականին մէջ։



Հ. Բորթոկալի բնակիչը և զօրքն ո՞րչափ է։

Պ. Բորթոկալի բնակիչը 4,350,000 է, զօրքը՝ 70,000, նաւատորմիղը՝ 42 նաւ 366 թընդանօթով։

Հ. Բորթոկալի գլխաւոր քաղաքներն ո՞րոնք են։

Պ. Բորթոկալի գլխաւոր քաղաքներն են,

1. Լիզպոն (224,000), մայրաքաղաք։

2. Գոյիմպրա (18,000), ունի համալսարան։ Եւորա (12,000)։

3. Պրականցա, բերդաքաղաք։ Այժմու Բորթոկալի թագաւորք այս քաղքին հին դուքսերուն ցեղէն են։

4. Օբորթօ (90,000), ունի մետաքսի գործարաններ և ընտիր գինի։

Հ. Բորթոկալի կղզիներն ո՞րոնք են։

Պ. Բորթոկալի կղզիներն են,

1. Ազորեան կղզիք, 160 մղոն դէպ արեւմուտք Լիզպոնայէ։

2. Մատէրա և Կապ-Վերտոյ կղզիներն և ուրիշ տեղեր՝ Ափրիկէի մէջ։

3. Ասիոյ մէջ Կոա և Տիու Մալապարի եզերքը. Մագաո՝ Չինու մէջ Քանդոնի մօտ։

---

## ԴԱՍ ԻԵ.

## Բ. ՄԻՋԻՆ ԵՒՐՈՊԱ

---

### 4. ԳԱՂԻԱ ԿԱՄ ՖՐԱՆՍԱ

Հ. Գաղիոյ վրայ ի՞նչ պատմական դիտելի՛ք կայ։

Պ. Գաղիա հին ատեն կեղտաց կամ Գաղատաց կը վերաբերէր, յետոյ Հռոմայեցիք տիրեցին այս երկրին։ Ե. դարուն սկիզբը գերմանական ազգերուն Ֆրանք կոչուած ցեղը տիրեց Գաղիոյ։ Ֆրանք թագաւորաց ցեղը կը կոչուի Մերովեան, ասոնցմէ անցաւ իշխանութիւնն Կարոլոսեան ցեղին, յորոց մեծն Կարոլոս Թ. դարուն սկիզբը բոլոր Եւրոպայի վրայ տարածեց իւր իշխանութիւնը։ Կարոլոսի մահուանէն ետքը Գաղիա զատ թագաւորութիւն եղաւ։ Ի վերջ կոյս Ժ. դարուն իշխանութիւնն անցաւ Գարեդեան ցեղին։ Այս ցեղին թագաւորներն շատ տկար էին, և երկիրն բաժնուած էր այլեւայլ գրեթէ ինքնագլուխ իշխաններու։ Լուտովիկոս ԺԱ. ի ժամանակէն (1461) սկսաւ զօրանալ թագաւորութիւնը, ինքնագլուխ իշխանութիւնք նուաճեցան։ ԺԷ. դարուն Պուրպոնեան ցեղը դահակալեց, և Լուտովիկոս ԺԴ. ի ժամանակ թէ զօրութեան և թէ ուսման և գիտութեան կողմանէ Գաղիոյ ծաղկեալ ժամանակն էր։ ԺԸ. դա-



րուն դէպ 'ի վերջը (1789) մեծ յեղափոխութենէն ետքը Նաբոլէոն Ա. իշխանութեան հասնելով, Գաղիա եղաւ կայսրութիւն 1804։ Յետ անկման Նաբոլէոնի 1815, Պուրպոնեանք նորէն եկան։ 1830 ին Պուրպոնեանք ինկան, և եկաւ Լուի Ֆիլիփ Օրլէանեան։ 1848 ին Լուի Ֆիլիփ ինկաւ, և եկաւ Նաբոլէոն Գ. կայսր որ 1870 ին Գերմանացիներէն յաղթուելով գերի ինկաւ, և Գաղիա եղաւ հանրապետութիւն։

Հ. Գաղիոյ բնակիչը և զօրքը ո՞րչափ են և երկիրն ի՞նչպէս կը բաժնուի։

Պ. Գաղիոյ բնակիչը 36,000,000 է։ Զօրքը 800,000 պատերազմի ժամանակ. Նաւատորմիղը՝ 470 նաւ 5,000 թնդանօթով։ Առաջ կը բաժնուէր Գաղիա 36 գաւառ, հիմա Տէբարթըման կոչուած 86 մաս կը բաժնուի։

---

## ԴԱՍ ԻԶ.

Հ. Գաղիոյ հիւսիսային կողման երեւելի քաղաքներն որո՞նք են։

Պ. Գաղիոյ հիւսիսային կողման երեւելի քաղաքներն են,

1. Բարիզ, մայրաքաղաք (1,850,000)։ Լոնտրայէ ետքը աշխարհիս հռչակաւորագոյն քաղաքն է։ Երեւելի շէնքերն են համալսարանը. թագաւորական գրատունը. բանթէոնն ուր են Վոլթերի և Ժան Ժագ Րուսոյի գե-

րեղմաններն. Լիւքսամպուրի պալատը. Ին-վալիտ կոչուած ծեր զինուորաց տունը որոյ փառաւոր եկեղեցւոյն մէջ է մեծին Նաբոլէոնի մարմինը. զինուորական դպրոցը. Պալէ Րոյալ, Թիւյլըրրի և Լուվր պալատներն: Երեւելի են՝ Շան տը Մարս, Շանզ Էլիզէ կոչուած տեղերը, Թիւյլըրրիի պարտէզը, Գոնգորտի և Վանտոմի հրապարակներն, որոյ առաջնոյն մէջ է Լուքսորի եգիպտական կոթողը: Բարիզի մէջ կան շատ երեւելի դպրոցներ, տպարաններ, թանգարաններ, պարտէզներ:

2. Սէն Տընի (26,000), Բարիզի մօտ, ուր են թագաւորաց գերեզմանք:

3. Վէրսայլ (44,000), հոս է Լուի ԺԴ. ի պալատը և պատկերաց թանգարան մը: Վիլհէլմ, (Կուլիէլմոս), Բրուսիոյ թագաւորն, 1870 ին հոս Գերմանիոյ կայսր օծուեցաւ:

4. Սէն Քլու, Փարիզէն 2 մղոն դէպ արեւմուտք: Այս տեղի պալատը Գաղիացիք այրեցին 1870 ին:

5. Օրլէան (49,000), ունի ասուի և բամբակի գործարաններ:

6. Անժէ (55,000), ունի կտաւի (քթանի) գործարաններ:

7. Թուր (43,000), ունի գինի և պտուղ:

8. Լը Ման (45,000), անուանի է կտաւեղէնի առուտուրով:

9. Ամիէն (61,000), երեւելի է մետաքսի գործարաններով:



10. Պուլօնեը (40,000), բերդաքաղաք և նաւահանգիստ. ունի ծովային բաղանիք:

11. Գալէ, ամուր նաւահանգիստ. ասկէ կ՚անցնուի Անգղիա իբր $1\,^1/_2$ ժամու մէջ:

12. Լիլ (155,000), բերդաքաղաք, արուեստից կողմանէ անուանի է:

13. Վալանսիէն (25,000), երեւելի է պաթիսթ կոչուած կտաւի և թանթէլաներու կողմանէ:

14. Տէնքերք (33,000), զինուորական և առեւտրական նաւահանգիստ:

15. Րուէն (101,000), ունի բամբակեղինաց երեւելի գործարաններ:

16. Լը Հավր (75,000), երեւելի նաւահանգիստ:

17. Շէրպուր (37,000), զինուորական ամուր նաւահանգիստ ունի:

18. Պրէսթ (80,000), Գաղիոյ երկրորդ զինուորական նաւահանգիստն է, կրնայ 500 պատերազմական նաւ առնուլ:

19. Րէնս (61,000), Գաղիոյ թագաւորներն այս քաղաքին եկեղեցին կ՚օծուէին:

20. Նոբօլէոն Վանտէ, առաջ Պուրպոն Վանտէ կ՚ըսուէր, Վանտէի ժողովուրդը նշանաւոր է ԺԶ. դարուն մէջ կրօնքի համար, և 1792 ին թագաւորական տան համար քաղաքական պատերազմներով:

21. Րոշֆոր (30,000), 4 մեծ զինուորական նաւահանգիստներէն մին:

## ԴԱՍ ԻԷ.

Հ. Գաղիոյ հարաւային կողման երեւելի քաղաքներն որո՞նք են ։

Պ. Գաղիոյ հարաւային կողման երեւելի քաղաքներն են,

1. Պօրտօ (194,000), երեւելի է գինւոյն համար ։

2. Պիարից, ունի ծովային բաղանիք և ձըկնորսութիւն ։

3. Թուլուզ (127,000), անուանի է երկաթեղէն գործուածներուն համար ։

4. Գարգասօն (22,000), հոս ասուի (չուխայ) կը գործուի ։

5. Մօնբէլիէ (55,000), ունի բժշկական ճեմարան ։

6. Նիմ (60,000), ունի մետաքսեղէնի և բամբակեղէնի գործարաններ ։

7. Մարսէյլ (300,000), այս քաղաքն հիմնեցին Յոյնք Քրիստոսէ 600 տարի առաջ ։ Գաղիոյ մեծագոյն ծովեզերեայ վաճառաշահ քաղաքն է ։

8. Թուլօն (77,000), զինուորական նաւահանգիստ ։

9. Ավինեօն (17,000), Պապերն 70 տարի հոս նստան ։

10. Լիօն (234,000), Գաղիոյ երկրորդ քաղաքն է Բարիզէն ետքը, և մետաքսեղինաց կողմանէ առաջին, որոց համար 90,000 գոր-



ծաւոր կ'աշխատին ։ Ոսկերչութեան գործուածներու կողմանէ եւս երեւելի է ։

11. Սէնթ Էթիէն (97,000), 40 գործարան ունի զինուց ։

12. Գրընօպլ (47,000), բերդաքաղաք. երեւելի գործարաններ ունի ։

13. Րէմս (61,000), ունի ասուի և բամբակի գործարաններ ։ Հոս կը շինուի նաեւ շամբանեա կոչուած գինին ։

14. Երեւելի են նաեւ Վիշի՝ ջերմուկներուն համար, և Սէտան՝ ուր Գերմանացւոց անձնատուր եղաւ Նաբոլէոն Գ. 84,000 զօրքով 1870, Սեպտեմբեր 2 ին ։

15. Գօրսիգա կղզին 260,000 բնակչօք. մայրաքաղաքն է Այաչչիօ ։ Հոս ծնաւ մեծն Նաբոլէոն ։

16. Նիս (50,000) և Շամպէրի (20,000), Նաբոլէոն Գ. Սաւոյայէն առաւ այս քաղաքներն 1860 ին, Իտալիոյ պատերազմէն ետքը ։

Հ. Եւրոպայէ դուրս Գաղիոյ երկիրներն որո՞նք են ։

Պ. Եւրոպայէ դուրս Գաղիոյ երկիրներն են,

Ա. Ափրիկէի մէջ՝ Ալճէրի, 3,800,000 բնակչօք ։ Այս երկիրն 1830 էն հետէ Գաղիոյ կը վերաբերի ։ Պուրպօն կղզին, Մատակասգար կղզւոյն վրայ տեղեր ։

Բ. Ասիոյ մէջ՝ Փօնտիշէրի, Շանտէռնակօր, և Քօշինշինի մէջ տեղեր ։

Դ. Ամերիկայի մէջ՝ Կույանա, և Մարթինիք ու Կուատըլուբ կղզիներն :

Դ. Ովկիանիոյ մէջ՝ Նոր Գալետոնիա (72,000) և Մարքիզեան ու Թահիթի կղզիներն :

---

## ԴԱՍ ԻԲ.

### 2. ՀԵԼՈՒԵՏԻԱ ԿԱՄ ԶՈՒԻՑԵՐԱ

Հ. Հելուետիոյ վրայ ի՞նչ պատմական գիտելիք կայ :

Պ. Հելուետիոյ մէջ կը բնակէին Կելտեր, որ նախ Հռոմայեցիներէն, ապա Ֆրանքներէն, և ապա Գերմանացիներէն նուաճուեցան : Հելուետիոյ տիրող գլխաւոր ցեղն եղաւ Հապսպուրկի կոմսերուն տունը : Առաջին անգամ 1291 ին երեք գաւառ ապստամբելով Հապսպուրկի տունէն եղան հանրապետութիւն : 1315 ին նոյն կոմսերուն դէմ պատերազմներէն ետքը՝ ուրիշ հինգ գաւառ յարեցաւ առջի երեքին, այնուհետեւ մինչեւ ԺԶ. դար ազատ գաւառներուն թիւն եղաւ 13, և այնպէս տեւեց մինչեւ Գաղիոյ մեծ յեղափոխութիւնը, 1798 : Այս դարուս մէջ ուրիշ 12 գաւառ ևս աւելցաւ մինչեւ 1833, այնպէս որ Հելուետիական հանրապետութիւնը կազմող և Քանթոն կոչուած գաւառաց թիւն է հիմա 25, և տէրութիւնը կը կոչուի Հէլվէթիքան Քօնֆէտէրասիօն կամ հասարակ անուամբ Զուիցերա :



Օրէնսդրական իշխանութիւնն և գլխաւոր պաշտօնեաներն ընտրելու իրաւունքը կը վերաբերի Դաշնակցական Ժողովին որ գաւառային երեսփոխաններէ կը բաղկանայ, իսկ գործադիր իշխանութիւնը կը վերաբերի Դաշնակցական Խորհուրդին որ 7 անդամէ կը բաղկանայ, և կը նստի Պեռն որ այս պատճառաւ դաշնակցութեան գլխաւոր քաղաքն համարուած է :

Հ. Հելուետիական դաշնակցութեան բնակիչը և զօրքը ո՞րչափ է, և գաւառներն քանի՞ ցեղ ժողովուրդներէ կը բաղկանան :

Պ. Հելուետիական դաշնակցութեան երկիրներուն բնակիչն է 2,700,000, զօրքը՝ 203,000, և գաւառները կը բաղկանան 3 սահմանակից ազգերու վերաբերեալ, այսինքն՝ Գերմանական, Գաղիական և Իտալական ժողովուրդներէ :

Հ. Հելուետիական դաշնակցութեան գըլխաւոր քաղաքներն որո՞նք են :

Պ. Հելուետիական դաշնակցութեան գըլխաւոր քաղաքներն են,

Գերմանական մասին մէջ՝

1. Պեռն (36,000), դաշնակցութեան քաղաքն է. ունի համալսարան : Մայր եկեղեցւոյ երգեհոնն անուանի է :

2. Պազէլ կամ Պալ (44,000), հարուստ և առաջին վաճառաշահ քաղաքն է Հելուետիոյ, ունի համալսարան և երեւելի տպարան :

3. Ցիւրիխ (20,000), ունի համալսարան, բազմարուեստեան դպրոց, երեւելի գործարաններ բամպակեղէնի և մետաքսեղէնի։

4. Լուցերն (12,000)։

5. Սէն Կալ (15,000), հոս է Սուրբ Կալլոս անուն անձէն հիմնուած վանքը որ երեւելի է։ Ունի բամպակեղէնի գործարաններ։

6. Շաֆհաուզէն (90,000), ասոր մօտ է Ռենոսի Լաուֆէն անուն ջրվէժը։

Գաղղիական և իտալական մասերուն մէջ՝

1. Ժընեւ (45,000), ունի համալսարան և երեւելի դպրոցներ։ Արուեստներու, մանաւանդ ժամացուցագործութեան մէջ անուանի է։

2. Լոզան (21,000)։

3. Նէօշաթէլ կամ Նայէնպուրկ (10,000), ունի ժամացուցի գործարաններ։

4. Ֆրէպուրկ (11,000)։

---

## ԴԱՍ ԻԹ.

### 3. ՀՈԼԱՆՏԱ

*Հ. Հոլանտայի վրայ ի՞նչ պատմական դիտելիք կայ։*

Պ. Քանի մը Գերմանական ցեղեր կը բնակէին այս երկիրն հին ատեն։ Թ. դարուն մէջ, երբ մեծին Կարոլոսի տէրութիւնը բաժնուեցաւ, Հոլանտա եղաւ Գերմանական դքսու-



թիւն և Կարոլոս Ե. էն ետքը, որ Գերմանիոյ միանգամայն Սպանիոյ թագաւոր էր, երբ Սպանիա զատ թագաւորութիւն եղաւ, Հոլանտա Սպանիոյ անցաւ, բայց Փիլիպպոս Բ. ի, Սպանիոյ թագաւորին բռնութիւններուն պատճառաւ 7 հոլանտական գաւառք ապստամբելով 1575 ին հաստատեցին հանրապետութիւն մը որ եղաւ մեծ ծովային տէրութիւն անուանի հարստութեամբ և վաճառականութեամբ, նաեւ գիտութեանց և գեղարուեստից կողմանէ։ Հոլանտացիք հաստատեցին 1602 ին Արեւելեան Հնդկաստանի ընկերութիւնը։ Բայց մօտ 'ի սկիզբն ԺԸ. դարուն, 1714 էն ետքը, Հոլանտա սկսաւ ծովային զօրութեան և վաճառականութեան կողմանէ տեղի տալ Անգղիոյ։ Մեծին Նաբոլէոնի ժամանակ 1806 Հոլանտա կորսնցուց նաեւ իւր անկախութիւնն և 1814 ին եղաւ թագաւորութիւն, բայց հարաւային հռոմէական կաթոլիկ և արուեստագէտ մասն հիւսիսային բողոքական և վաճառական մասէն ապստամբելով 1830 ին եղաւ զատ թագաւորութիւն որ կը կոչուի Բելգիա (Պէլճիգա)։

*Հ. Հոլանտայի բնակիչը և զօրքը որչափ է։*

Պ. Հոլանտայի բնակիչն է 3,800,000, զօրքը՝ 63,000, նաւատորմիղը՝ 122 նաւ 1245 թընդանօթով։ Թագաւորին իշխանութիւնը չափաւորեալ է երկու սենեակներէ բաղկացեալ ազգային ժողովով մը։

Հ. Հոլանտայի գլխաւոր քաղաքներն որո՞նք են։

Պ. Հոլանտայի գլխաւոր քաղաքներն են

1. Հաագ կամ Լա Հէ (100,000), մայրաքաղաք. ունի համալսարան։

2. Ամստերդամ (290,000), Եւրոպայի հարուստ և վաճառաշահ քաղաքներէն մին է։ Հիւսիսային ծովուն եզերքը Ամստէլ գետին բերանը շինուած է 90 կղզեակներու վրայ որ 292 կամուրջներով իրարու հետ կապուած են։

3. Ռոտտերդամ (136,000), վաճառաշահ քաղաք, մանաւանդ ցորենի և ծխախոտոյ։

4. Լէյտէն (40,000), ունի համալսարան։

5. Ուտրէխտ (61,000), ունի համալսարան։

6. Նիմվէկ (23,000), արուեստներով ծաղկեալ։

Հ. Ուրիշ ի՞նչ երկիր կը վերաբերի Հոլանտայի։

Պ. Հոլանտայի կը վերաբերի նաեւ Լիւքսեմպուրկի դքսութիւնը որ Գերմանիոյ մաս է Հոլանտայի իշխանութեան ներքեւ յատուկ սահմանադրութեամբ, ունի 200,000 բնակիչ։ Գլխաւոր քաղաքն է Լիւքսեմպուրկ (15,000) որոյ ամրութիւններն փլցնել տուաւ Նաբոլէոն Գ. 1867ին։

Հ. Եւրոպայէ դուրս Հոլանտայի երկիրներն որո՞նք են։

Պ. Եւրոպայէ դուրս Հոլանտայի երկիրներն են՝



1. Ասիոյ մէջ՝ Սումատրա և Ճավա 15 ½ միլիոն բնակչօք, և Մոլուքեան կղզիք։

2. Ափրիկէի մէջ՝ Սուրբ Գէորգ։

3. Ամերիկայի մէջ՝ Կուիանայի մէկ մասը (90,000) և փոքր Անդիլեան կղզիներէն Ս. Եւստաթէոս, Ս. Մարտինոս, Սապա և Քիւրասաօ։

---

## ԴԱՍ Լ.

### 4. ԲԵԼԳԻԱ

Հ. Բելգիոյ բնակիչը և զօրքը ո՞րչափ է։

Պ. Բելգիոյ բնակիչն է 5,000,000, զօրքը՝ 100,000, նաւատորմիղը՝ 10 նաւ 50 թնդանօթով։ Թագաւորին իշխանութիւնը չափաւորեալ է երկու սենեակներէ բաղկացեալ ազգային ժողովով։

Հ. Բելգիոյ գլխաւոր քաղաքներն որո՞նք են։

Պ. Բելգիոյ գլխաւոր քաղաքներն են,

1. Պրիւքսէլ (320,000), մայրաքաղաք է, արուեստիւք և վաճառականութեամբ ծաղկեալ։ Ասոր մօտ է Վաթէրլօ գեղն ուր Նաբոլէոն մեծ 1815ին յաղթուեցաւ։

2. Անվերս (150,000), բերդաքաղաք և նաւահանգիստ. ունի նաւարան։

3. Կանտ (126,000). Շէլտէ և Լայս գետերուն բերանն ուր 26 կղզիք կը ձեւանան որ 309 կամրջով իրարու հետ կապուած են։ Ունի

համալսարան, բամբակեղէնի գործարաններ և տպարաններ։

4. Պրուժ (50,000), ունի կտաւի, դամասքոյի և դանդէլայի գործարաններ։

5. Օստէնտէ (17,000). ունի ծովային բաղնիք։

6. Մոնս կամ Պէրկէն (23,000), բերդաքաղաք արուեստից կողմանէ անուանի։

7. Լէէժ կամ Լիւտտիխ (115,000), ունի պողպատի և երկաթի գործարաններ, թնդանօթի ձուլարաններ. գլխաւոր առուտուրն է հանքածուխ։

8. Նամիւր (27,000), բերդաքաղաք։

9. Լուվէն (33,000), ունի համալսարան։

## ԴԱՍ ԼԱ.

### 5. ԳԵՐՄԱՆԻԱ

Հ. Գերմանիոյ վրայ ի՞նչ պատմական գիտելիք կայ։

Պ. Գերմանական ազգը կը սկսի յիշուիլ պատմութեան մէջ Քրիստոսէ իբր դար մը առաջ։ Յամի Տեառն 843ին, երբ մեծին Կարոլոսի կայսրութիւնը բաժնուեցաւ որդւոցը, Գերմանիա զատ թագաւորութիւն եղաւ։ 911էն ետքը Գերմանիոյ թագաւորներն Հռոմի Պապերէն պսակուելով կը կոչուէին կայսր, և գերմանական թագաւորութիւնը կոչուեցաւ



«Սուրբ Հռոմէական կայսրութիւն»։ Գերմանիոյ կայսերք մինչեւ մեծն Նափոլէոն «Հռոմէական կայսր» տիտղոսը կրեցին։ 1815ին կազմուեցաւ «Գերմանական դաշնակցութիւնը» որ 39 մեծ և փոքր տէրութիւններէ կը բաղկանար, որոց մէջ գլխաւոր էին Աւստրիա և Բրուսիա։ Շլէզուիկ Հոլշդայնի պատճառաւ այս երկու մեծ գերմանական տէրութիւններն չկրցան իրենց մէջ միաբանել և 1866ին ծագեցաւ Աւստրօ-Բրուսիական պատերազմը։ Բրուսիա յաղթեց, և հիւսիսային Գերմանիոյ փոքր տէրութեանց մէկ մասը միացուց իրեն հետ, միացածներուն հետ դաշնակցութիւն մը կազմեց, որ կոչուեցաւ «Հիւսիսային գերմանական դաշնակցութիւն», իսկ հարաւային Գերմանիոյ տէրութիւնք, Պաւիէրա, Վիւրթէմպէրկ, Պատըն և Հէս, կազմեցին ուրիշ դաշնակցութիւն մը որ կոչուեցաւ «Հարաւային դաշնակցութիւն»։ 1866ին և 67ին Բրուսիա առանձին դաշամբ իրեն հետ կապեց նաեւ վերոյիշեալ հարաւային տէրութիւններն, այնպէս որ երբ 1870ին Ֆրանգօ-Գերմանական պատերազմը ծագեցաւ, արդէն բոլոր Գերմանիա, բաց յԱւստրիոյ, ներքուստ կապուած էին իրարու հետ։ Այս պատերազմէն ետքը, 1871 յունուար 17ին, բոլոր գերմանական տէրութիւններն Բրուսիոյ Կուլիէլմոս (Վիլհէլմ) թագաւորն ընդհանուր Գերմանիոյ ժառանգական կայսր ընտրեցին,

և այսպէս բոլոր Գերմանիա եղաւ այլ եւ այլ տէրութիւններէ բաղկացեալ կայսրութիւն մը :

Հ. Գերմանիոյ կայսրութեան մէջ քանի՞ տէրութիւն կայ :

Պ. Գերմանիոյ կայսրութեան մէջ 25 տէրութիւն կայ, որոց գլխաւորներն են չորս թագաւորութիւնք, 1. Բրուսիա, 2. Պաւիէրա, 3. Սաքսոնիա և 4. Վիւրթէմպէրկ, և 5. Պատընի ու 6. Հէսի մեծ դքսութիւններն, և 7. Ալսաս ու Լորէնի գաւառները :

## ԴԱՍ ԼԲ.

### 1. ԲՐՈՒՍԻԱ

Հ. Բրուսիոյ բնակիչներն որչափ են, գըլխաւոր քաղաքներն որո՞նք են :

Պ. Բրուսիոյ բնակիչներն են 25 1/2 միլիոն, և գլխաւոր քաղաքներն են,

1. Պէրլին, մայրաքաղաք (950,000), գեղեցիկ և կանոնաւոր կերպով շինուած : Ունի երեւելի համալսարան, դպրոցներ, հրապարակներ, հոյակապ շէնքեր, եկեղեցիներ, պարտէզներ : Պէրլին առուտուրի, արուեստներու և դրամական գործողութեանց կողմանէ Եւրոպիոյ երկրորդ կարգի քաղաքներէն մին է :

2. Բոցտամ (43,000), երկրորդ արքայանիստ քաղաք : Ունի գեղեցիկ պալատ մը :



3. Պրանտէնպուրկ (26,000) :

4. Շարլօտթէնպուրկ (15,000), հոս է Կուլիէլմոս Գ.ի շիրիմը :

5. Պրէսլաւ (240,000), ունի համալսարան :

6. Մակտէպուրկ (40,000) : Շնչելոյզ մեքենան հոս հնարուեցաւ 1654ին :

7. Շէօնէպէք, երեւելի աղահանք ունի որմէ տարին 800,000 կենդինար աղ կ'ելլէ :

8. Հալլէ (49,000), ունի երեւելի համալսարան :

9. Մէնսթէր (25,000), հոս հռոմէականք ունին աստուածաբանական և փիլիսոփայական ճեմարան: Հոս կնքուեցաւ 1648ին Վեստֆալեան դաշինքը :

10. Քէօլն (Քոլոնիա) (125,000) Ռէնոսի վրայ. ունի երեւելի եկեղեցի մը : Ռուպէնս անուանի պատկերահանն հոս ծնաւ :

11. Սոլէնկէն (13,000), երկաթէ և պողպատէ գործուածներուն համար անուանի է :

12. Աախէն (68,000), Կարոլոս մեծին քաղաքն էր, ուր է նաեւ անոր մարմինը : Գերմանիոյ կայսերք հոս կը պսակուէին :

13. Քէօնիկսպէրկ (120,000), ունի համալսարան. հոս ծնաւ Քանթ անուանի Գերմանացի փիլիսոփան :

14. Տանցիկ (95,000), երեւելի է ծովային վաճառականութեամբ : Հոս ծնաւ Ֆարէնհայդ բնագէտը :

15. Ֆրանքֆորթ Մայն գետին վրայ (78,000):

Դրամական մեծ գործեր կ՚ըլլան հոս ։ Գերմանիոյ հին կայսերք հոս կ՚ընտրուէին ։

16· Շլէզվիկ (13,000) ։

17· Կասսէլ (42,000) · ասոր մօտ է Վիլհէլմսհէօհէ կոչուած տեղն ուր Նաբոլէոն Գ. գերուեցաւ՝ Գերմանացւոց անձնատուր ըլլալէն ետքը ։

18· Հաննովէր (100,000) · հոս է Լայպնից փիլիսոփային բնակարանը ։ Հոս ծնաւ Հէրշէլ երեւելի աստեղագէտը ։

# ԴԱՍ ԼԳ·

## 2· ՊԱՒԻԷՐԱ

Հ· Պաւիէրայի բնակիչներն ո՞րչափ են ։

Պ· Պաւիէրայի բնակիչներն են 5,000,000 ։

Հ· Պաւիէրայի գլխաւոր քաղաքներն ո՞րո՞նք են ։

Պ· Պաւիէրայի գլխաւոր քաղաքներն են,

1· Միւնիխ կամ Միւնխէն (170,000) · մայրաքաղաք ։ Ունի համալսարան, ճարտարապետութեան այլ և այլ տեսակներուն համեմատ շինուած հոյակապ եկեղեցիներ, պատկերներու և արձաններու թանգարաններ և պալատներ ։

2· Աուկսպուրկ (50,000) · հոս կը հրատարակուի Գերմանիոյ երեւելի լրագիրն որ կը կոչուի «Ընդհանուր լրագիր» ։



3· Ռէգէնսպուրկ (30,000), հոս է Վալհալլա կոչուած մարմարիոնէ տաճարը ուր կան անուանի Գերմանացւոց կիսարձանները ։ Հոս ծնած է Քէփլէր աստեղագէտը ։

4· Նիւրէնպէրկ (90,000) · անուանի է այլ և այլ տեսակ ձեռագործներու, մանաւանդ տղայոց խաղալիկներու կողմանէ ։

5· Սփէյէր (15,000), Գերմանիոյ կայսերաց գերեզմանն հոս էր ։

6· Վիւրցպուրկ (41,000), հոս է Հռոմէական անուանի համալսարանը ։

## 3· ՍԱՔՍՈՆԻԱ

Հ· Սաքսոնիոյ բնակիչներն ո՞րչափ են ։

Պ· Սաքսոնիոյ բնակիչներն են 2,500,000 ։

Հ· Սաքսոնիոյ գլխաւոր քաղաքներն ո՞րո՞նք են ։

Պ· Սաքսոնիոյ գլխաւոր քաղաքներն են,

1· Տրէզտըն (156,000) · ունի երեւելի կամուրջ Էլպա գետին վրայ 720 կանգուն երկայն և 18 կանգուն լայն · պատկերաց, հնութեանց, պատմութեան և ուրիշ թանգարաններ, երեւելի պալատ մը «Ճապոնեան պալատ» կոչուած ուր կայ հարուստ մատենադարան մը ։ Ընտիր թանգարաններուն համար կը կոչուի «Գերմանիոյ Ֆլօրէնցան» ։

2· Լայփցիկ կամ Լէյփցիկ (91,000), մէկ ու կէս ժամ հեռաւորութեան մէջ 23 գիւղ ունի

քոլորտիքը՝ 52,000 բնակչօք․ համալսարան մը, երեք մեծ տօնավաճառ ։ Տպարաններն և գրոց առուտուրն երեւելի են ։ Հոս ծնաւ Լայպնից փիլիսոփան ։

3․ Ֆրայպուրկ (20,000) ․ ունի արծաթի հանք։

## ԴԱՍ ԼԴ․

### 4․ ՎԻՒՐԹԷՄՊԷՐԿ

Հ․ Վիւրթէմպէրկի բնակիչներն որչափ են ։

Պ․ Վիւրթէմպէրկի բնակիչներն են 1,800,000

Հ․ Վիւրթէմպէրկի երեւելի քաղաքներն ո՞րո՞նք են ։

Պ․ Վիւրթէմպէրկի երեւելի քաղաքներն են

1․ Շտուտկարտ (76,000), մայրաքաղաք է ։ Ինչպէս Լայբցիկ և Պէրլին, այնպէս հոս երեւելի է գրոց առուտուրն ։

2․ Թիւպինկէն (9,000) ․ ունի համալսարան ։

3․ Ուլմ (23,000), Դանուբի վրայ ամուր քաղաք է ։

### 5․ ՊԱՏԷՆ

Հ․ Պատէնի բնակիչներն որչափ են ։

Պ․ Պատէնի մեծ դքսութեան բնակիչներն են 1,500,000 ։

Հ․ Պատէնի գլխաւոր քաղաքներն ո՞րո՞նք են ։



Պ․ Պատէնի գլխաւոր քաղաքներն են,

1․ Գոստանց (9,000) ․ հոս է մեծ դուքսին ամարանոցը ։

2․ Պատէն–Պատէն (9,000), ունի երեւելի ջերմուկներ ։

3․ Գարլսրուհէ (32,000), մայրաքաղաք ․ փողոցներուն և շէնքերուն կանոնաւորութեան և գեղեցկութեան կողմանէ անուանի ։ Այս քաղաքը շինուեցաւ 1715 ին ։

4․ Մանհայմ (34,000) ․ ունի դպրոցներ և դիտարան ։

5․ Հայտէլպէրկ (18,000), անուանի են համալսարանը և դպրոցներն ։

## ԴԱՍ ԼԵ․

### 6․ ՀԷՍ

Հ․ Հէսի մեծ դքսութեան բնակիչներն որչափ են ։

Պ․ Հէսի մեծ դքսութեան բնակիչներն են 880,000 ։

Հ․ Հէսի գլխաւոր քաղաքներն ո՞րո՞նք են ։

Պ Հէսի գլխաւոր քաղաքներն են,

1․ Դարմշտատ, մայրաքաղաք ։

2․ Մայնց (43,000) ․ հոս կայ տպագրութիւնը հնարող Կուդդէմպէրկի անդրին ։

3․ Վորմս (13,000) ։

Հ․ Գերմանիոյ ուրիշ երեւելի քաղաքներն ո՞րո՞նք են ։

Պ. Գերմանիոյ ուրիշ երեւելի քաղաքներն են, Վայմար (15,000), այս քաղաքէն էին Շիլլէր, Կէօթէ և Հէրտէր երեւելի մատենագիրք: Եէնա, ունի համալսարան: Գօպուրկ (11,000): Կօթա (19,000): Համպուրկ (225,000), Եւրոպայի երեւելի նաւահանգիստներէն մին. առուտուրի կողմանէ Լոնտրայի և Լիվրբուլի կը մօտենայ:

7. ԱԼՍԱՍ ԵՒ ԼՈՐԷՆ

Հ. Այս գաւառներուն բնակիչը ո՞րչափ է:

Պ. Այս գաւառներուն բնակչաց թիւն է 1,700,000:

Հ. Այս գաւառներուն գլխաւոր քաղաքներն ո՞րնք են:

Պ. Այս գաւառներուն գլխաւոր քաղաքներն են,

1. Սդրասպուրկ (84,000), ունի երեւելի եկեղեցի մը, համալսարան, գործարաններ: Այս քաղաքը 1681, սեպտ. 28 և 30 ին առին Գաղղիացիք, և 1870, դարձեալ սեպտ. 28 և 30 ին նորէն անցաւ Գերմանացւոց:

2. Մարքիրխ (12,000), անուանի է բամբակի գործուածներուն համար. 40 հազար գործաւոր կ'աշխատին այս գործին մէջ:

3. Քօլմար (24,000), առուտուրներու կողմանէ անուանի:

4. Միւլհաուզէն (59,000), բամբակի գործ-



ուածներուն համար անուանի. 60 հազար գործաւոր կ'աշխատին այս գործին մէջ:

5. Մէց (55,000). հոս 1872, հոկտ. 27 ին Պազէն գաղղիացի զօրապետն անձնատուր եղաւ Գերմանացւոց 173 հազար զօրքով որոց մէջ կային 3 մարաջախտ և 6 հազար պաշտօնակալ:

## ԴԱՍ ԼԶ.

9. ԱՒՍՏՐՈՅ-ՈՒՆԿԱՐԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆ

Հ. Աւստրիոյ վրայ ի՞նչ պատմական գիտելիք կայ:

Պ. Աւստրիա հին ատենը Գերմանիոյ մէջ դքսութիւն էր: Ի վերջ կոյս ԺԳ. դարուն Զուիցերայի մէջ Հապսպուրկի կոմսութեան իշխանը Ռուտոլֆ զԱւստրիա Հապսպուրկի հետ միացուց, և եղաւ կայսր Գերմանիոյ: Անկէ ետքը Գերմանիոյ կայսերք եղան Հապսպուրկ-Աւստրիոյ տունէն: 1806 ին Փրանկիսկոս Ա. հրաժարելով Գերմանիոյ կայսր տիտղոսէն՝ սկսաւ կոչուիլ Աւստրիոյ կայսր: Աւստրիոյ կայսրութիւնը քանի մը տարիէ հետէ սկսաւ կոչուիլ Աւստրոյ-Ունկարական կայսրութիւն: կայսրը նոյն Հապսպուրկ-Աւստրիոյ տունէն է:

Հ. Աւստրոյ-Ունկարական կայսրութեան երկիրներն ո՞րնք են:

Պ. Հապսպուրկի տունէն գերմանական կայ-

սերք առաջ շատ երկիրներ ունէին Եւրոպայի մէջ, բայց անոնց մեծ մասը կորուսին։ Աւստրիոյ այժմու երկիրներն են,

1. Աւստրիա և Սալցպուրկ որ դքսութիւն են և ժողովուրդը Գերմանացի. գլխաւր քաղաք՝ Վիէննա։

2. Ստիրիա կամ Իստրիա, ժողովուրդը Սլաւոն և Իտալացի. գլխաւոր քաղաք՝ Կրաց։

3. Իլլիրիա կամ Լէոբէնէ, ժողովուրդը մեծաւ մասամբ Սլաւոն. գլխաւոր քաղաք՝ Թրիեստ։

4. Թիրոլ, ժողովուրդը Գերմանացի և Իտալացի. գլխաւոր քաղաք՝ Ինսպրուք։

5. Պոհեմիա, Մորաւիա և Սիլեզիա, ժողովուրդը մեծաւ մասամբ Սլաւ. գլխաւոր քաղաք՝ Բրահա և Պրիւն։

6. Ունկարիոյ թագաւորութիւնը, ժողովուրդը Ունկարացի. գլխաւոր քաղաք՝ Փեշթ։

7. Թրանսիլվանիա (Սիպէնպիւրկէն), ժողովուրդը խառն, Գերմանացի և Ունկարացի. գլխաւոր քաղաք՝ Հերմանշտատ։

8. Սլաւոնիա, Խրուաթիա, և Զինուորական սահմանները, ինչպէս նաեւ Պոսնիա և Հերցեկովին կոչուած գաւառներն որ Թուրքիոյ սահմանակից են։ Այս գաւառներուն ժողովուրդն ևս Սլաւ է։

9. Դալմաթիա (Տալմացիա). ժողովուրդն է Սլաւ. գլխաւոր քաղաք՝ Զարա։

10. Կալիցիա ժողովուրդը Լեհացի (Լեհ). գլխաւոր քաղաք՝ Լեմպերկ։



11. Պուքովինա, ժողովուրդը խառն։

Հ. Աւստրիոյ կայսրութեան բնակիչը որչափ է։

Պ. Աւստրիոյ բնակչաց թիւն է 37 միլիոն. 9 միլիոնը Գերմանացի է, Մացեառներն մեծաւ մասամբ Սլաւ, Ունկարացի, և քիչ մը Հայ, Հրեայ և Գնչու։

Հ. Այս ժողովրդոց մէջ քանի՞ տեսակ կրօնք կամ դաւանութիւն կայ։

Պ. 29 միլիոն Հռոմէական կաթոլիկ.

3 1/2 » Յոյն և Հայ (ոչ հռոմէական).

3 » Բողոքական (մեծաւ մասամբ Ունկարիոյ մէջ)

1 » Հրեայ։

## ԴԱՍ ԼԵ.

Հ. Աւստրիոյ կայսրութեան գլխաւոր քաղաքներն որո՞նք են։

Պ. Աւստրիոյ կայսրութեան գլխաւոր քաղաքներն են,

1. Վիէննա կամ Վիէննա (850,000). կայսրութեան մայրաքաղաքն է, ունի անուանի սեղանաւորներ, ծաղկեալ վաճառականութիւն, ամէն տեսակ երեւելի գործարաններ, գեղեցիկ պարտէզներ որոց մէջ հռչակաւոր են Շէօնպրուն և Լիւքսէնպուրկ կոչուած կայսերական պարտէզներն։ Ունի համալսարան։

վիէննա ամէն տեսակ գիտնական, զինուորական և արուեստական հաստատութեանց կողմանէ Եւրոպայի երեւելի մայրաքաղաքաց մին է. երկու անգամ, 1529 և 1683, պաշարուած է Օսմանցիներէն ։

2. Պատէն, ունի ծծմբային ջերմուկներ, ուր հին ատենը Հռոմայեցիք յաճախ կ'երթային ։

3. Սալցպուրկ (20,000), իտալական ոճով շինուած գեղեցիկ շէնքերուն համար «Գերմանական Հռոմ» կոչուած է ։

4. Կրաց (80,000), ունի համալսարան, շատ գործարաններ ։

5. Լայպախ (23,000) ։ Լինց (31,000) ։

6. Ատէլսպէրկ, անուանի է քարացեալ ջրոյ կաթիլներէ գոյացեալ սիւներով անձաւներուն և ստորերկրեայ ջուրերուն համար ։

7. Թրիէսդ (190,000), ազատ նաւահանգիստ Ադրիական ծովուն եզերքը, առուտուրը ծաղկեալ ։

8. Տրիէնդ (17.000), ուր եղած է արեւմտեան եկեղեցւոյ ընդհանուր ժողովը լուտերականութեան դէմ ։

9. Բրակա (170,000), Պոհեմիոյ մայրաքաղաքն է. Գերմանիոյ մէջ առաջին անգամ համալսարան հոս հաստատուեցաւ 1348 ին ։

Պոհեմիա ունի յախճապակւոյ, ապակեղէնաց և կտաւեղինաց երեւելի գործարաններ ։

10. Պրիւն (73,000), Մորաւիոյ մայրաքաղաքն է. ունի բամբակեղինաց, մորթեղինաց և շաքարի գործարաններ ։



Մորաւիոյ մէջ այս տեսակ գործարաններ շատ կան ։

11. Աւսդէրլից, հոս եղած է 1805 ին մեծին Նաբոլէոնի դէմ անուանի պատերազմն ուր երեք կայսերք ներկայ էին ։

## ԴԱՍ ԼԸ.

12. Պուտա, Գերմաներէն Օֆէն (55,000), Դանուբի աջակողմեան եզերքը, Ունկարական կառավարութեան նիստն է ։

13. Բէշդ (270,000), Դանուբի ձախակողմեան եզերքը, Պուտայի դիմացը որուն հետ կամրջով մը կապուած է. ունի համալսարան ։

14. Բրէսպուրկ (47,000), Վիէննայի և Պուտայի մէջտեղ ։

15. Շդուհլվայսէնպուրկ, հին Ունկարացի թագաւորք հոս կը պսակուէին և կը թաղուէին ։

16. Կրան, Ունկարիոյ եպիսկոպոսանիստ քաղաքն է ։

17. Տէպրէցին (44,000), հին ունկարացի ոճով շինուած քաղաք է, տուներն իրարմէ բաց և միայարկ ։

18. Թոքայ, Ունկարիոյ ազնուագոյն գինին հոս կ'ելլէ ։

19. Քրէմնից և Շէմնից (15,000), ունին ոսկւոյ և արծաթի հանքեր ։

20. Քլաւզէնպուրկ (25,000), Քրոնշդադ (128,000) և Հէրմանշդադ (19,000) Թրանսիլուանիոյ գլխաւոր քաղաքներն են։

21. Ակրամ (21,000), Խռուաթիոյ մայրաքաղաքն է։

22. Ֆիումէ (19,000), ծովեզերեայ քաղաք վաճառաշահ։

23. Լայպախ (17,000), Սլաւոնիոյ մայրաքաղաքն է։

24. Զառա (18,000) Դալմատիոյ մայրաքաղաքը։

25. Սբալադրօ, Րակուզա, Գադդարօ։

26. Քրաքով կամ Քրաքովիա (50,000), Բոլոնիոյ երեւելի քաղաքներէն մին, ունի համալսարան։

27. Լեմպերկ (87,000. 30 հազարն՝ Հրեայ). ունի համալսարան։

28. Չեռնից (14,000), Բեդերվարատին (7,000). զինուորական սահմանաց գլխաւոր քաղաքներն են։

29. Պոսնասերայ (60,000), Դրավնիք (12,000) Զվորնիք (10,000), Պանեալուքա (10,000), Բոդկորէցա, Անդէարէ։

Այս քաղաքներն կը վերաբերին Պոսնիոյ, որ վերջին Ռուսական պատերազմէն ետքը անցաւ Աւստրիոյ, ինչպէս նաեւ Հերցեկովինի, որոյ գլխաւոր քաղաքն է Մոսդար (18,000), որ ունի անուանի կամուրջ քարաշէն։

Հ. Աւստրիա ի՞նչ տեսակ կառավարութիւն է։



Պ. Աւստրիա մինչեւ 1867 բացարձակ միապետութիւն էր, այսինքն օրէնսդիր և գործադիր իշխանութիւնը կայսեր միայն ձեռքն էր։ 1867 ին եղաւ սահմանադրական միապետութիւն։ Հիմայ կայսեր իշխանութիւնը չափաւորեալ է երկու ազգային ժողովներով, որոց մին Րայխսրաթ՝ Գերմանոյ-Սլաւական երկիրներուն համար է, միւսը Րայխսդագ՝ Ունկարիոյ համար։ Իւրաքանչիւր գաւառ երեսփոխան կը ղրկէ ազգային ժողովներուն. ասոնք կայսեր հետ մէկտեղ օրէնք կը դնեն և ընդհանուր գործերը կը հոգան. առանձին գործերու համար իւրաքանչիւր գաւառ Լա՛նդդագ կոչուած գաւառային ժողով ունի։

Հ. Աւստրիոյ զինուորական զօրութիւնը ո՞րչափ է։

Պ. Ցամաքային զօրքը 300 հազար է խաղաղութեան ատեն, պատերազմի ատեն 900 հազար. ծովային զօրքը խաղաղութեան ատեն 5 հազար, պատերազմի ատեն 15 հազար։ Նաւատորմիղը կը բաղկանայ 44 շոգենաւէ որոնց 7 ը զրահաւոր է, և 24 ը առագաստաւոր, աւելի քան 486 թնդանօթով։ Առեւտրական նաւերուն թիւը 7,853 է։

# ԴԱՍ ԼԹ.

## Գ. ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԵՒՐՈՊԱ

### 10. ՍԿԱՆՏԻՆԱՒԵԱՆ ՑԱՄԱՔԱԿՂԶԻ

Հ. Սկանտինաւեան ցամաքակղզին քանի՞ տէրութիւն կը պարունակէ :

Պ. Սկանտինաւեան ցամաքակղզին կը պարունակէ երկու տէրութիւն, Շուէտ և Նորուէկիա :

Հ. Այս ցամաքակղզւոյն վրայ ի՞նչ պատմական տեղեկութիւն կայ.

Պ. Հին աւանդութեան մը նայելով Օտին անուն մէկը Տոն (Տանայիս) գետին կողմերէն գաղթականութիւն մը բերաւ հոս : Օտին իր մահուանէն ետքը իբրեւ աստուած պաշտուեցաւ, բայց անոր յաջորդներուն ժամանակ երկիրը բաժնուեցաւ այլեւայլ թագաւորութեանց որ Թ. դարուն մէջ միանալով եղան երեք թագաւորութիւն՝ Շուէտ, Նորուեկիա և Դանիա (Տանիմարքա) : Ասոնցմէ էր Նորման կոչուած ծովագնաց ժողովուրդը որ շատ երկիրներու տիրեց, գլխաւորապէս Անգղիոյ, Գաղիոյ հիւսիսային մասին և Սիկիլիոյ : 1397 ին յիշեալ երեք տէրութիւնները միանալով մէկ թագաւորութիւն եղան. այս միութիւնը կը կոչուի «Քալմարեան միութիւն» : 1520 ին Շուէտ բաժնուելով զատ թագաւո-



րութիւն եղաւ և շատ զօրացաւ : Գուստաւ Վազա, Գուստաւ Ադոլֆ և Կարոլոս ԺԲ. Շուէտի երեւելի թագաւորներն են : 1709 էն ետքը Շուէտ կորոյս իր մեծութիւնը : 1814 ին Շուէտ և Նորուեկիա միանալով մէկ թագաւորութիւն եղան, թէպէտ երկուքն ալ իրենց առանձին սահմանադրութիւնն ունին :

Հ. Շուէտի և Նորուեկիոյ բնակիչն և զինուորական զօրութիւնն ո՞րչափ են :

Պ. Շուէտի և Նորուեկիոյ բնակչաց թիւն է իբր 6 ½ միլիոն, զօրքը՝ 165 հազար, նաւատորմիղը կը բաղկանայ 17 շոգենաւէ, 31 առագաստաւոր նաւէ, և 144 ուրիշ նաւերէ, ամէնը 660 թնդանօթով :

Հ. Շուէտի գլխաւոր քաղաքներն որո՞նք են։

Պ. Շուէտի գլխաւոր քաղաքներն են,

1. Ստոքհոլմ (160,000), մայրաքաղաք է :

2. Ուբսալա (11,000), եպիսկոպոսանիստ. ունի համալսարան :

3. Կէլֆ (13,000), Քալմար (9,000) :

4. Քարլսքրոնա (18,000), զինուորական նաւահանգիստ :

5. Կոթթէնպուրկ (55,000) :

Հ. Նորուեկիոյ երեւելի քաղաքներն որո՞նք են :

Պ. Նորուեկիոյ երեւելի քաղաքներն են,

Քրիստիանիա (75,000), մայրաքաղաք : Տրամ-մէն (14,000) : Պէրկէն (30,000) : Տրոնթհայմ (19,000):

## ԴԱՍ Խ.

### 11. ԴԱՆԻԱ ԿԱՄ ՏԱՆԻՄԱՐՔԱ

*Հ. Տանիմարքայի վրայ ի՞նչ պատմական գիտելիք կայ ։*

Պ. *Տանիմարքայի ժողովուրդը տասներորդ դարէն առաջ հենութեամբ և աւազակութեամբ կ'ապրէր ։ Տասներորդ դարուն սկիզբը թագաւորութիւն եղաւ ։ Այնուհետեւ Տանիմարքացիք զօրանալով շատ տեղերու, գլխաւորապէս Անգղիոյ տիրեցին ։* 1397 *ին Տանիմարքա Շուէտի հետ միացաւ,* 1523 *ին բաժնուելով զատ թագաւորութիւն եղաւ, բայց տկարացաւ և հետզհետէ շատ տեղեր կորսնցուց ։* 1863 *ին Գերմանացիք առին Տանիմարքացւոց ձեռքէն նաեւ Շլեզուիկ–Հոլշթայնի դքսութիւնը որ բուն Գերմանիոյ մաս էր ։* 1849 *էն 'ի վեր Տանիմարքա եղաւ Սահմանադրական թագաւորութիւն ։*

*Հ. Տանիմարքայի բնակիչն և զօրքն ո՞րչափ են ։*

Պ. *Տանիմարքայի բնակիչն է իբր* 1,800,000, *զօրքը՝* 53,000, *նաւատորմիղը կը բաղկանայ* 88 *նաւէ* 312 *թնդանօթով,* 30 *ը շոգենաւ,* 6 *ը զրահաւոր ։*

*Հ. Տանիմարքայի գլխաւոր քաղաքներն որո՞նք են ։*

Պ. *Տանիմարքայի գլխաւոր քաղաքներն են,*



*Copenhague* (197,000), *մայրաքաղաք Սէէլանտ կղզւոյն վրայ ։ Ունի համալսարան և նաւարան ։ Odense* (17,000) ։

*Տանիմարքա մեծաւ մասամբ կղզիներէ կը բաղկանայ ։ Ցամաքային մասն որ թերակղզի է՝ կը կոչուի Jutland ։*

*Տանիմարքայի կը վերաբերին Féroé կոչուած կղզեաց խումբը Սկովտիոյ հիւսիսային դին, և Islande կղզին* (58,000) *որոյ գլխաւոր քաղաքն է Reykjavik ։*

*Հ. Տանիմարքա Եւրոպայէն դուրս ի՞նչ երկիրներ ունի ։*

Պ. *Տանիմարքա ունի Ամերիկայի մէջ Groenland, և Անդիլեան կղզիներուն մէջ քանի մը փոքր կղզիներ ։*

## ԴԱՍ ԽԱ.

### 12. ՄԵԾՆ ԲՐԻՏԱՆԻԱ

Պ. *Մեծին Բրիտանիոյ վրայ ի՞նչ պատմական գիտելիք կայ ։*

Պ. *Բրիտանիա հին ատենը վայրենի երկիր էր. քրիստոնէական թուականէն առաջ Հռոմայեցիք տիրեցին անոր ։ Հռոմայեցւոց տէրութիւնը կործանելէն ետքը, Ե. դարուն մէջ Գերմանիայէն Անկլօ–Սաքսոններն Անգղիա գալով քանի մը թագաւորութիւններ հաստատեցին, որ յետոյ միանալով եղան մի թա-*

գաւորութիւն, որ կոչուեցաւ Անգղիոյ Թագաւորութիւն։ Անգղիացիք 1171 ին տիրեցին Իրլանտայի, 1603 ին Սկովտիոյ, և այս երեք երկիրները կոչուեցան Միացեալ Թագաւորութիւն Մեծին Բրիտանիոյ։ Անցեալ դարուն սկիզբէն Բրիտանիա սկսաւ զօրանալ։ Աշխարհիս գրեթէ ամէն մասերուն մէջ ունի հիմա հարուստ և մեծամեծ երկիրներ, և առաջին ծովային տէրութիւն կը համարուի։

Հ. Բրիտանիոյ բնակիչն և զօրքը ո՞րչափ են։

Պ. Մեծին Բրիտանիոյ բնակիչն է 33,000,000. եթէ Եւրոպայէ դուրս երկիրներն ալ մէկտեղ հաշուենք, տէրութեան բոլոր բնակչաց թիւն կը հասնի 200 միլիոնի։ Զինուորական զօրութիւնը մեծաւ մասամբ ծովային է. Նաւատորմիղը կը բաղկանայ 409 նաւէ 60 հազար ծովային զօրքով. Նաւերուն 51 ը զրահաւոր է։

Հ. Մեծն Բրիտանիա ի՞նչ տեսակ կառավարութիւն է։

Պ. Մեծն Բրիտանիա Սահմանադրական կառավարութիւն է, օրէնսդիր իշխանութիւնը Բարլամէնդ կոչուած ընդհանուր ժողովին ձեռքն է որ հաուս կոչուած երկու խորհրդարաններէ կը բաղկանայ, այսինքն՝ Լորտերուն (ազնուականներուն) խորհրդարանէն և ժողովրդեան կողմէն ընտրուած Քօմմօններու խորհրդարանէն։

Հ. Մեծն Բրիտանիա ի՞նչպէս կը բաժնուի։

Պ. Մեծն Բրիտանիա կը բաղկանայ երեք



թագաւորութենէ, որ են Անգլիա Վալէսի կամ Կալլի դքսութեամբ, Սկովտիա և Իրլանտա։

---

## ԴԱՍ ԽԲ.

Հ. Անգղիոյ գլխաւոր քաղաքներն որո՞նք են։

Պ. Անգղիոյ գլխաւոր քաղաքներն են,

1. Լոնտոն կամ Լոնտրա (3,500,000), մայրաքաղաք Թամիզ գետոյն վրայ։ Բազմամարդութեան, հարստութեան, մեծագործութեան և մանաւանդ առևտրական և սեղանաւորական գործողութեանց կողմանէ աշխարհիս առաջին քաղաքն է։ Երեք գլխաւոր մաս կը բաժնուի։

Ա. Վաճառականաց թաղը (Սիթի), հոս է դրամատունը (պանգան)։

Բ. Ազնուականաց թաղը (Ուէսդմինսդէր) կըրօսնէր Սթրանտ կոչուած գեղեցիկ հրապարակով։

Գ. Արհեստաւորաց թաղը։

Երևելի շէնքերն են Ս. Պօղոսի եկեղեցին, Ուէսդմինսդէրի եկեղեցին ուր են թագաւորաց և երևելի արանց գերեզմաններն, մեծամեծ կամուրջներ, պալատներ, երկու համալսարան, Բրիտանական թանգարանն հանդերձ գրատամբ, Թամիզ գետին տակը Թըննէլ կոչուած ճամբան։ Լոնտոնի մէջ կան նաև շատ գիտնական ընկերութիւններ։

2. Քէմպրիճ (26,000), ունի համալսարան։

3. Օքսֆորտ (28,000), ունի համալսարան։

4. Պըրմինկհէմ (370,000), ունի շատ երեւելի գործարաններ պողպատի, արոյրի և ապակւոյ։

5. Պրիսթոլ (170,000)։

6. Լիվըրփուլ (520,000)։

7. Մենչեսթըր (375,000), ունի երեւելի գործարաններ բամբակեղէնաց։

8. Հալլ (131,000), Լիտս (290,000), Հալիֆաքս (110,000), Պրատֆորտ (143,000) Շէֆֆիլտ (280,000). ամէնքն ալ երեւելի գործարաններ ունին այլեւայլ արուեստներու։

9. Փլիմըթ (80,000), Փորթսմըթ (100,000), Տովըր (25,000) երեւելի նաւահանգիստներ են։

10. Նիւքասըլ (112,000), ունի հանքածուխ։

11. Կրինիչ (128,000), երեւելի է աստեղագիտական դիտանոցը։

12. Եորք (40,000), հին քաղաք է։

13. Քէնթըրպըրի (21,000), եպիսկոպոսանիստ։

Հ. Սկովտիոյ գլխաւոր քաղաքներն որո՞նք են։

Պ. Սկովտիոյ գլխաւոր քաղաքներն են,

1. Էտինպուրկ (215,000), ունի համալսարան։

2. Կլասկօ (560,000), ունի համալսարան։

3. Ապըրտին (75,000), նաւահանգիստ։

Հ. Իրլանտայի երեւելի քաղաքներն որո՞նք են։

Իրլանտայի երեւելի քաղաքներն են,



1. Տըպլին (322,000), մայրաքաղաք. ունի համալսարան։

2. Պելֆաստ (121,000)։

3. Գորք (80,000), առատ միս տալուն համար «Անգղիոյ սպանդանոց» կոչուած է։

Մեծին Բրիտանիոյ քաղաքներուն շատը լի են ամէն տեսակ գործարաններով։ Երկրագործութիւնն և անասնաբուծութիւն ծաղկած են։

Հ. Բրիտանիայէն դուրս Անգղիոյ երկիրներն որո՞նք են։

Պ. Բրիտանիայէն դուրս Անգղիոյ երկիրներն են,

1. Եւրոպայի մէջ՝ Ճիպրալթար, Մալթա, Հելիկոլանտ։

2. Ասիոյ մէջ՝ Ադէն Արաբիա, Հնդկաստան, հանդերձ Ցէյլան, Սինկափուր և ուրիշ կղզիներով։

3. Ափրիկէի մէջ՝ Գլուխ Բարեյուսոյ, Նատալ և ուրիշ երկիրներ Ափրիկէի հարաւային եզերքը և քանի մը կղզիներ որոց մին է Սուրբ Հեղինէ ուր աքսորուեցաւ և մեռաւ մեծն Նաբոլէոն 1821 ին։

4. Ամերիկայի մէջ՝ Միացեալ նահանգներէն անդին բոլոր հիւսիսային մասը, Ճամայքա կղզին, փոքր Անթիլեան կղզիներուն մեծ մասը, և ուրիշ տեղեր։

5. Աւստրալիոյ մէջ՝ բոլոր Նոր Հոլանտա, և ուրիշ շատ կղզիներ։

# ԴԱՍ ԽԳ.

## Դ. ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՒՐՈՊԱ

### 13. ՌՈՒՍԻԱ

Հ. Ռուսիոյ վրայ ի՞նչ պատմական գիտելիք կայ ։

Պ. Ռուրիք անուն Սլաւ իշխան մը հիմնեց Ռուսաց տէրութիւնն Թ. դարուն մէջ, և ԺԱ. դարուն մէջ, Վլատիմիրի թագաւորութեան ատեն, քրիստոնէութիւնը մտաւ Ռուսաց մէջ, բայց Մոնկոլներն յարձակելով և աւրելով Ռուսիոյ 1235 ին՝ արգելք եղան այս երկրին յառաջադիմութեան ։ Իվան Գ. Մոսքուի իշխանն 1481 ին ազատեց Ռուսիա անոնց լուծէն, բայց 1660 էն ետքը սկսաւ Ռուսիա կարեւորութիւն ստանալ Եւրոպայի մէջ, և Պետրոս մեծ ԺԸ. դարուն սկիզբը (1680–1725) ընդարձակեց տէրութիւնը, և այնուհետեւ եղաւ Ռուսիա Եւրոպայի մեծ տէրութեանց մին ։ Քաթերինա Բ., Աղեքսանդր Ա. և Նիկողայոս Ա. ընդարձակեցին և յառաջացուցին տէրութիւնը ։

Հ. Ռուսիոյ բնակիչն և զինուորական զօրութիւնն ո՞րչափ են ։

Պ. Ռուսիոյ բնակիչն է 78 ½ միլիոն, 73 միլիոնը Եւրոպայի մէջ ։ Զինուորական զօրութիւնը 1,700,000 է. նաւատորմիղը կը բաղկանայ 274 նաւէ, որոց 24 ը զրահաւոր է և 211 ը՝ շոգենաւ ։



Հ. Ռուսիոյ գլխաւոր քաղաքներն որո՞նք են։

Պ. Ռուսիոյ գլխաւոր քաղաքներն են,

1. Պետերսպուրկ (670,000), Պալդիկ ծովին մօտ. մեծն Պետրոս հիմնեց այս քաղաքը 1703 ին ։ Եւրոպայի գեղեցիկ մայրաքաղաքներէն մին է. ունի հոյակապ պալատներ և շէնքեր, վայելուչ փողոցներ ։ Երեւելի է Սըրբոյն Իսահակայ եկեղեցին և համալսարանն ։ Լազարեանք եկեղեցի մը շինած են հոս Հայոց համար ։

2. Քրոնշտատ (45,000), ունի զինուորական նաւահանգիստ անուանի նաւարանով ։

3. Րիկա (160,000). Տորբատ (21,000), ունի համալսարան և դիտարան ։

4. Նովկորոտ (20.000), Ռիւրիք հոս սկսաւ թագաւորութիւնը 862 ին ։

5. Արխանկէլ (20,000), ունի մուշտակի առուտուր. Ռուսիոյ երկրորդ նաւարանը հոս է ։ Հոս ամենէն կարճ օրը 3 ժամ 12 րոպէ է ։

6. Մոսկուա կամ Մոսկովա (600,000), Ռուսիոյ հին մայրաքաղաքն է. ունի համալսարան ։ Հոս է Հայոց Լազարեան վարժարանն ։

7. Նիժնի-Նովկորոտ (41,000), ունի մեծ տօնավաճառ, ուր 300,000 մարդ կուգայ առուտուրի համար այլեւայլ արեւելեան ազգերէ ։

8. Խազան (80,000), Թաթարաց մայրաքա-

ղաքն էր, ունի համալսարան եւ աստեղագիտութեան դիտարան։

9. Պէնզա (74,000). ունի համալսարան, եւ հին վանք մը, ուր ցոյն եկեղեցւոյն սուրբերէն հարիւրին մարմինները կան։

10. Պօլթավա (32,000). հոս եղած է մեծին Պետրոսի յաղթութիւնն Շուետի կարոլոս ԺԲ. ի դէմ 1709 ին։

11. Օտեսսա (180,000), Սեւ ծովուն վրայ անուանի նաւահանգիստ է. ունի համալսարան։ Այս քաղաքը հիմնուեցաւ 1792 ին։

Ռուսիոյ այս հարաւային մասին մէջ անուանի են՝ Նիքոլայեւ, Քերսոն, Դականրոգ (Թայղան), Քիշնեւ, Սիմֆերոբոլ, Կերչ, Քաֆֆա կամ Թէոդոսիա, Սեւաստոփոլ։ Շատ Հայեր կան Քարասու, Նոր Նախճուան եւ Գրիգորիոպոլիս։

12. Աստրախան (50,000), Վոլկա գետին բերանը. ունի եկեղեցի, մզկիթ եւ կռատուն։

13. Օրէնպուրկ (33,000) Ուրալ գետին քով. հոս կը շինուի խաւմար։

Հ. Ռուսիա Եւրոպայի մէջ ուրիշ ի՞նչ երկիր ունի։

Պ. Ռուսիոյ կը վերաբերի նաեւ Լեհի թագաւորութեան մեծ մասն որոյ մայրաքաղաքն է Վարշավա կամ Վարսովիա (300,000). ունի համալսարան։

Հ. Եւրոպայէ դուրս Ռուսի երկիրներն ո՞րո՞նք են։

Պ. Եւրոպայէ դուրս Ռուսի երկիրներն՝ Ասիոյ մէջ են, այսինքն՝ Սիպերիա, Թուրքաստան, Վրաստան, Չէրքէզ, Հայաստանի մէկ մասն հանդերձ Էջմիածնիւ ուր կը նստի Հայոց կաթողիկոսն։



# ԴԱՍ ԽԴ.

# ԱՍԻԱ

Հ. Ասիա ո՞ր կիսագունտին վրայ է, որո՞նք են անոր սահմաններն, եւ բնակիչն ո՞րչափ է։

Պ. Ասիա հին ցամաքը պարունակող կիսագունտին արեւելեան կողմն է։ Սահմաններն են՝ հիւսիսէն Սառուցեալ Ովկիանոս. արեւմուտքէն՝ Ուրալ եւ Կովկաս լեռներն, եւ Կասպից, Միջերկրական եւ Կարմիր ծովերն. հարաւէն՝ Հնդկաց Ովկիանոս. արեւելքէն՝ Խաղաղական Ովկիանոս։ Բնակիչն 782 միլիոն է։

Հ. Ասիա քանի՞ մաս կը բաժնուի։

Պ. Ասիա չորս մաս կը բաժնուի, Հարաւային, Միջին, Հիւսիսային եւ Արեւելեան։

Հ. Հարաւային Ասիոյ մէջ ի՞նչ երկիրներ կան։

Պ. Հարաւային Ասիոյ մէջ են, 1. Ասիական Թուրքիա, 2. Արաբիա, 3. Իրան, 4. Հնդկաստան եւ 5. Հնդկաց արշիպեղագոս կամ Մալեզիա։

Հ. Միջին Ասիոյ մէջ ի՞նչ երկիրներ կան։

Պ. Միջին Ասիոյ մէջ են՝ 1. Թուրքաստան կամ Ազատ Թաթարիստան եւ 2. Կովկասիա։

Հ. Հիւսիսային Ասիոյ մէջ ի՞նչ երկիր կայ :

Պ. Հիւսիսային Ասիոյ մէջ է՝ Ասիոյ Ռուսաստան կամ Սիբերիա :

Հ. Արեւելեան Ասիոյ մէջ ի՞նչ երկիրներ կան :

Պ. Արեւելեան Ասիոյ մէջ են՝ Չին և Ճաբոն :

Հ. Ասիոյ գլխաւոր ծովերն որո՞նք են :

Պ. Ասիոյ գլխաւոր ծովերն են ,

1. Պեհրինկի , Օխոտսքի , Ճաբոնի , Չինաց ծովերն և Դեղին ծով : Ասոնք Խաղաղական Ովկիանոսէ կը կազմուին :

2. Պենկալայի , Օմանի , Պարսից ծովերն որ ծոց կը կոչուին , և Կարմիր ծով : Ասոնք Հնդկաց Ովկիանոսէ կը կազմուին :

3. Կասպից ծովն որ շատ մեծ լիճ է : Ասիոյ կը վերաբերին նաեւ Միջերկրականն , Արշիպեղագոս , Մարմարայի և Սև ծովերն :

Հ. Ասիոյ ծովածոցերն որո՞նք են :

Պ. Ասիոյ ծովածոցերն են Արաբիոյ , Պարսից , Օմանի , Պենկալայի , Սիամայ , Թոնքինի , Օպի ծոցերն և Անատիր :

Հ. Ասիոյ ծովակներն որո՞նք են :

Պ. Ասիոյ ծովակներն են՝

1. Զերեհ՝ Աֆղանիստան :

2. Պալքաշ , Քոքոնոր , Թունկ-թինկ՝ Չին :

3. Արալ՝ Թաթարիստան :

4. Մեռեալ ծով՝ Պաղեստին :

5. Պայքալ՝ Սիպերիա :



6. Վանայ , Ուրմիոյ և Սեւանայ ծովերն՝ Հայաստան :

Հ. Ասիոյ նեղուցներն որո՞նք են :

Պ. Ասիոյ նեղուցներն են ,

1. Տարտանէլ (Չանաք գալէ) և Բոսֆոր (Պողազ իչի) Եւրոպական և Ասիական Թուրքիոյ մէջտեղ :

2. Պապէլմանտէպ՝ Արաբիոյ և Ափրիկէի մէջտեղ :

3. Հէրմուզի նեղուցն՝ Արաբիոյ և Պարսկաստանի մէջտեղ :

4. Սինկափուրի նեղուցն՝ Հնդկաստանի հարաւային եզերքը :

5. Մալաքքայի նեղուցը՝ Չինու հարաւային եզերքը :

6. Քորէայի նեղուցը՝ Չինու և Ճաբոնի մէջտեղ :

7. Թաթարիստանի նեղուցը (Չրանցք) Զոքա կղզւոյն և Չինու մէջտեղ :

8. Պեհրինկի նեղուցն Ասիոյ և Ամերիկայի մէջտեղ :

Հ. Ասիոյ գետերն որո՞նք են :

Պ. Ասիոյ գետերն են՝

1. Օպի , Ենիսէյ և Լենա որ կը թափին Սառուցեալ Ովկիանոս :

2. Ամուր կամ Սաղալեան՝ կը թափի Օխոտսքի ծովը :

3. Վոլկա և Ուրալ՝ Կասպից ծովը :

4. Հոանկհօ կամ Դեղին գետ և Եանկ կամ Կապոյտ գետ՝ դեղին ծովը :

5. Քամպոճ և Մէկոնկ՝ Չինու ծովը :

6. Իրավատի կամ Ալա, Պրահմաբուտրա, Գանգէս, Կոտավէրի՝ Պէնկալեայի ծոցը ։

7. Ինդոս՝ Օմանի ծոցը ։

8. Տիգրիս և Եփրատ կամ Շատէլ Արապ՝ Պարսից ծոցը ։

9. Սէհուն և Ջէհուն՝ Արալ լիճը ։

11. Կուր և Երասխ՝ Կասպից ծովը ։

11. Ճորոխ և Ալիս գետ՝ Սև ծովը ։

---

## ԴԱՍ ԽԵ.

Հ. Ասիոյ կղզիներն որո՞նք են ։

Պ. Ասիոյ կղզիներն են,

1. Նոր Զէմպլա՝ Սառուցեալ Ովկիանոսի մէջ ։

2. Քուրիլեան, Ճափոնեան, Լիու-Քիու, Ֆորմոզ, Հայնան կղզիներն՝ Խաղաղական Ովկիանոսի մէջ ։

3. Նիգոպար, Անդաման, Սէյլան, Մալտիվեան, Լաքատիվեան կղզիք՝ Հնդկաց Ովկիանոսի մէջ ։

4. Սպորադեան կղզիք որոց գլխաւորն է Քիոս կամ Սաքըզ՝ Արքիպեղագոսի մէջ ։

5. Հռոդոս, Կիպրոս՝ Միջերկրականին մէջ ։

Հ. Ասիոյ ցամաքակղզիք և թերակղզիք որո՞նք են ։

Պ. Ասիոյ ցամաքակղզիք են՝ Անատօլու կամ փոքր Ասիա, Արաբիա, Հնդկաստան յայսկոյս և յայնկոյս Գանգեսի ։

Թերակղզիներն են՝ Կէօլրոտ, Մալաքքա, Գորէա և Քամչատքա ։

Հ. Ասիոյ հրուանդաններն որո՞նք են ։



Պ. Ասիոյ հրուանդաններն են,

1. Պապա պուռնու՝ Թուրքիա ։

2. Պապէլմանտէպ և Ռասէլհատ՝ Արաբիա ։

3. Քոմորին՝ Հնդկաստան ։

4. Լոփաթքա՝ Քամչատքայի ծայրը ։

Հ. Ասիոյ լեռնագօտիք որո՞նք են ։

Պ. Ասիոյ լեռնագօտիք են,

1. Ուրալ լեռներն ։

2. Կովկասեան գօտին ։

3. Կորդուաց գօտին՝ Հայաստանի հարաւային կողմը ։

4. Ալթայ՝ Սիպերիոյ մէջ ։

5. Պոլոր լեռներն՝ Թուրքաստանի մէջ ։

6. Հիմալայա՝ Հնդկաստանի հիւսիսային կողմը ։

7. Էլվէնտ՝ Թուրքիոյ և Պարսկաստանի մէջտեղ ։

8. Էլարէն՝ Արաբիոյ մէջ ։

9. Տավրոս գօտին՝ փոքր Ասիոյ մէջ ։

---

## ԴԱՍ ԽԶ.

### Ա. ՀԱՐԱԽԱՅԻՆ ԱՍԻԱ

#### 1. ԱՍԻԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱ

Հ. Ասիական Թուրքիոյ բնակիչն ո՞րչափ է ։

Պ. Ասիական Թուրքիոյ բնակիչն է 16 ½ միլիոն ։

Հ. Ասիական Թուրքիա ի՞նչ երկիրներ կը պարունակէ ։

Պ. Ասիական Թուրքիա կը պարունակէ 6 գլխաւոր երկիր .

1. Փոքր Ասիա կամ Անատօլու, 2. Թուրքաց Հայաստան, 3. Քիւրտիստան, 4. Միջագետք կամ Էլ-Ճեզիրէ, 5. Ասորիք կամ Սուրիա, 6. Իրաք Արապի :

Հ. Փոքր Ասիոյ կամ Անատօլուի գլխաւոր քաղաքներն որո՞նք են :

Պ. Փոքր Ասիոյ կամ Անատօլուի գլխաւոր քաղաքներն են Զմիւռնիա (150,000), Պրուսա (100,000) որ շատ ջերմուկներ ունի, Նիկոմիդիա կամ Իզմիդ (14,000), Կոտիեա կամ Քէօթահիա (29,000), Գարահիսար (30,000), Տրապիզոն (40,000) և Սինոպ, Իկոնիոն կամ Գոնիա (30,000), Անկիւրիա կամ Էնկիւրի (86,000), Կիւմիւշխանէ :

Հ. Անատօլուի մէջ յիշուելու արժանի ուրիշ ի՞նչ քաղաքներ կան :

Պ. Անատօլուի մէջ յիշուելու արժանի են նաեւ հետեւեալ քաղաքներն . հին ատենն Փոքր Հայք կոչուած մասին մէջ Սեբաստիա կամ Սըվազ, ուր ծնաւ Մխիթարեանց հիմնադիրն Մխիթար Աբբա 1676 ին. Եւդոկիա կամ Թօքաթ, Նիկոպոլիս կամ Շապին Գարահիսար, Տիվրիկ, Կերասոն, Արաբկիր, Ակն կամ Էկին, որուն մօտ է Հռոմկլա ուր կայ Ս. Ներսէսի Շնորհալւոյն գերեզմանը. Կեսարիա (70,000) և Թալաս գիւղ :

Կիլիկիա կոչուած մասին մէջ՝ Ադանա, Սիս, Տարսոն կամ Թարսուս, Իսքէնտէրուն, Գերմանիկ կամ Մարաշ (20,000), Այնթապ (40,000), Զէյթուն (Ուլնիա) :



Հ. Թուրքիոյ Հայաստանի գլխաւոր քաղաքներն որո՞նք են :

Պ. Թուրքիոյ Հայաստանի գլխաւոր քաղաքներն են,

Կարին կամ Էրզրում (100,000), Խնուս, Բաբերդ, Երզնկա, Կամախ, Բագառիճ գիւղ, Կիղի, Հասանղալա :

Հ. Ուրիշ ի՞նչ երեւելի քաղաքներ կան Հայաստանի մէջ :

Պ. Երեւելի են նաեւ Տիգրանակերտ կամ Տիարպեքիր (40,000), Բաղէշ, Բալու, Խարբերդ, Վան, (50,000) համանուն ծովակին քով, Աղթամար, Կտուց և Լիմ կղզիներով ուր կան Հայ միանձանց վանքեր : Վանայ մօտ է Վարագ նշանաւոր վանքն որ ունի տպարան ուր կը հրատարակուէր Արծուի կոչուած ամսաթերթն : Այս գաւառին մէջ է նաեւ Նարեկայ վանքն որոյ միաբաններէն էր Ս. Գրիգոր Նարեկացի, Նարեկ կոչուած գրքին հեղինակը : Մուշ որուն մօտ է Ս. Կարապետ, հռչակաւոր վանք :

Հիմա Քիւրտիստան կոչուած գաւառն ալ Հայաստանի մասն է :

## ԴԱՍ ԽԵ.

Հ. Միջագետաց գլխաւոր քաղաքներն որո՞նք են :

Պ. Միջագետաց գլխաւոր քաղաքներն են,

Ուրֆա կամ Եդեսիա ( 40,000 ), Մուսուլ (60,000 ) :

Հ. Ասորւոց կամ Սիւրիայի գլխաւոր քաղաքներն որո՞նք են :

Պ. Ասորւոց գլխաւոր քաղաքներն են,

Բերիա կամ Հալէպ (180,000), Անդիոք (10,000), ունի ջերմուկներ, Դարապուլուս (16,000), Աքեա (20,000), Կարմեղոս լերան մօտ, Դամասկոս կամ Շամ (120,000), Պէյրութ (100,000), որուն մօտ է Լիբանան լեռն ուր Հայ Հռոմէականաց վանքեր կան :

Հ. Սիւրիա կոչուած մասին մէջ ուրիշ ի՞նչ երկիրներ կան :

Պ. Սիւրիա կոչուած մասին մէջ է Պաղեստին կամ Հրէաստան որոյ գլխաւոր քաղաքներն են,

Երուսաղէմ ( 25,000 ), Հրէից թագաւորութեան մայրաքաղաքն, ուխտատեղի Քրիստոնէից : Երուսաղեմին Սիոն կոչուած մասին մէջ է Հայոց եկեղեցին և վանքն որ ունի 1000 սենեակ ուխտաւորաց համար, դպրատուն և տպարան ուր կը հրատարակուի Սիոն անուն ամսաթերթն . հոս կը նստի Հայոց Երուսաղեմայ Պատրիարքը : Բեթղեհէմ, ուխտատեղի . Եաֆա ( Յոպպէ ), Տիբերիա, Նազարէթ :

Հ. Իրագ Արապիի գլխաւոր քաղաքներն որո՞նք են :

Պ. Իրագ Արապիի գլխաւոր քաղաքներն են, Պաղտատ ( 100,000 ), Պասրա ( 60,000 ) :

Հ. Ասիական Թուրքիոյ կղզիներն որո՞նք են:



Պ. Ասիական Թուրքիոյ կղզիներն են,

Կիպրոս, Հռոդոս (25,000), Մարմարա, մարմարինը անուանի է . Լեսբոս կամ Մետելին (45,000), Քիոս կամ Սաքըզ (15,000), Սամոս կամ Սուսամ :

## ԴԱՍ ԽԸ.

### 2. ԱՐԱԲԻԱ

Հ. Արաբիոյ բնակիչն ո՞րչափ է, գլխաւոր քաղաքներն որո՞նք են :

Պ. Արաբիոյ բնակիչն 8 միլիոն է . գլխաւոր քաղաքներն են՝ Եէմէն կոչուած գաւառին մէջ, Մոքա որոյ սուրճն անուանի է, և Ադէն :

Հէճազ կոչուած գաւառին մէջ, Մէքքէ (45,000), Մահմետի ծննդեան քաղաքն, ուխտատեղի Մահմետականաց : Երևելի են Պէյթուլլահ կոչուած մզկիթը, Զէմզէմ կոչուած աղբիւրը : Մէտինէ (20,000) ուր է Մահմետի գերեզմանն :

### 3. ԻՐԱՆ

Հ. Իրան ի՞նչ երկիրներ կը պարունակէ :

Պ. Իրան կը պարունակէ 1. Պարսկաստան, 2. Աֆղանիստան, և 3. Պէլուճիստան :

Հ. Պարսկաստանի բնակիչն ո՞րչափ է, գըլխաւոր քաղաքներն որո՞նք են :

Պ. Պարսկաստանի բնակիչն 2 միլիոն կը կարծուի ։ Գլխաւոր քաղաքներն են , Թաւրէժ (110,000) , Ուրմիա (30,000) , Շիրազ (25,000) , Թեհրան (80,000) , Իսպահան (60,000) , տէրութեան մայրաքաղաքը , Մեշէտ (70,000) , Համատան ։

Հ. Աֆղանիստանի բնակիչն որչափ է , գըլխաւոր քաղաքներն որո՞նք են ։

Պ. Աֆղանիստանի բնակիչը 6 միլիոն կը կարծուի ։ Գլխաւոր քաղաքներն են , Քապուլ (60,000) , ուր կայ Հայ գաղթականութիւն մը , Քանտահար (50,000) , Հէրատ (100,000) ։

Հ. Պելուճիստանի բնակիչն որչափ է , գըլխաւոր քաղաքներն որո՞նք են ։

Պ. Պելուճիսթանի բնակիչն 2 միլիոն կը կարծուի ։ Գլխաւոր քաղաքն է Քէլաթ (20,000) ։

---

## ԴԱՍ ԽԹ.

### 4. ՀՆԴԿԱՍՏԱՆ

Հ. Հնդկաստան քանի՞ է ։

Պ. Հնդկաստան երկու.ք է , 1. Ցայսկոյս Գանգէսի և 2. Յայնկոյս Գանգէսի ։

### 1. ՀՆԴԿԱՍՏԱՆ ՑԱՅՍԿՈՅՍ ԳԱՆԳԵՍԻ

Հ. Հնդկաստան Ցայսկոյս Գանգէսի քանի՞ կը բաժնուի ։

Պ. Հնդկաստան Ցայսկոյս Գանգէսի երեք մաս կը բաժնուի , Ա. Անգղիական մաս , Բ. Անգղիոյ հարկատու մաս , և Գ. Ազատ մաս ։



#### Ա. Անգղիական մաս

Հ. Անգղիական մասին բնակիչն որչափ է , գլխաւոր քաղաքներն որո՞նք են ։

Պ. Անգղիական մասին բնակիչն 150 միլիոն է , գլխաւոր քաղաքներն են ,

1. Կալկաթա (1,000,000) , Տելհի (150,000) հին Մօնկոլներուն մայրաքաղաքը , Ակրա (125,000)։

2. Պէնարէս (200,000), Պրահմիններուն (Հընդկաց քուրմերուն) կրթութեան տեղն է և ուխտատեղի Հնդկաց . Ալլահապատ (73,000) , Մուրշէտապատ (150,000) , Տաքա (60,000) ։

3. Պոմպայ (820,000) . հոս կրակապաշտ Պարսիկներ կան . Սուրատ (135,000) ։

4. Մատրաս (720,000) . հոս Հայ վաճառականներ կան . Լահոր (100,000) ։

5. Սէյլան կղզի , բնակիչն 1,500,000 ։

#### Բ. Հարկատու մաս

Հ. Անգղիոյ հարկատու մասին բնակիչն որչափ է , գլխաւոր քաղաքներն որո՞նք են ։

Պ. Անգղիոյ հարկատու մասին բնակիչն 35 միլիոն է , գլխաւոր քաղաքներն են ,

Լաքնով (300,000) , Հայտէրապատ (200,000) , Նակփուր (115,000) , Ուճէն (160,000) , ունի շատ բակոտներ (Հնդկաց մեհեաններ) , և ուխտատեղի է Հնդկաց . Լաքաթիվեան կղզիք ։

#### Գ. Ազատ մաս

Հ. Հնդկաստանի ազատ մասին բնակիչն որչափ է , գլխաւոր քաղաքներն որո՞նք են ։

Պ. Հնդկաստանի ազատ մասին բնակիչն 13 միլիոն է, գլխաւոր քաղաքներն են,

Քաշմիր (170,000), հոս կը գործուին ազնիւ շալեր, Մուլթան (60,000), Քաթմանտու (30,000). Մալտիւեան կղզիք։

Հ. Եւրոպական ուրիշ տէրութեանց երկիրներն որո՞նք են Հնդկաստանի մէջ։

Պ. 1. Պոնտիշէրի (25,000) և Չանտէրնակոր (30,000)՝ Գաղիացւոց։

2. Կոա (30,000)՝ Փորթուկալի տէրութեան։

---

## ԴԱՍ Ծ.

### 2. ՀՆԴԿԱՍՏԱՆ ՑԱՅՆԿՈՅՍ ԳԱՆԳԵՍԻ

Հ. Հնդկաստան Ցայնկոյս Գանգեսի ի՞նչ երկիրներէ կը բաղկանայ։

Պ. Հնդկաստան Ցայնկոյս Գանգեսի կը բաղկանայ Ա. Պիրմայէ, Բ. Սիամէ և Գ. Անամէ թագաւորութիւններէն և Դ. Անգղիական Պիրմայէ։

Ա. Պիրմա

Հ. Պիրմայի բնակիչն ո՞րչափ է, գլխաւոր քաղաքներն որո՞նք են։

Պ. Պիրմայի բնակիչն 4 միլիոն է, գլխաւոր քաղաքներն են,

Ամարաբուրա կամ Ավա (30,000), Մանտալէ (90,000)։



Բ. Սիամ

Հ. Սիամի բնակիչն ո՞րչափ է, գլխաւոր քաղաքներն որո՞նք են։

Պ. Սիամի բնակիչն 6 միլիոն է, գլխաւոր քաղաքն է՝ Պանկոք (400,000), ուր կայ երեւելի կռատուն։

Գ. Անամ

Հ. Անամի բնակիչն ո՞րչափ է, գլխաւոր քաղաքներն որո՞նք են։

Պ. Անամ կամ Քոչին-Չին ունի 11 միլիոն բնակիչ. գլխաւոր քաղաքներն են,

Հուէ (100,000), Սայկոն (180,000), Քամպոճ (40,000)։

Դ. Անգղիական Պիրմա

Հ. Անգղիական Պիրմայի բնակիչն ո՞րչափ է, գլխաւոր քաղաքներն որո՞նք են։

Պ. Անգղիական Պիրմայի բնակիչն 10 միլիոն է, գլխաւոր քաղաքներն են,

Սինկափուր (150,000), Արաքան (80,000), Բէկու (50,000), որ ունի բրգաձեւ կռատուն մը 300 ոտք բարձր, Ռանկուն (50,000)։

---

### 5. ՀՆԴԿԱՑ ԱՐՔԻՊԵՂԱԳՈՍՆ ԿԱՄ ՄԱԼԵԶԻԱ

Հ. Հնդկաց Արքիպեղագոսն կամ Մալեզիա ի՞նչ երկիրներէ կը բաղկանայ։

Պ. Հնդկաց Արքիպեղագոսն կամ Մալեզիա կը բաղկանայ շատ կղզիներէ որոց գլխաւորներն են,

1. Անդաման և Նիկոպար կղզիք որ Անգղիացւոց կը վերաբերին։

2. Մեծ Սունդա կղզիք որ են Սումատրա, Ճավա որոյ մայրաքաղաքն է Պադավիա (70,000) որ Հոլանտացւոց կը վերաբերի, Պոռնէօ, Սելէպէս։

3. Փոքր Սունդա կղզիք։

4. Մոլուքեան կամ Համեմ կղզիք որ Հոլանտացւոց կը վերաբերին։

5. Սուլու կղզիք։

6. Փիլիպպեան կղզիք։

## ԴԱՍ ԾԱ.

## Բ. ՄԻՋԻՆ ԱՍԻԱ

### 1. ԹՈՒՐՔԱՍՏԱՆ ԿԱՄ ԹԱԹԱՐԻՍՏԱՆ

Հ. Թուրքաստանի բնակիչն որչափ է, և գլխաւոր քաղաքներն որո՞նք են։

Պ. Թուրքաստանի բնակիչն 8 միլիոն է, գլխաւոր քաղաքներն են,

Պուխարա (150,000), Սամարքանդ (10,000), Լէնկթիմուրի մայրաքաղաքն ուր կայ անոր գերեզմանը յասպիս քարէ. Բալխ կամ Բահլ (3,000), Խիվա (13,000), Խոքանդ (30,000)։

Այսոնց իւրաքանչիւրն մէն մի իշխանութիւն է։ Այս երկիրները Ռուսիա 1872 ին սկըսաւ նուաճել։



### 2. ԿՈՎԿԱՍԻԱ

Հ. Կովկասիա ի՞նչ երկիր է. բնակիչն որչափ է, գլխաւոր քաղաքներն որո՞նք են։

Պ. Կովկասիա Ասիոյ մէջ Ռուսիոյ երկիրներուն մէկ մասն է՝ Կովկաս լերանց երկու կողմը. բնակիչն է 4 1/2 միլիոն։ Գլխաւոր քաղաքներն են, Կովկասէն անդին դէպ 'ի հիւսիս,

Ստավրոբոլ (17,000)։

Կովկասէն ասդին դէպ 'ի հարաւ,

Տփխիս կամ Թիֆլիս (71,000), Վրաց մայրաքաղաքն է, ունի ջերմուկներ։ Երեւան (10,000), Հայոց քաղաք. առոր մօտ է Էջմիածին ուր կը նստի Հայոց կաթողիկոսն։ Ունի վանք գրատամբ և տպարանով ուր կը հրատարակուի Արարատ անուն ամսաթերթն։ Շամախի (25,000)։

## ԴԱՍ ԾԲ.

## Գ. ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՍԻԱ ԿԱՄ ՍԻՊԵՐԻԱ

Հ. Սիպերիա որ տէրութեան կը վերաբերի, բնակիչն որչափ է, գլխաւոր քաղաքներն որո՞նք են։

Պ. Սիպերիա կը վերաբերի Ռուսիոյ. բնակիչն է 5 1/2 միլիոն, գլխաւոր քաղաքներն են։

Թօպոլսք (17,000), Օմսք (27,000). հոս կը նստի Սիպերիոյ կուսակալն. Իրքուտսք (28,000),

Օխոտսք (3,000) . հոս կ՚աքսորուին ոճրագործներ ։

Սիպերիոյ կը վերաբերի Գամչաթգա թերակղզին ։

# ԴԱՍ ԾԳ.

## Դ· ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱՍԻԱ

### 1. ՉԻՆ

Հ. Չինու բնակիչն ո՞րչափ է , երկիրը քանի՞ մաս կը բաժնուի , գլխաւոր քաղաքներն որո՞նք են ։

Պ· Չինու բնակիչն է 446 միլիոն · չորս կը բաժնուի 1. Բուն Չինաստան , 2· Մանչուրիա , 3. Մոնկոլիա , 4. Թիպէթ ։

Գլխաւոր քաղաքներն են ,

1· Պէքին (1,650,000) , որ մայրաքաղաք է և ունի համալսարան , դիտարան աստեղագիտութեան , գրատուն՝ 300,000 հատոր գրենով , կայսերական ապարան մը , զօրանոցներ ։

2· Նանքին (1,000,000) , Չինացւոց Աթէնքը · հոս կը նստի Հռոմէական կաթոլիկ եպիսկոպոս մը ։

3. Քանթոն (1,250,000) , վաճառաշահ քաղաք ։

4· Շանկ Հայ (400,000) , Ամոյ (300,000) ; Ֆուչաու (600,000) ։



5. Լհասսա , կրօնատեղի Թիպէթի մէջ ։

Հ. Չին ի՞նչ տեսակ կառավարութիւն է ։

Պ. Չինու կառավարութիւնն բացարձակ միապետական է ։ Ըստ Կոնփուկիոսի (500 ին նախ քան զՔր.) երկինք կը վարէ Չինու տէրութեան մեծամեծ շարժումներն , և նա է երկրին ճշմարիտ և մի միայն տէր ։ Կայսրը որ Չինաց լեզուաւ Թիէն Ծէ , երկնից որդի , և Հուանկ Տէ , բարձրագոյն իշխան կը կոչուի , տէրութեան հայրն ու մայրն է , և բացարձակ իշխան ։ Այժմու տիրող ցեղը Մանչու Թաթարներէն է ։

# ԴԱՍ ԾԴ.

### 2. ՃԱՊՈՆ

Հ. Ճապոն ի՞նչ երկիր է , բնակիչն ո՞րչափ է ։

Պ. Ճապոն Չինու արեւելեան հարաւային կողմը խաղաղական Ովկիանոսի մէջ մեծ և փոքր կղզիներէ բաղկացեալ տէրութիւն է , բնակիչն է 20 միլիոն ։

Հ. Ճապոնի գլխաւոր կղզիներն և քաղաքներն որո՞նք են ։

Պ. Ճապոնի գլխաւոր կղզիներն են Նիփոն , Քիու Սիու , Սիքօք և Եզօ ։

Գլխաւոր քաղաքներն են՝ Եդօ (1,500,000) . այս քաղաքն առաջ Ճապոնի աշխարհական իշխանին նիստն էր , հիմա երկրորդ մայրա-

*քաղաք է ։ Միաքօ կամ Քիօթօ (500,000), այժմու մայրաքաղաքն է ։ Օսաքա (400,000), վաճառաշահ ծովեզերեայ քաղաք է , մօտ ատենները բացուեցաւ Եւրոպացւոց ։*

*Հ. Ճաբոն ի՞նչ տեսակ կառավարութիւն է ։*

*Պ. Ճաբոն բացարձակ միապետութիւն է , և գերագոյն իշխանութիւնը Միքատօ կոչուած իշխանին ձեռքն է ։ Միքատօն առաջ երկրին հոգեւոր գլուխն էր միայն , աշխարհական իշխանը զատ էր և Թայքուն կը կոչուէր ։ Վերջին ատենները Միքատօն , կրօնական գլուխը , երկու իշխանութիւնը միացուց , և աշխարհական իշխանը քշուեցաւ Եզօ կղզին ։ Հիմա Ճաբոնի կառավարութիւնն կը ջանայ այն երկրին մէջ Եւրոպական կրթութիւն տարածել ։ Մօտերս շատ երիտասարդներ կառավարութեան ծախքով Ամերիկա և Եւրոպա ղրկուեցան ուսում և գիտութիւն սորվելու ։*

## ԴԱՍ ԾԵ.

# ԱՓՐԻԿԷ

*Հ. Ափրիկէ ո՞ր կիսագունդին վրայ է , ո՞րո՞նք են անոր սահմանները, և բնակչաց թիւն ո՞րչափ է ։*

*Պ. Ափրիկէ հին ցամաքը պարունակող կիսագունդին հարաւային արեւմտեան կողմն է ։ Սահմաններն են հիւսիսէն՝ Միջերկրական*



*ծով , արեւմուտքէն՝ Ատլանտեան Ովկիանոս , հարաւէն՝ Հարաւային Ովկիանոս , արեւելքէն՝ Կարմիր ծով և Հնդկաց Ովկիանոս ։ Բնակչաց թիւն է 120 միլիոն ։*

*Հ. Ափրիկէ քանի՞ մաս կը բաժնուի ։*

*Պ. Ափրիկէ կը բաժնուի* ա. Հիւսիսային Ափ*րիկէ և* բ. Հարաւային Ափրիկէ ։

*Հ. Հիւսիսային Ափրիկէ ի՞նչ երկիրներ կը պարունակէ ։*

*Պ. Հիւսիսային Ափրիկէ կը պարունակէ* 1. Եգիպտոս , 2. Նուբիա , 3. Հապէշ , 4. Պէրպէրիստան , 5. Սահրա , 6. Սէնէկամպիա , 7. Սուտան ։

*Հ. Հարաւային Ափրիկէ ի՞նչ երկիրներ կը պարունակէ ։*

*Պ. Հարաւային Ափրիկէ կը պարունակէ* 1. Արեւելեան ծովեզերք , 2. Քաբ կամ Բարեյուսոյ եր*կիրը* , 3. Արեւմտեան ծովեզերք կամ Կուինէա , 4. Կղզիք ։

*Հ. Ափրիկէի ծովերն ո՞րո՞նք են ։*

*Պ. Ափրիկէի ծովերն են՝* Միջերկրական ծով , Ատլանտեան *Ովկիանոս Մեծ Ովկիանոս և* Հնդկաց *ծով ։*

*Հ. Ափրիկէի ծոցերն ո՞րո՞նք են ։*

*Պ. Ափրիկէի ծոցերն են՝* Կուինէայի *ծոցն՝ Ատլանտեան Ովկիանոսի մէջ ,* Արաբիոյ *ծոցն կամ* Կարմիր *ծով՝ Հնդկաց ծովուն մէջ ,* Սիրթ *և* Քապէս՝ *Միջերկրականին մէջ ։*

*Ափրիկէի հրուանդաններն են՝* Գլուխ Պօն *և* Սէութա՝ *Պէրպէրիստանի եզերքը ,* Գլուխ Սպէ-

տօն՝ Սահարայի եզերքը, կանաչ Գլուխ՝ Սենեկամպիոյ եզերքը, Բալմա և Լօբէզ՝ Կուինէայի եզերքը, Գլուխ Բարեյուսոյ և Տելկատոյ՝ Մոզամպիքի հիւսիսային եզերքը, Կուարտաֆուի՝ Սոմալի եզերքը, Նաթալ՝ Մատակասկարի հիւսիսային եզերքը ։

Հ. Ափրիկէի լեռներն որո՞նք են ։

Պ. Ափրիկէի լեռներն են,

Ատլաս Պէրպէրիստանի մէջ. Քօնկ՝ Կուինէայի մէջ. Լուսնոյ լեռներ՝ Հապէշի մէջ. Լուբաթա գօտին՝ Ափրիկէի հարաւային կողմը, և Մատակասկարի գօտին ։

Հ. Ափրիկէի լիճերն որո՞նք են ։

Պ. Ափրիկէի լիճերն են, Չատ՝ Սուտանի մէջ, Ցեմպեա՝ Հապէշի մէջ, Նեանզա՝ հասարակածին տակ ։

Հ. Ափրիկէի գետերն որո՞նք են ։

Պ. Ափրիկէի գետերն են՝ Նեղոս որ կը թափի Միջերկրականը, Սենեկալ, Կամպիա, Նիժեր, Զայիրէ, Օրանժ որ կը թափին Ատլանդեան Ովկիանոսը; Զամպէզ՝ Հնդկաց ծովը ։



# ԴԱՍ ԾԶ.

## Ա. ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՓՐԻԿԷ

### 1. Եգիպտոս

Հ. Եգիպտոս ո՞ւր է, բնակիչն ո՞րչափ է, գլխաւոր քաղաքներն որո՞նք են ։

Պ. Եգիպտոս Ափրիկէի հիւսիսային արեւելեան կողմն է, բնակիչն 4 1/2 միլիոն է, գլխաւոր քաղաքներն են,

1. Աղեքսանդրիա (40,000), եւրոպական ոճով շինուած, երեւելի նաւահանգիստ է ։

2. Բօրթ Սայիտ (10,00), Սուէզ (15000), Տամիէթ (60,000) ։

3. Գահիրէ (350,000). Կոստանդնուպոլսէն ետքը Թուրքիոյ մեծագոյն քաղաքն է. ունի 400 մզկիթ (ճամի), 30 եկեղեցի, 1,300 վաճառատեղի ։ Երկաթուղւով կապուած է Աղեքսանդրիոյ և Սուէզի հետ, առուտուրը ծաղկած ։ Գահիրէի մօտ են հին Եգիպտոսի Մեմփիս քաղաքին աւերակներն, և Բիրամիտ կոչուած բրգունք ։

Հ. Եգիպտոս ի՞նչ տեսակ կառավարութիւն է ։

Պ. Եգիպտոս ազատ կառավարութիւն է արդի եւրոպական սկզբանց համեմատ ։ Իշխանն որ առաջ Փոխարքայ կը կոչուէր և հիմա Խտիվ կ'անուանուի՝ Եգիպտոսի անուանի կուսակալին Մէհմէտ Ալիի ցեղէն է, հարկատու

բարձրագոյն գրան ։ Եգիպտոս, 'ի բնէ արգասաւոր, Մէհմէտալեան ցեղին անցնելէն հետէ շատ ծաղկած է ։

2. Նուբիա

Հ. Նուբիոյ բնակիչն ո՞րչափ է, գլխաւոր քաղաքներն որո՞նք են ։

Պ. Նուբիոյ բնակիչն 3 միլիոն է, գլխաւոր քաղաքներն են,

Պերպեր (8,000), Խարթում (45,000) ։

Նուբիա հիմա Եգիպտոսի կը վերաբերի ։

3. Հապէշ կամ Եթովպիա

Հ. Հապէշի բնակիչն ո՞րչափ է, գլխաւոր քաղաք ո՞րն է ։

Պ. Հապէշի բնակիչն 3 միլիոն է, գլխաւոր քաղաքն է Կոնտար (40,000) ։ Անգղիացիք 1868 ին այս երկրին քրիստոնեայ թագաւորին Թէոդորոսի վրայ յարձակեցան քանի մը Անգղիացի բանտարկեալներ ազատելու համար ։

Հիմա Հապէշ քանի մը ինքնագլուխ իշխանութիւններու բաժնուած է ։

---

## ԴԱՍ ԾԷ.

4. Պէրպէրիստան

Հ. Պէրպէրիստան Ափրիկէի ո՞ր կողմն է և քանի՞ տէրութիւն կը պարունակէ ։

Պ. Պէրպէրիստան կը կոչուի Ափրիկէի հիւսիսային եզերքը՝ Եգիպտոսի արեւմտեան սահմանէն մինչեւ Ատլանտեան Ովկիանոս, և կը պարունակէ չորս տէրութիւն, Ա. Թրիպոլի կամ Թարապուլուս, Բ. Թունուզ, Գ. Ալճէրի և Դ. Մարօքքօ ։



Ա. Թրիպոլի

Հ. Թրիպոլիի բնակիչն ո՞րչափ է, գլխաւոր քաղաքներն որո՞նք են ։

Պ. Թրիպոլիի բնակիչն 1,500,000 է, գլխաւոր քաղաքներն են,

Թարապուլուս (30,000), Մուրզուք (11,000), Ֆէզզան գաւառին գլխաւոր քաղաքը, Պէնղազի ։ Թրիպոլի առանձին փաշայութիւն է, ժողովուրդը Մահմետական ։

Բ. Թունուզ

Հ. Թունուզի բնակիչն ո՞րչափ է, գլխաւոր քաղաքներն որո՞նք են ։

Պ. Թունուզի բնակիչն է 1,200,000 . գլխաւոր քաղաքն է Թունուզ (115,000), Քապէս (25,000), Քէրուան, ուխտատեղի Մահմետականաց Ափրիկէի ։

Թունուզ Օսմանեան տէրութեան հպատակ է, փաշայի մը կառավարութեան ներքեւ ։

Գ. Ալճէրի

Հ. Ալճէրիի բնակիչն ո՞րչափ է, գլխաւոր քաղաքներն որո՞նք են ։

Պ. Ալճէրիի բնակիչն իբր 3 միլիոն է, գըլխաւոր քաղաքներն են,

Ալճէրի (53,000), Քոնսդանդին (35,000), Պօնա, Օրան (34,000) :

Ալճէրի 1830 էն 'ի վեր Գաղիոյ կը վերաբերի :

Դ. Մարօքքօյ

Հ. Մարօքքոյի բնակիչն որչափ է, գլխաւոր քաղաքներն որո՞նք են :

Պ. Մարօքքոյի բնակիչն 6 կամ 7 միլիոն է. գլխաւոր քաղաքներն են,

Ֆէս (100,000), Մարօքքօ (50,000), Թանճէր, Մօկատօր (120,000) :

Մարօքքոյի իշխանը կը կոչուի Սուլթան, ժողովուրդը մահմետական է :

5. Սահարա (Անապատ)

Հ. Սահարա Աֆրիկէի ո՞ր կողմն է, բնակիչն որչափ է, գլխաւոր քաղաքներն որո՞նք են :

Պ. Սահարա Պէրպէրիստանի հարաւային կողմն է, բնակիչը 5 միլիոն, գլխաւոր քաղաքն է Թէզան : ժողովուրդը վայրենի է :

6. Սենեկամպիա

Հ. Սենեկամպիոյ բնակիչն որչափ է, գլխաւոր քաղաքներն որո՞նք են :

Պ. Սենեկամպիա Աֆրիկէի արեւմտեան եզերքն է. բնակիչն է 12 միլիոն, գլխաւոր քաղաքն է Գէմպօ :

Աս երկրին ժողովուրդը վայրենի է. քանի մը տեղերն Եւրոպացւոց կը վերաբերին :



7. Սուտան

Հ. Սուտան ո՞ւր է, բնակիչն որչափ է, գլխաւոր քաղաքներն որո՞նք են :

Պ. Սուտան որ Նիկրիտիա (Սեւաստան) ալ կ՚ըսուի՝ Սահարայի արեւելեան հարաւային կողմն է, բնակիչն է 20 միլիոն, գլխաւոր քաղաքներն են Սէկօ (30,000), Դիմպուքթու (13.000), Սօքօդօ (20,000), Քանօ (36,000), Պօռնօ, Տարֆուր :

Ասոնք այլեւայլ ինքնագլուխ ցեղերու քաղաքներ են, ժողովուրդը սեւամորթ վայրենի է :

## ԴԱՍ ԾԸ.

## Բ. ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՖՐԻԿԷ

### 1. ԱՐԵՒԵԼԵԱՆ ԾՈՎԵԶՐ

Հ. Արեւելեան ծովեզր ըսելով Աֆրիկէի ո՞ր մասը կը հասկցուի :

Պ. Արեւելեան ծովեզր ըսելով կը հասկըցուի Աֆրիկէի այն մասն որ Ադենի ծովածոցէն կամ Հապէշի սահմանէն սկսելով կը հասնի մինչեւ գլուխ Բարեյուսոյ : Այս երկրին հարաւային կողմը Բորթուկէզներն և Անգղիացիք գաղթականութիւններ ունին . հիւսիսային կողմն անծանօթ է :

Հ. Աֆրիկէի այս մասն ի՞նչ երկիրներ կը պարունակէ :

Պ. Աֆրիկէի այս մասը կը պարունակէ ,

1. Սոմալի : Այս երկիրը գրեթէ հասարակածին տակն է, և հիներու «Համեմաբեր» երկիր հին անունը երեւելի էր : Ժողովուրդը մահմետական է, աղէկ առուտուր ունի Արաբիոյ և Հնդկաստանի հետ : Այս երկիրն առաջ Աջան և Ադել կը կոչուէր :

2. Սեւահել : Այս երկիրը Սոմալիի հարաւային կողմն է, շատ լիճեր ունի, ժողովուրդը մահմետական է : 1858 էն հետէ անկախ եղաւ :

3. Զանզիբար : Այս երկրին իշխանը Սուլթան կը կոչուի, մայրաքաղաքն է Զանզիբար (60,000), կղզւոյ մը վրայ : Այս երկիրն առաջ Զանկեբար կը կոչուէր :

4. Մոզամբիք : Սեւահելի հարաւային կողմը, Մադակասքարի դիմացը, Բորդուկալի կը վերաբերի : գլխաւոր քաղաքն է Մոզամբիք ուր կը նստի Բորթուկալի կուսակալը :

5. Սոֆալա : Մոզամբիքի հարաւային կողմն է, նոյնպէս Բորդուկալի կը վերաբերի, գլխաւոր քաղաքն է Սոֆալա : Այս երկիրն առաջ Մոնոմոդաբա կ'ըսուէր :

6. Քաֆրաստան : Սոֆալայի հարաւային կողմն է : Բնակիչն է Քաֆր կոչուած ժողովուրդը որ կռապաշտ է, բայց Ափրիկեցի Սեւ ցեղէն չէ : Քաֆրերուն մէկ ցեղն են Զուլուները որոց հետ 1879 ին եղաւ Անգղիացւոց նշանաւոր պատերազմն ուր մեռաւ Նաբոլէոն Գ. ի որդին :



Այս ծովեզրին վրայ է Անգղիացւոց Նաթալ կոչուած գաղթականութիւնը :

---

## 2. ՔԱԲ կամ ԲԱՐԵՅՈՒՍՈՅ երկիր

Հ. Բարեյուսոյ երկիրն ո՞ր տէրութեան կը վերաբերի, բնակիչն ո՞րչափ է, գլխաւոր քաղաքն ո՞րն է :

Պ. Բարեյուսոյ երկիրը 1601 ին Հոլանտացիներէն հիմնուած գաղթականութիւն է որ 1806 ին Անգղիացւոց անցաւ : Բնակիչն 570,000 է, գլխաւոր քաղաքն է Քաբ (28,000), Հնդկաստան գացող նաւերուն համար կարեւոր : Հոս կը նստի Անգղիացի կուսակալը :

Բարեյուսոյ երկրին բնակիչներուն մէկ մասը Հոլանտացի է, մեծ մասը Հոտենտոտ կոչուած Ափրիկեցի ցեղէն : Բարեյուսոյ երկրին հիւսիսային կողմն են բուն Հոդենդոդներն որ Ափրիկեցի շատ վայրենի ժողովուրդ են և այլեւայլ ցեղերու կը բաժնուին և միշտ իրարու հետ պատերազմի մէջ են : Ասոնց մէջ քրիստոնէութիւն և կրթութիւն տարածելու շատ կ'աշխատին անգղիացի և ամերիկացի միսիոնարք :

## ԴԱՍ ԾԹ.

### 3. ԱՐԵՒՄՏԵԱՆ ԾՈՎԵԶՐ

Հ. Արեւմտեան ծովեզր ըսելով Ափրիկէի ո՞ր մասը կը հասկցուի, ի՞նչ երկիրներ կը պարունակէ, գլխաւոր քաղաքներն որո՞նք են։

Պ. Արեւմտեան ծովեզր ըսելով կը հասկցուի Ափրիկէի այն մասն որ Բարբէրիոյ արեւմտեան սահմանէն սկսելով կը հասնի մինչեւ Սենեկամպիա։ Այս ծովեզրը կը կոչուի Կուինէա, ժողովուրդը սեւամորթ ափրիկեցի է՝ շատ վայրենի։ Երկիրը քանի մը ինքնիշխան տէրութիւններու կը բաժնուի, որոնց գլխաւորներն են Լուանկօ, Քոնկօ, Անկոլա և Պէնկուէլա։ Այս վերջի երկուքին վրայ Բորդոկէզներն մեծ ազդեցութիւն ունին։

Հ. Այս ծովեզեր վրայ յիշուելու արժանի ուրիշ ի՞նչ տէրութիւն կայ։

Պ. Այս ծովեզեր վրայ յիշուելու արժանի են,

1. Անգղիոյ գաղթականութիւնը Սիէռա Լէոնա որոյ բնակիչներն են գերութենէ ազատուած քրիստոնեայ սեւեր։ Գլխաւոր քաղաքն է Ֆրիթաուն (10,000)։ Հոս կը նստի Անգղիացի կուսակալ։

2. Լիպէրիա. ազատ հանրապետութիւն, զոր Ամերիկացիք հիմնեցին 1822 ին, և ազատուած սեւ քրիստոնեայ գերիներ ղրկեցին հոն՝ Ափրիկէի մէջ եւրոպական կրթութիւն տարածելու, բնակիչն է 20 հազար կրթեալ և 700 հազար բնիկ սեւ ափրիկեցի։ Գլխաւոր քաղաքն է Մոնրովիա։



3. Աշանթի, բնիկ ափրիկեցի տէրութիւն մը, մայրաքաղաքը Քումասի (70,000)։ Այս մասին մէջ ալ Անգղիացիք և Հոլանտացիք գաղթականութիւններ ունին։

## ԴԱՍ Կ.

### 4. ԿՂԶԻՔ

Հ. Ափրիկէի կղզիներն որո՞նք են։

Պ. Ափրիկէի կղզիներն են Հնդկաց ծովուն մէջ՝

1. Սոքոտորա. ուտի կ'ելլէ հալուէ, Արաբացւոց ձեռքը։

2. Մատակասքար. 5 միլիոն բնակչով, շատ պտղաբեր։ Առանձին թագաւորութիւն է, ժողովուրդը կէս քաղաքակիրթ, գլխաւոր քաղաքներն են՝ Թանանարիվօ և Թամաթավա։ Հոս քրիստոնէութիւնը շատ յառաջ կ'երթայ։

3. Գոմորեան կղզիք 18 հատ։

4. Մասքարէնեան կղզիք որոց գլխաւորներն են՝ Մօրիթիուս (առաջ Իլ տը Ֆրանս կ'ըսուէր) 327 հազար բնակչօք, Անգղիացւոց ձեռքը. Րէունիոն կղզին (առաջ Պուրպոն կը կոչուէր) 210 հազար բնակչօք, Գաղիացւոց ձեռքը։

Ատլանտեան Ովկիանոսի մէջ՝

1. Սուրբ Հեղինէ և Համբարձում՝ Անգղիացւոց ձեռքը :

2. Կուինէայի կղզիներն՝ Սպանիացւոց և Բոր-դուկիզաց ձեռքը :

3. Կանանչ Քիթոյ կղզիք 67,000 բնակչօք, Բորդուկէզներուն ձեռքը :

4. Գանարեան կղզիք ուր մշտնջենաւոր գա-րուն է, 250,000 բնակչօք, Սպանիացւոց ձեռ-քը. գլխաւորներն են՝ Ֆէր-Րօ կղզին և Տէնէ-րէֆֆա :

5. Մատէրա կղզիք, 112,000 բնակչօք, Բոր-դուկէզներուն ձեռքը : Այս կղզիներէն կ'ել-լէր Մատերա կոչուած ազնիւ գինին, բայց 1852 էն որթերուն հիւանդութիւն ինկաւ և այգիները ջնջուեցան :

6. Ազորեան կղզիք, 250,000 բնակչօք, Բոր-դուկիզաց ձեռքը :

## ԴԱՍ ԿԱ.

## ԱՄԵՐԻԿԱ

Հ. Ամերիկայի բնակիչն ո՞րչափ է, երկիրը քանի՞ կը բաժնուի :

Պ. Ամերիկայի բնակիչն է 120 միլիոն, կը բաժնուի Ա. Հիւսիսային, Բ. Միջին և Գ. Հարաւա-յին Ամերիկա :



Հ. Հիւսիսային Ամերիկայի մէջ քանի՞ տէ-րութիւն կայ :

Պ. Հիւսիսային Ամերիկայի մէջ կայ չորս տէրութիւն. 1. Դանիական Հիւսիսային Ամերիկա, 2. Բրիտանական Հիւսիսային Ամերիկա, 3. Հիւսիսային Միացեալ Նահանգները, և 4. Մեքսիքօ :

Հ. Միջին Ամերիկա քանի՞ մասէ կը բաղ-կանայ :

Պ. Միջին Ամերիկա կը բաղկանայ, 1. Ցա-մաքային մասէ, և 2. Արեւմտեան Հնդկաստանի Արշիպե-ղագոսէն :

Հ. Հարաւային Ամերիկայի մէջ քանի՞ տէ-րութիւն կայ :

Պ. Հարաւային Ամերիկայի մէջ տասը տէրու-թիւն կայ. 1. Քոլոմպեան Հանրապետութիւնք, 2. Բերու, 3. Պոլիվիա, 4. Չիլի, 5. Բարակուայ, 6. Ու-րուկուայ, 7. Լա Բլատա, 8. Պրազիլ, 9. Կուայանա, 10. Հարաւային ազատ Ամերիկա :

## ԴԱՍ ԿԲ.

Հ. Ամերիկայի գլխաւոր ծովերն ո՞րնք են :

Պ. Ամերիկայի գլխաւոր ծովերն են, Հիւ-սիսային կողմը՝ Սառուցեալ Ովկիանոս և Պաֆֆինի ծովը :

Արեւելեան կողմը՝ Ատլանտեան Ովկիանոս և Անթիլեան կամ Քարայիպեան ծովը. Արեւմտեան կողմը՝ Խաղաղական Ովկիանոս և Պէհրինկայ ծովը :

Հ. Ամերիկայի գլխաւոր ծոցերն ո՞րնք են :

Պ. Ամերիկայի գլխաւոր ծոցերն են Արեւելեան եզերքը՝ Հուտսոնի, Ս. Լաւրենտիոսի, Չէսափիքի, Մեքսիքոյի ծոցերը և Հոնտուրաս ծոցը. Արեւմտեան եզերքը՝ Գալիֆոռնիոյ ծովածոցը :

Հ. Ամերիկայի գլխաւոր նեղուցներն ո-րո՞նք են :

Պ. Ամերիկայի գլխաւոր նեղուցներն են՝ Պէհրինկա նեղուցն Ասիոյ և Ամերիկայի մէջտեղ. Լէնքէսթրի, Տէվիսի, Գըմպըրլէնտի, Հուտսոնի և Պէլլէյլ նեղուցներն՝ Բրիտանական Ամերիկայի մէջ. Պահամայի ջրանցքը՝ Միացեալ Նահանգաց մէջ. Մակելլանի նեղուցը՝ Բաղտակոնիոյ հարաւային կողմը :

Հ. Ամերիկայի կղզիներն որո՞նք են :

Պ. Ամերիկայի կղզիներն են Պաֆֆինի ծովուն կղզիները, Ս. Լաւրենտիոսի ծոցին կղզիները, Լոնկ Այլընտ, Պէրմուտեան, Լուգայեան, և Մեծ ու Փոքր Անթիլեան կղզիք՝ Ատլանդեան Ովկիանոսի մէջ. Նոր Գէորգիա, Մալուինեան, Մակելլանեան, Աստուածամօր կղզիք, Չիլոէ, Խուան, Ֆէրնանտէզ, Կալապակոս՝ Խաղաղականին մէջ, և Պէհրինկայ ծովուն կղզիները :

Հ. Ամերիկայի թերակղզիներն որո՞նք են :

Պ. Ամերիկայի թերակղզիներն են՝ Լապրատոր և Նոր Սկովտիա, Ֆլորիտա, Տէլէվէր, Գալիֆոռնիա, Եուքաթան և Ալասքա :

Հ. Ամերիկայի գլխաւոր հրուանդաններն որո՞նք են :

Պ. Ամերիկայի գլխաւոր հրուանդաններն են



Ֆէրուէլ՝ Գրէօնլանտի հարաւային կողմը.
Ռաուտէնհոլմ, Չէրլս Լապրատորի եզերքը.
Սէյպլ՝ Նոր Սկովտիոյ եզերքը.
Դանչա՝ Ֆլորիտայի հարաւային կողմը.
Քաթոշ՝ Եուքաթանի եզերքը.
Ս. Ռոքա՝ Պրազիլիոյ եզերքը.
Ֆրօուըրտ՝ Ամերիկայի հարաւային ծայրը.
Հօռն՝ Մակելլանու արքիպեղագոսին հարաւային կողմը.
Պլանքօ՝ Բերուի եզերքը.
Սան Լուքաս՝ Գալիֆոռնիոյ եզերքը, և Արեւմտեան Ֆըլուի՝ Ամերիկայի հիւսիսային արեւմտեան ծայրը :

## ԴԱՍ ԿԳ.

Հ. Ամերիկայի լեռներն և հրաբուխներն ո-րո՞նք են :

Պ. Ամերիկայի լեռներն են՝ Ալլէկանի գօտին՝ Միացեալ Նահանգաց արեւելեան կողմը, Ապալաշեան լերանց գօտին, Քորտիլեան լերանց գօտին որոյ բարձրագոյն լեռը Չիմպորասսօ կը կոչուի, և Պրազիլեան լերինք :

Հրաբուխներն են Ս. Եղիա, հիւսիսային կողմը. Բօբօգաթէբէթլ՝ Մեքսիքոյի մէջ, Քոթոբաքսի և Բիչինչա՝ Քոլոմպիոյ մէջ, Արեքիբա՝ Բերուի մէջ :

Հ. Ամերիկայի գլխաւոր լիճերը կամ ծովակներն որո՞նք են :

Պ. Ամերիկայի գլխաւոր լիճերը կամ ծովակներն են՝ Սլէյվ լիճը և Ուինիփէկ՝ Բրիտանական Ամերիկայի մէջ. Վերին լիճ, Միշիկըն, Հիւրըն, Իրի, Օնթարիօ՝ Միացեալ Նահանգաց մէջ.

Նիքարակուա՝ միջին Ամերիկա.

Մարաքայպօ՝ Քոլումպիոյ մէջ. Տիտիքաքա՝ Բէրուի մէջ. Բաթօս՝ Պրազիլիոյ մէջ:

Հ. Ամերիկայի գլխաւոր գետերն որո՞նք են:

Պ. Ամերիկայի գլխաւոր գետերն են,

1. Մաքէնզի. կը թափի Սառուցեալ ծովը.

2. Նէլսըն. կը թափի Հուտսոնի ծոցը.

3. Սէնթ Լօրէնս կամ Սէնթ Լորէնց. կը թափի Ատլանտեան Ովկիանոսը.

4. Միսիսիփի և Րիօ Նորտէ. կը թափին Մեքսիքոյի ծոցը:

5. Օրինօքօ, Ամազոնոս գետը, Տոքանթին, Սան Ֆրանչիսկօ և Լա Պլատա, կը թափին Ատլանտեան Ովկիանոսը.

Մակտալենա. կը թափի Քարաիպեան ծովը.

Օրէկոն. կը թափի Խաղաղական Ովկիանոսը.

Քոլորատօ. կը թափի Քալիֆօռնիոյ ծոցը:

Հ. Ամերիկայի մէջ ի՞նչ երեւելի պարանոց կայ:

Պ. Ամերիկայի նշանաւոր պարանոցն է Բանամայի պարանոցը որ հիւսիսային Ամերիկա հարաւայնոյն հետ կը կապէ: Այս պարանոցը բանալու պատրաստութիւններն սկսած են: Բանամայի պարանոցը բացուելով Խաղաղական կամ Մեծ Ովկիանոսը պիտի միանայ Ատլանտեանին հետ:



## ԴԱՍ ԿԴ.

### 1. Դանիական հիւսիսային Ամերիկա կամ Կրէօնլանտ

Հ. Կրէօնլանտի բնակիչներն ի՞նչ ցեղէ են:

Պ. Կրէօնլանտի բնակիչներն Էսքիմօ կոչուած վայրենի ցեղէն են: Հոս Դանիացիք քանի մը գաղթականութիւն ունին: Միսիոնարաց ջանքով էսքիմոներուն մեծ մասը Քրիստոնեայ եղած է:

### 2. Բրիտանական հիւսիսային Ամերիկա

Հ. Բրիտանական Ամերիկայի բնակիչն որչափ է, ծաղկեալ մասը և գլխաւոր քաղաքներն որո՞նք են:

Պ. Բրիտանական Ամերիկայի բնակիչը 4 ½ միլիոն է: Այս երկրին հիւսիսային և արեւմտեան մասը վայրենի է, ծաղկեալ մասն է արեւելեան կողմը, և կը պարունակէ Գանատա, Լապրատոր ցամաքակղզին, Նոր Պրունսուիք, Նոր Սկովտիա և Նիւ Ֆաունտլընտ կղզին:

Գլխաւոր քաղաքներն են Քուէպէք (60,000) և Մօնրէալ (110,000)՝ Գանատայի մէջ, Հալիֆաքս (40,000)՝ Նոր Սկովտիոյ մէջ:

## ԴԱՍ ԿԵ.

### 3. Հիւսիսային միացեալ նահանգներ

Հ. Ամերիկայի Միացեալ Նահանգաց վրայ ի՞նչ պատմական գիտելիք կայ :

Պ. Ամերիկայի Միացեալ Նահանգները 1600էն ետքը սկսան ծաղկիլ անգղիական գաղթականութիւններով, և Անգղիոյ իշխանութեան ներքեւ էին, բայց 'ի վերջ կայս անցեալ դարուն ապստամբեցան, և 1773էն մինչեւ 1783 Անգղիոյ դէմ շարունակ պատերազմելէ ետքը, անկախ հանրապետութիւն եղան : Այս երկիրն հիմա կը բաղկանայ 37 նահանգներէ որոց իւրաքանչիւրն ունի իւր առանձին կառավարութիւն, բայց ամէնքը մէկ տէրութիւն կը կազմեն և ընդհանուր կառավարութիւն ունին : Օրէնսդիր իշխանութիւնը Քոնկրէս կոչուած ազգային ժողովին ձեռքն է որ կը բաղկանայ Ծերակուտէն և Նահանգաց կողմէն ղրկուած Պատգամաւորաց կամ Երեսփոխանաց ժողովէն : Գործադիր իշխանութիւնը Նախագահին ձեռքն է որ չորս տարին անգամ մը կը փոխուի : Գերի գործածող հարաւային Նահանգներն գերի չունեցող հիւսիսայիններէն 1861ին ապստամբելով յաղթուեցան, և գերութիւնը ջնջուեցաւ (1865ին) :

Զօրքը խաղաղութեան ժամանակ 45,000 է, նաւատորմիղը կը բաղկանայ 46 նաւէ 426 թընդանօթով, առեւտրական նաւերն են 1861 :



---

## ԴԱՍ ԿԶ.

Հ. Միացեալ Նահանգաց բնակիչն որչափ է, գլխաւոր նահանգներն և անոնց քաղաքներն որո՞նք են :

Պ. Միացեալ Նահանգաց բնակիչը 40,000,000 է, գլխաւոր նահանգներն և անոնց քաղաքներն են

1. Մասսաչուսէթս նահանգ, գլխաւոր քաղաք՝ Պօսթըն (192,000) :

2. Քօննէքթիքըթ նահանգ, գլխաւոր քաղաքներ՝ Նիւ-Հէվն, Հարթֆորտ :

3. Նիւ Եորք նահանգ՝ 4 միլիոն բնակչով, գլխաւոր քաղաք՝ Ալպէնի (63,000), Նիւ Եորք (1,000,000) Հուտսոնի բերանը. Ամերիկայի ամենէն մեծ վաճառաշահ քաղաքն է. Պըֆֆէլօ (95,000) :

4. Փէնսիլվանիա նահանգ՝ 2 1/2 միլիոն բնակչօք, գլխաւոր քաղաք Ֆիլատէլֆիա, Տէլէվար գետին վրայ, (940,000). Ամերիկայի ամենէն աւելի գործարաններ ունեցող քաղաքն է. Հոս է ազգային Դրամատունը (Պանքա) : Այս նահանգին մէջ կ'ելլէ կաղ կոչուած Բէգրոլ իւղը որ կանթեղներու կը գործածուի :

5. Մէրիլէնտ նահանգ, բնակչաց հինգին մէկը

Սեւ է. գլխաւոր քաղաքն է Պուֆֆէլօ (352,000), ունի համալսարան։ Հռոմէականաց Եպիսկոպոսն հոս կը նստի։

6. Ֆլորիտա նահանգ, գլխաւոր քաղաք՝ Թալլահասսի։

Այս նահանգը նեղ ցամաքակղզի է բուսած (Քորալ), որ 200 հազար տարուան մէջ հազիւ գոյացած է, ինչպէս կ՚ըսեն երկրաբանք։

7. Ալապամա նահանգ, գլխաւոր քաղաք՝ Մոնթկոմըրի (36,000)։

8. Լուիզիանա նահանգ, գլխաւոր քաղաք՝ Նիւ Օրլէանս (190,000). աշխարհիս վրայ բամպակի մեծագոյն վաճառանոցն է։

9. Թեքսաս, Ամերիկայի մեծագոյն նահանգն է, բայց բնակիչը քիչ։

10. Րոտ Այլնտ, Ամերիկայի փոքրագոյն նահանգն է, գլխաւոր քաղաք՝ Բրովիտընս։

11. Իլլինոյզ նահանգ, գլխաւոր քաղաքն է Շիքակօ (300,000). 40 տարի առաջ վայրենիներու գեղ էր, հիմա աշխարհիս վրայ ցորենի մեծագոյն վաճառանոցն է։

12. Օհայօ նահանգ, գլխաւոր քաղաք՝ Սինսինատի (200,000). հոս տարին կէս միլիոն խոզ կը մորթուի, ուստի և Փորքոփոլիս կը կոչուի։

13. Միսսուրի նահանգ, գլխաւոր քաղաք՝ Սէն Լուի (300,000), վաճառաշահ քաղաք Միսիսիպիի եզերքը. 1804ին 925 վայրենի բնակիչ միայն ունէր որ առուտուրի մէջ դրամի տեղ կաշուէ կտորուանք կը գործածէին։



14. Գալիֆորնիա նահանգ, Մեծ կամ Խաղաղական Ովկիանոսի եզերքը. ունի ոսկւոյ հանքեր, ուստի 1864ին 84 միլիոն թալերի ոսկի հանուեցաւ։ Շոգենաւք ասկէ ուղղակի Ճափոն և Չին կ՚երթան։ Գլխաւոր քաղաքն է Սան Ֆրանսիսքօ (150,000)։

Հ. Ամերիկայի մէջ ամէն երկիր նահա՞նգ է։

Պ. Կան երկիրներ որ դեռ նահանգ չեն, ինչպէս,

1. Գոլոմպիա, գլխաւոր քաղաք՝ Ուաշինկթըն (150,000), որ և բոլոր երկրին մայրաքաղաքն է. հոս կը գումարուի Գոնկրէս կոչուած ազգային ժողովը, հոս է նաեւ Նախագահին պալատը և նաւարանը։

2. Ալասքա կամ Րուսեան Ամերիքա։ Ռուսիա այս երկիրը վաճառեց Ամերիկայի միացեալ նահանգաց 1867ին։ Ամերիկայի այս մասին կը վերաբերին Ալեւդեան կղզիք 50 հազար բնակչօք։

Հ. Ի՞նչ կը պահանջուի որ երկիր մը նահանգ համարուի Միացեալ Նահանգաց մէջ։

Պ. Երկիր կամ գաւառ մը 900,000 բնակիչ ունենալու է որ նահանգ համարուի։

## Դ Ա Ս Կ Է.

### 4. Մեքսիքոյ

Հ. Մեքսիքոյի վրայ ի՞նչ պատմական գիտելիք կայ ։

Պ. Սպանիացիք ԺԶ. դարուն սկիզբը տիրելով Մեքսիքոյի՝ գաղթականութիւն մը հաստատեցին, որ 1810ին ապստամբելով հանրապետութիւն եղաւ, և այնուհետեւ խռովութիւններ պակաս չեղան ։ Այս խռովութիւններուն վերջ տալու համար Գաղիոյ օգնութեամբ Աւստրիոյ այժմու կայսեր եղբայրը Մաքսիմիլիան 1864ին գնաց հոն իբրեւ սահմանադրական կայսր, բայց հանրապետականաց նախագահին Ժուարէզի ձեռքն իյնալով սպանուեցաւ 1867ին, և Մեքսիքոյ հիմա դարձեալ հանրապետութիւն է ։

Հ. Մեքսիքոյի բնակիչը որչափ է, գլխաւոր քաղաքներն որո՞նք են ։

Պ. Մեքսիքոյի բնակիչը 9,200,000 է, գլխաւոր քաղաքներն են՝ Մէքսիքօ (230,000)· շատ գեղեցիկ քաղաք է, ունի համալսարան. Վէրա Քրուզ (10,000), Փուէպլա (75,000), Քուէրէթարօ (48,000)· հոս սպանուեցաւ Մաքսիմիլիան ։



## Դ Ա Ս Կ Ը.

## Բ. ՄԻՋԻՆ ԱՄԵՐԻԿԱ

### 1. Ցամաքային մաս

Հ. Միջին Ամերիկայի ցամաքային մասին բնակիչն որչափ է, ի՞նչ տէրութիւններ կը պարունակէ, և անոնց գլխաւոր քաղաքներն որո՞նք են ։

Պ. Միջին Ամերիկայի ցամաքային մասին բնակիչն իբր 3 միլիոն է, և կը բաղկանայ հինգ փոքր հանրապետութիւններէ և Անգղիացւոց երկիրներէն ։

Հ. Հինգ հանրապետութիւններն որո՞նք են ։

Պ. Հինգ հանրապետութիւններն են

Ա. Կուատէմալա, գլխաւոր քաղաք՝ Կուատէմալա (40,000) ։

Բ. Սան Սալվատօր, գլխաւոր քաղաք՝ Սան Սալվատօր (20,000) ։

Գ. Հոնտուրաս, գլխաւոր քաղաք՝ Քոմայակուա (8,000) ։

Դ. Նիքարակուա, գլխաւոր քաղաք՝ Լէոն (25,000) ։

Ե. Քօսթա Րիքա, գլխաւոր քաղաք՝ Սան Ժօզէ (25,000) ։

Հ. Անգղիացւոց երկիրներն որո՞նք են ։

Պ. Անգղիացւոց երկիրներն են Մոսքիթօ և Հոնտուրասի գաղթականութիւնը ։

### 2. Արեւմտեան Հնդկաստանի արքիպեղագոսը

Հ. Արեւմտեան Հնդկաստանի արքիպեղագոսն ի՞նչ կղզիներէ կը բաղկանայ ։

Պ. Արեւմտեան Հնդկաստանի արքիպեղագոսն կը բաղկանայ երեք կղզեխումբէ որ են Ա. Պահամա կղզիք, Բ. Մեծ և Գ. Փոքր Անթիլեան կղզիք ։

Հ. Այս խումբերուն մէջ գլխաւոր կղզիք որո՞նք են ։

Պ. Այս խումբերուն մէջ գլխաւոր կղզիք են, Մեծ Անդիլեաններէն՝

1. Քուպա կղզին 1 $^{1}/_{2}$ միլիոն բնակչով, գըլխաւոր քաղաք՝ Հավանա ։ Այս քաղքին մայր եկեղեցւոյն մէջ է Կոլոմպոսի շիրիմը ։

2. Ճամայքա $^{1}/_{2}$ միլիոն բնակչով, Անգղիոյ կը վերաբերի, գլխաւոր քաղաքն է Քինկսթըն (13,000) ։

3. Սեւերու հանրապետութիւնն Հայիթի, 708,000 բնակչօք, գլխաւոր քաղաք՝ Սան Տոմինկօ (10,000) ։

4. Բորթօ Րիքօ 600,000 բնակչօք, գլխաւոր քաղաք՝ Սան Ժուան (18,000) ։

Փոքր Անդիլեանց մէջ անուանի է Մարթինիքա կղզին որ Գաղիացւոց կը վերաբերի ։

---



# ԴԱՍ ԿԹ.

## Գ. ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ

### 1. Քոլումպեան հանրապետութիւնք

Հ. Քոլումպեան հանրապետութիւնք որո՞նք են ։

Պ. Այս հանրապետութիւնք են Ա. Նոր Կրանատա, Բ. Վէնէզուէլա, Գ. Էքուատոր ։

Ա. Նոր Կրանատայի բնակիչն է 2,800,000, գլխաւոր քաղաքներն են՝ Պոկոտա (40,000), ունի համալսարան. Բանամա (9,000) ։

Բ. Վէնէզուէլայի բնակիչն է 1,600,000, գլխաւոր քաղաքն է Քարաքաս (50,000). Մարաքայպօ՝ համանուն լճին քով. ունի համալսարան ։

Գ. Էքուատորի բնակիչն է 1,100,000, գըլխաւոր քաղաքն է Քիթօ (76,000), ունի համալսարան ։

### 2. Բերու

Հ. Բէրու ի՞նչ տէրութիւն է ։

Պ. Բէրու հանրապետութիւն է, բնակիչը 2,700,000, գլխաւոր քաղաքներն են Լիմա (120,000), Արէքիբա (40,000) ։

### 3. Պոլիւիա

Հ. Պոլիւիա ի՞նչ տէրութիւն է ։

Պ. Պոլիւիա հանրապետութիւն է, բնակի-

չը 2 միլիոն, գլխաւոր քաղաքներն են Լա Պազ (76,000), Սուկրէ (23,000)։

## 4. Չիլի

Հ. Չիլի ի՞նչ տէրութիւն է։

Պ. Չիլի հանրապետութիւն է՝, բնակիչը 2,300,000, գլխաւոր քաղաքներն են՝ Սանտիագօ (115,000), ունի համալսարան. Վալպարայիզօ (70,000)։

## 5. Պարակուայ

Հ. Պարակուայ ի՞նչ տէրութիւն է։

Պ. Պարակուայ հանրապետութիւն է, բնակիչը 1,400,000 գլխաւոր քաղաքն է Ասունսիօն (Համբարձում)։

## 6. Ուրուկուայ

Հ. Ուրուկուայ ի՞նչ տէրութիւն է։

Պ. Ուրուկուայ հանրապետութիւն է, բնակիչը 460,000, գլխաւոր քաղաքն է Մոնթէվիդէօ (120,000)։

## 7. Լա Պլադա

Հ. Լա Պլադա ի՞նչ տէրութիւն է։

Պ. Լա Պլադա, Արժանթին հանրապետութիւն ալ կ'ըսուի, բնակիչը 1,900,000, գլխաւոր քաղաքն է Պուէնոս Այրէս (180,000)։

## 8. Պրազիլիա

Հ. Պրազիլիա ի՞նչ տէրութիւն է։

Պ. Պրազիլիա ծերակուտէ և երեսփոխանական ժողովէ բաղկացեալ սահմանադրական



կայսրութիւն է, բնակիչը 11,000,000, գլխաւոր քաղաքներն են՝ Ռիօ դէ Ժանէյրօ (300,000), Պահիա (160,00), Պեռնամպուքօ (90,000)։

Պրազիլիա Հարաւային Ամերիկայի մեծագոյն և բարեկարգ տէրութիւնն է. երկիրը վերջին աստիճան բարեբեր։

## 9. Կույանա

Հ. Կույանայ ի՞նչ երկիր է։

Պ. Կույանայի ներքին կողմերը վայրենի Ամերիկացւոց ձեռքն է, ծովեզերքը միայն կը վերաբերի երեք եւրոպական տէրութեանց, Անգղիոյ, Հոլանտայի և Գաղիոյ։ Բոլոր Կույանայի բնակիչը ½ միլիոն է։

Հ. Կույանայի գլխաւոր քաղաքներն ո՞րոնք են։

Պ. Կույանայի գլխաւոր քաղաքներն են,

Անգղիոյ-մասին մէջ՝ Ճորճթաուն (155,000)։

Հոլանտայի մասին մէջ՝ Պարամարիպօ (16,000)։

Գաղիոյ մասին մէջ՝ Քայէն (3,000)։

Հ. Հարաւային Ամերիկայի տէրութեանց վրայ ի՞նչ գիտելիք կայ։

Պ. Հարաւային Ամերիկայի տէրութիւններուն բոլորն ալ առաջ Սպանիոյ և Փորթուկալի կը վերաբերէին. այս դարուն սկիզբը հետզհետէ ապստամբելով անկախ տէրութիւններ եղան, բնակիչներն են հռոմէական կաթոլիկ, և լուսաւորութեան մասին շատ ետ մնացած են։

### 10. Ազատ հարաւային Ամերիկա

Հ. Ազատ Հարաւային Ամերիկա ի՞նչ երկիրներէ կը բաղկանայ ։

Պ. Ազատ Հարաւային Ամերիկա կը բաղկանայ 1. Բադակոնիայէ և 2. Հրոյ երկրէն ։

1. Բադակոնիա Ամերիկայի ցամաքին հարաւային ծայրը շատ ցուրտ երկիր է. բնակիչներն երկայնահասակ, ձաղկահեր և շատ ադեղ վայրենի մարդիկ են, և Բադակոն կը կոչուին ։

2. Հրոյ երկիրը, Բադակոնիոյ հարաւային կողմը, կղզիներու խումբ է, բնակիչը վայրենի և աղուշ ։ Այս կղզիներուն մօտ են Ֆոլքլանտ կոչուած անբնակ կղզիներն, ուր Անգղիացիք 700 հոգիէ բաղկացեալ գաղթականութիւն մը ունին ։

## ԴԱՍ Հ.

## ՈՎԿԻԱՆԻԱ

Հ. Երկրիս ո՞ր մասը կը կոչուի Ովկիանիա ։

Պ. Ովկիանիա կը կոչուի Խաղաղական ովկիանոսի այն մասն ուր կան մեծ և փոքր կղզիներու խումբեր՝ արեւելեան Ասիոյ և արեւմտեան Ամերիկայի մէջտեղ ։

Հ. Ովկիանիա քանի՞ կը բաժնուի ։

Պ. Ովկիանիա կը բաժնուի երկու, 1. Աւստրալազիա, և 2. Բոլինեզիա ։



Հ. Աւստրալազիա ո՞ր մասն է ։

Պ. Աւստրալազիա արեւմտեան մասն է, Ասիոյ ցամաքին մօտ, և կը պարունակէ 1. Աւստրալիա կամ Նոր Հոլանտա կոչուած ցամաքը, և 2. երեք մեծ կղզիներ որ են, Նոր Կուինեա, Նոր Զէլանտա և Վանտիմէնի կղզին, կամ Դասմանիա ։

Հ. Աւստրալազիոյ բնակիչն ո՞րչափ է, ժողովուրդն ի՞նչ ցեղէ է, և գլխաւոր քաղաքներն որո՞նք են ։

Պ. Աւստրալազիոյ բնակիչն 2 միլիոն է, բնիկ ժողովուրդը վայրենի, բայց Անգղիացիք շատ գաղթականութիւններ ունին երկրիս այս մասին մէջ. մանաւանդ Աւստրալիոյ հարաւային եզերքը, ուր գլխաւոր եւրոպական քաղաքներ են Սիտնէյ (120,000), հոս կը նստի կուսակալը. Մելպուրն (180,000), ունի համալսարան. Ատելէտ (50,000) ։ Վանտիմէնի կղզւոյն գլխաւոր քաղաքն է Հոպարթտաուն (40,000) ։

Հ. Բոլինեզիա Ովկիանիոյ ո՞ր մասն է ։

Պ. Բոլենեզիա Ովկիանիոյ արեւելեան մասն է, Ամերիկայի ցամաքին մօտ ։

Հ. Բոլինեզիոյ կղզիներն կամ կղզիներու խումբերն որո՞նք են ։

Պ. Բոլինեզիոյ կղզիներ և կղզիներու խումբերն են,

1. Նոր Բրիտանիա կոչուած կղզին. 2. Նոր Գալետոնիա. 3. Մարքիզեան կամ Ասդուկոյ կղզիք.

4. Սողոմոնեան կղզիք ․ 5. Կարոլինեան կղզիք ․ 6. Նոր Հեբրիտեան կղզիք, որոց գլխաւորն է, Հոգւոյն սրբոյ կոչուած կղզին ․ 7. Ֆիճի կղզիք ․ 8. Բարեկամութեան կղզիք ․ 9. Նաւահանգաց կամ Սամոա կղզիք ․ 10. Ընկերութեան կղզիք, որոց գլխաւորն է Թահիթի ․ 11. Բոմոտու կամ Տուամոտու կղզիք ․ 12. Մենտանա կամ Մարքեզեան կղզիք ․ 13. Հաւայի կամ Սանտուիչ կղզիք ։

Հ. Բոլոր այս կղզեաց վրայ ինչ մասնաւոր գիտելիք կայ ։

Պ. Այս կղզեաց հիւսիսային մասը կը կոչուի Միկրոնեզիա, վասն զի կղզիները փոքր են ։

Հ. Այս կղզեաց բնակիչներուն վրայ ինչ գիտելիք կայ ։

Պ. Այս կղզիներէն ոմանց բնակիչներն ըստ մասին կամ բոլորովին քրիստոնեայ եղած են։ Քրիստոնեայ բնակիչ ունեցողներուն մէջ երեւելի են Սանտուիչեան կղզիք, որոց գլխաւորն է Հաւայի ։ Սանտուիչցիք որոց թիւն 200 հազարի չի հասնիր՝ հիմա եւրոպական կերպով ծաղկեալ քրիստոնեայ ժողովուրդ են, եկեղեցիներ, դպրոցներ, տպարաններ եւ լրագիր ունին ։ Մայրաքաղաքն է Հոնոլուլու (14,000) ։ Ամերիկացիք ասոնց վրայ մեծ ազդեցութիւն ունին ։

# ՑԱՆԿ

## ՔԱՂԱՔԱԿԱՆ

### ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ

Երես


ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ . . . . . . . . . . . . . 3
ԵՒՐՈՊԱ . . . . . . . . . . . . . . 17
Ա. Հարաւային Եւրոպա . . . . . . . . .
1. Եւրոպական Թուրքիա . . . . . . . . 28
1. Ռումէլի . . . . . . . . . . . . . . 31
2. Մակեդոնիա . . . . . . . . . . . . . 32
3. Թեսալիա . . . . . . . . . . . . . . 33
4. Ալպանիա . . . . . . . . . . . . . . 33
5. Կղզիք . . . . . . . . . . . . . . . 33
6. Ինքնօրէն գաւառներ . . . . . . . . 34
2. Դանուբեան իշխանութիւնք . . . . . . 37
1. Սերպիա . . . . . . . . . . . . . . 37
2. Ռումանիա . . . . . . . . . . . . . 38
3. Մոնթենեկրօ . . . . . . . . . . . . 39
3. Յունաստան . . . . . . . . . . . . . 40
4. Իտալիա . . . . . . . . . . . . . . 42
5. Սպանիա . . . . . . . . . . . . . . 47
6. Լուսիտանիա կամ Փորթուգալ . . . . . 50
Բ. Միջին Եւրոպա . . . . . . . . . . .
1. Գաղիա կամ Ֆրանսա . . . . . . . . . 52
2. Հելուետիա կամ Զուիցերա . . . . . . 58
3. Հոլանտա . . . . . . . . . . . . . . 60
4. Բելգիա . . . . . . . . . . . . . . 63
5. Գերմանիա . . . . . . . . . . . . . 64
1. Բրուսիա . . . . . . . . . . . . . . 66

Երես

2. Բաւարիա 68
3. Սաքսոնիա 69
4. Վիւրթեմբերգ 70
5. Բադէն 70
6. Հէս 71
7. Ալզաս եւ Լօրէն 72
6. Աւստրոյ-Ունգարական կայսրութիւն 73
Գ. Հիւսիսային Եւրոպա
1. Սկանտինաւեան ցամաքակղզի 80
2. Դանիա կամ Տանիմարքա 82
3. Մեծն Բրիտանիա 83
Դ. Արեւելեան Եւրոպա
Ռուսիա
ԱՍԻԱ 91
Ա. Հարաւային Ասիա
1. Ասիական Թուրքիա 95
2. Արաբիա 99
3. Իրան 99
Հնդկաստան
1. Հնդկաստան յայսկոյս Գանգէսի 100
Ա. Անգղիական մաս 101
Բ. Հարկատու մաս 101
Գ. Ազատ մաս 101
2. Հնդկաստան յայնկոյս Գանգէսի 102
Ա. Պիրմա 102
Բ. Սիամ 103
Գ. Անամ 103
5. Հնդկաց Արքիպեղագոսն կամ Մալեզիա 103
Բ. Միջին Ասիա
1. Թուրքեստան կամ Թաթարիստան 104
2. Կովկասիա 105



Երես

Գ. Հիւսիսային Ասիա կամ
Սիպերիա 105
Դ. Արեւելեան Ասիա
1. Չին 106
2. Ճապոն 107
ԱՓՐԻԿԷ 108
Ա. Հիւսիսային Աֆրիկէ
1. Եգիպտոս 111
2. Նուբիա 112
3. Հապէշ կամ Եթովպիա 112
4. Գերպերիստան 112
Ա. Թրիփոլի 113
Բ. Թունուզ 113
Գ. Ալճերի 113
Դ. Մարոքքօ 114
5. Սահարա 114
6. Սենեկամպիա 114
7. Սուտան 115
Բ. Հարաւային Աֆրիկէ
1. Արեւելեան ծովեզր 115
2. Քաբ, կամ, Բարեյուսոյ երկիր 117
3. Արեւմտեան ծովեզր 118
4. Կղզիք 119
ԱՄԵՐԻԿԱ 120
Ա. Հիւսիսային Ամերիկա
1. Դանիական հիւսիսային Ամերիկա կամ Կրէօնլանտ 125
2. Բրիտանական հիւսիսային Ամերիկա 125
3. Հիւսիսային Միացեալ նահանգներ 126
4. Մեքսիքոյ 130
Բ. Միջին Ամերիկա
1. Ցամաքային մաս 131

Երես
2. Արեւմտ. Հնդկաստանի Արքիպելագոս . 132
Գ. *Հարաւային Ամերիկա* . . . . . . .
1. Քոլումպեան հանրապետութիւնք . . . 133
2. Բերու . . . . . . . . . . . . . . 133
3. Պոլիւիա . . . . . . . . . . . . . 133
4. Չիլի . . . . . . . . . . . . . . . 134
5. Բարակուայ . . . . . . . . . . . . 134
6. Ուրուկուայ . . . . . . . . . . . . 134
7. Լա Բլադա . . . . . . . . . . . . 134
8. Պրազիլիա . . . . . . . . . . . . 134
9. Կույանա . . . . . . . . . . . . . 135
10. Ազատ հարաւային Ամերիկա . . . . 136
ՈՎԿԻԱՆԻԱ . . . . . . . . . . . . 136

6985
0003125
2013
ՀՀ Ազգային գրադարան
NL0003125